
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄ



ՄԱՅԻՍ 5, ՈՒՐԲԱԹ

«Զերիցուն այսուհետեւ աղաչեմ, իբրեւ
զերիցակից եւ վկայ չարչարանացն Քրիստոսի,
որ եւ հաւնդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ.
Արածեցէք, որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ,
վերակացու լինել մի՛ իբրեւ ակամայ.
Զի յերեւել Հովուապետին ընդունիջիք զանթառամ փառաց պսակն»:
(Ա ՊԵՏ. Ե 1—2, 4)

Հոգեգալստյան խորախորհուրդ դեպքից հետո, Տիրոջ սրբազան առաքյալները Աստուծո Հոգու շնորհաբաշխ ներգործությամբ կյանքի ճշմարտության հունդերը ցանեցին ամբողջ մարդկության մեջ, հաստատելով Տիրոջ վեմահիմն Եկեղեցին՝ Կենդանի Աստուծո կենդանի և կենդանացնող Ավազանը: Երկնավոր Վարդապետի պատգամները անվնաս կերպով ճառագեցին՝ լուսավորելով խավարի մեջ հեծեծող մարդու շավիղները, որի շողարձակման ներքո իսկ հստակորեն ընդգծվեց **մարդու պատկերը,** որ **«արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ...եւ եղեւ մարդն հոգի կենդանի»** (Ծննդոց Ա 27, Բ 7), ընդգծվեց և մարդու կոչումը, որ **«Ինչպիսի շնորհ ընդունել է, ուրիշի հանդեպ թող նույնը մատակարարի որպես բարի տնտես Աստուծո պեսպես շնորհների»** (Ա ՊԵՏ. Դ 10—11):

Աստվածորդու հիմնադրած Հոգեկնիք Տիեզերական, Առաքելական և Սուրբ Եկեղեցին կենաց ծովի մեջ դարձավ «Նորոգեալ կղզի», որում հանգրվանելով, Աստվածտեսությունից և Աստվածճանոթությունից զրկված ադամորդին կրկին հնարավորություն ստանալ այն կյանքը, որ Տերը խոստացավ

Իր սիրելիներին ասելով. **«Ես եկի, զի զկեանս ունիցին եւ առատ եւս ունիցին»** (ՀՈՎՀ. Ժ 10):

Կենաց Խոսքը և Բժշկության Աղբյուրը փխրեցնելով և ճեղքելով հեթանոսական ժայռը, աղբյուրացրեց նաև Արարատի հովանու ներքո բնակված Հայկի սերունդների սրտի կարծրացած հողը, վերափոխելով մի պարարտ երկրի՝ Հայաստանյայց Եկեղեցու Մայրությամբ և Սուրբ Ավետարանի Հայրությամբ, որտեղ փառավորապես բազմեց Ամենասուրբ Երրորդությունը, որի **«ուղղափառ հավատի լույսը երբեք չնվազեց, ցորենի բարի սերմերին որոմ չխառնվեց, ավանդությունների հատակ աղբյուրը օտարոտի ոսմանց աղտաղտուկ ջրից չպղտորվեց, ստուգության և ճշմարտության կենդանի հացի մեջ մեռելական խմոր և քացախի չարության հերձված չխառնվեց, անբիծ հավատի ոսկու և լուսատեսիլ խոսքի արծաթի մեջ ժանգահոտ պղինձ և անաթույր կապար չգտնվեց» (Հովհաննես Երզնկացի):**

Հայաստանյայց Եկեղեցին Աստվածաէջ կենտրոնով երբեք չեղավ ու չմնաց սոսկ որպես քարաշեն հուշարձան, այլ հոգեկան և հոգեշեն տաճար, «սանդուղք երկրից երկինք վերելութեան»՝ քարը կրելով որպես զգեստ և վահան իր հավատքի ամրացման և լեռնացման: Իբրև Մայր՝ Սուրբ Հոգու շնորհաց կաթի ստնտուն, իբրև Հարս՝ հոգեղեն և գյութեղեն Խորան Առագաստից Երկնավոր Փեսայի մարմնի և արյան հաղորդությամբ Աստվածային ընտանիքին հավիտենական անդամակցության ուղին և անոթը եղավ իրեն գինվորագրված մանկանց համար՝ «սիւն և հաստատութիւն ճշմարտութեան» (Ա ՏԻՄ. Գ 15):

Լուսավորչի արցունքակալ տեսիլքով կերպավորված Աստվածակառույց Մայր տաճարով ու Աթոռով, Սահակ-Մաշտոցյան երկունքով և Վարդան-Ղևոնդյան նահատակության վարդագույն արյամբ հաստատված Սրբազան Եկեղեցին վերածվեց մի նոր Պրոբատիկեի ավազանի, որի հոգեհույզ ջրերի փոթորկումից ծնվեցին Հայոց Ոսկեդարն ու Արծաթեդարը և դեռ պիտի ծնվի... Պիտի ծնվի Տիրոջ հարության ավետիսով, ծիծաղելու մահվան և հուսահատության դեմքին ըստ աստվածային Պողոսի ասելով. **«Ո՞ւր է, մահ, քո խայթոցը, ո՞ւր է, գերեզման, քո հաղթանակը»** (Ա ԿՈՐՆԹ. ԺԵ 55):

Այս մտածումներով էր, որ 1995 թվականի մայիսի 5-ին, Հայոց նորընտիր 131-րդ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա. Հայրապետը մուտք գործեց Մայր տաճար՝ Իջման Սուրբ Սեղանի աղոթալից ու խնկավորյալ քարերի արձագանքով զրահավորվելու, Ծիրակի թեմի իր ապեւոյալ զավակներին հովվապետական անդրանիկ այցելության և հանդիպման գնալիս, որպես Հոտապետ **ճանաչելու և ճանաչվելու**՝ ինչպես նաև ասելու իր կարիքավոր ուսուրերին և դուստրերին, որ՝

«Սուրբ Էջմիածինը սոսկ աշխարհագրական վայր չէ, այլ հոգու մեջ ապրող ուժ ու հավատք».

«Սիրելի միաբան եղբայրներ և սիրելի սաներ,

Կխնդրեմ, որ Ձեր աղոթքներու մեջ առաջիկա երեք օրերու ընթացքին հիշեք զիս և ինձի ընկերակցող հոգևորական և աշխարհական ներկայացուցիչները Մայր Աթոռի: Ասիկա բնականորեն առաջին հայրապետական այցելությունն է Հայաստանի մեջ Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցուն տված այցելութենեն ետքը: Կուզեմ, որ բոլորդ ալ գիտնաք, որ ես հատկապես «ցանկանալով ցանկացա», ինչպես կըսե սուրբգրական արտահայտությու-

ևը, որ իմ այս առաջին այցելությունը ըլլա այն ժողովրդին, որ ամենից շատ տառապող ժողովուրդը եղավ այս վերջին տարիներին:

Գյումրիի աղետեն ետքը վերականգնումի շրջան մը կրոլորե Շիրակա թեմի մեր ժողովուրդը: Ուզեցի իրենց հետ ըլլալ, որ իրենք զգան, թե Մայր Աթոռը իրենց հետ է. Սուրբ Էջմիածինը աշխարհագրական վայր չէ միայն, այլ հոն ուր այս Աթոռին Գահակալը կերթա, ամբողջ միաբանությունը գացած կըլլա և մեր աղոթքները գացած կըլլան ու ժողովուրդը, մանավանդ, կզգա, որ Էջմիածինը իր կյանքի մեջ ներկա է: Դուք ալ այստեղ Տունը շեն պահեք, կարգավոր մնացեք, Տունին պատիվը մեր բոլորիս պատիվն է և Աստված ձեզի ուժ տա, ձեր հոգեկան ապրումները առավել ևս ընդունելի ընե և ձեր իմացական կրթական կյանքը ծաղկեցնե:

Մեր սիրելի ժառանգավոր սաներ և սարկավագներ, միաբան եղբայրներ, և պաշտոնեություն, դուք ալ ձեր պարտականությունները գերազույն աստիճանի գիտակցությամբ և բծախնդրությամբ կատարեցեք Աստուծո փառքին և Մայր Աթոռին շենության և պայծառության համար: Ամեն»:

Մայր տաճարում աղոթքից և հայրական պատգամից հետո, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ կրոնից գործոց նախագահի պաշտոնակատար Լազար Սուջյանի, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Սաղիկ եպիսկոպոս Արիստակեսյանի, Մայր Աթոռի միաբաններ Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանի, Գրիգոր վարդապետ Չիֆթչյանի և Վազգեն սարկավագ Գալստյանի, ուղևորվեց Շիրակի թեմի իր կարոտյալ և կարիքավոր ժողովուրդին մխիթարելու, սփոփելու, ինչպես և ուժավորելու ու հուսադրելու նրան Հայոց ապագայի Աստվածադրոշմ պայծառ տեսիլքով:

Շիրակի թեմի սահմանագիծ **Թալինի** շրջանի **Ներքին Բազմաբերդ** գյուղի մուտ հավատացյալների խումբերում բազմությունը, գլխավորությամբ թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի, փոխառաջնորդ Սեպուհ վարդապետ Չուլջյանի և Շիրակի տարածաշրջանի հաճախագապետ Անդրանիկ Քոչարյանի, խանդավառությամբ և անհուն բերկրանքով դիմավորեց Վեհափառ Հորը՝ հայկական ավանդական աղ ու հացով և գառան մատաղով, որ Բարձրյալեն Աստված Հայրապետի միջոցով Իր օրհնությունն ու շնորհները հեղի Հյուսիսային Հայաստանի հոգևավաստակ հողի ու ժողովրդի վրա:

Այնուհետև Գյումրիի ընծայարանի սանները «Հրաշափառ» և «Ուրախ լեր Սուրբ եկեղեցի» շարական-աղոթքներով Վեհափառին առաջնորդեցին դեպի գյուղի դեռևս կիսակառույց Սուրբ Աստվածածին եկեղեցի, ուր մուտքի մուտ «Ի մէջ տաճարիս» աղոթքից հետո Հայրապետական անդրանիկ պատգամը տվեց Ներքին բազմաբերդցիներին և նրանց միջոցով ամբողջ թեմի հավատացյալներին.

«Սիրելի Առաջնորդ սրբազան, սիրելի հոգևորական եղբայրներ, հարգարժան ներկայացուցիչներ այս շրջանի պետական իշխանությանց և թանկագին հավատացյալներ՝ հայ ժողովրդի զավակներ,

Դուք չեք կարող պատկերացնել, թե հոգեկան ինչ խոր ուրախությամբ է լցվում իմ հոգին, երբ այսպես դիտում եմ բոլորդ բաց երկնքի ներքև, բնության ծոցում և ձեզանից ոչ մեկին առանձնանձնաբեն անհատապես ճա-

ճաչելու, չգիտեմ ինչու այնպես եմ զգում, որ կարծեք մենք արդեն ձեզ ճանաչել ենք երկար ժամանակից ի վեր:

Ձեր դեմքերի միջից ես տեսնում եմ մի դեմք՝ հասարակաց, բոլորիս պատկանող մի դեմք՝ Աստուծո կնիքով կնքված հայու պայծառ դեմքը: Որտեղ էլ լինենք, Հայրենիքում, թե Սիյուռքում, բոլոր հայերի միջից ես հայությունն եմ տեսնում, հայությունն եմ զգում, հայությունն եմ կաթդում:

Ողջունում եմ ձեզ բոլորիդ որպես իմ հարազատ եղբայրներն ու քույրերը, իբրև մեր Եկեղեցու հարազատ, հավատարիմ հավատացյալները: Սրբազան Հայրը ասեց իր խոսքում, որ դուք եկեղեցի եք կառուցում և եկեղեցին տակավին անավարտ է: Ես առաջին անգամ իմ կյանքում աղոթք արեցի Էստեղ և այդ աղոթքում, երբ ասեցի «ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղւոյս», ես զգացի, որ ի մեջ տաճարի չէի, քարեղեն շինված շենքի մեջ չէի, այլ ասեցի «ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ սուրբ նշանացս», որովհետև Աստծու տաճարի մեջն ենք բոլորս. բնությունը ինքը, երկինքն ու երկիրը, այս հողը ամբողջ Աստծու տաճարն է: Այնտեղ, ուր Աստծու ներկայությունը զգում եք, եկեղեցին ձեր հոգու մեջ կապրե, Աստված ձեր միջից կներգործե: Հետևաբար, ես այն ուրախ օրվան եմ սպասում, երբ տեսնելու եմ այս եկեղեցին ձեր հավատքի զորությամբ, ձեր ձեռքերի աշխատանքով, ձեր զոհողության կամքով իր ավարտին հասած և, եթե Աստված ինձ տա մի երկրորդ առիթ այստեղ գալու, այն ատեն եկեղեցուց ներս կմտնենք միասին և կասենք դարձյալ և միասին «ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս»:

Ես փառք եմ տալիս Աստծուն, որ ինձ շնորհեց այս առիթը, որ լինեմ Շիրակա թեմի ժողովրդին հետ, առաջին այս րոպեից լինեմ Բազմաբերդ գյուղի և շրջակա գյուղերի հայության հետ: Ինձ համար չկա տարբերություն ո՛չ քաղաքացու և ո՛չ գյուղացու՝ բոլորս էլ մեկ ենք, մի արյուն ունենք, մի անուն ունենք՝ հայի պայծառ անուն, պատմությամբ կնքված, ներկայով վերստին անկախացած անուն, ապագայում հուսալից հեռանկարներով այս անունը ծաղկեցնելու պատրաստակամությամբ ապրող հայություն:

Ես էլ գյուղացի եմ եղել, ես էլ իմ մանկությունը, պատանությունը անցկացրել եմ գյուղի մեջ, ձեռքերս խառնել եմ հողին և հողից դուրս եմ բերել կյանք: Եվ դուք պատվով հայեր եք, որովհետև ձեր քրտինքով եք շահում ձեր հացը՝ հպարտ լինի ձեզ բոլորիդ այդ հացը: Տարբեր է քո աշխատանքով վայելել ապրուստդ և տարբեր է ուրիշից ստանալ քո ապրուստը: Դուք ձեր ձեռքերով եք շահում ձեր կյանքը, Աստված զորացնի ձեր բոլորի ձեռքերը, Աստված ձեզ կապի առավել ներողությամբ այս նվիրական հողին:

Մեքենայով գալիս, հարց էի տալիս ինձ. երբ մեր հայրերը այս հողի վրա քայլում էին, մեքենա չկար, քայլում էին ոտքով՝ հողի ուժն էին զգում իրենց մեջ՝ հողը և հայը իրարից անբաժան են եղել և օտար թշնամիներն են միայն մեզ իրարից զատել՝ հողը հայից, հայը հողից: Հայը իր հողից չի կարելի բաժանել կամավորապես, թշնամին բռնադատությամբ մեզ մեր հողերից պոկեց երբեմն, դուրս տարավ. այսօր մենք փառք ենք տալու Աստծուն, որ մեզ մեր հողին է վերստին կապել և այնպես մենք մեր կամքով ենք այս հողը պաշտպանում, այս հողը մշակում և այս հողից կյանք ենք հանում:

Շնորհավորում եմ ձեզ, որ այդպիսի առաքինի, հայրավայել զգացումներով կապված եք Հայաստանի մեր հողին և դուք այս երկրի մեր անկախացյալ ազատ պետության հավատարիմ, պարկեշտ, չարքաշ քաղաքացիներն եք:



Ներիին Բազմաբերդը դիմավորում է Վեհափառ Հայրապետին

Պատիվ ձեզ և ձեզնով պատիվ ձեր ազգին և նաև փառք Աստծուն և մեր Սուրբ Եկեղեցուն:

Տակավին կես ժամ առաջ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում ծնրադրեցի Իջման Սեղանին, համբուրեցի այդ Սեղանը, որպեզի իմ խոսքերի միջից դուք զգաք Լուսավորչի շունչը, Քրիստոսի ներկայությունը: Զգաք, որ Էջմիածինը քար չէ, աշխարհագրական վայր չէ, այլ Մայր Աթոռը հոգու մեջ ապրող ուժ է, հավատքի խորհրդանիշ է, մարմնացումն է Լուսավորչյան մեր անխախտ և անխախտելի հավատքին: Այդ քարերի միջից մենք նյութ չենք տեսնում, մենք Աստծու Հոգին ենք կարդում, և այսօր ես իրեն ընտրված Հայրապետ Ամենայն Հայոց, 131-րդը Հայրապետների այն շարքից, որոնք այդ Գահի վրա նստել են, բայց նստելով տառապել են, աղոթել են, ճգնել են, ձեզ բոլորիդ համար՝ այդ Սուրբ Գահից բերել եմ ողջույն սիրո, եղբայրության, խաղաղության և աշխատանքի:

Կոչ եմ անում ձեզ բոլորիդ, որ դուք Մայր Աթոռին կապված մնաք անբակտելիորեն: Սիրելիներ, այս հավատքը, որի թարգմանն է մեր Եկեղեցին՝ Առաքելական Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին, այս հավատքը դարերի փորձով, նահատակության գնով, մարտիրոսության արյունով ճվիռակատված հավատք է: Աժան հավատք չէ, դյուրին հավատք չէ, մեր հայրերի կտակովն է մեզ փոխանցվել, մենք պարտավոր ենք այդ Սուրբ կտակը մեր շալակի վրա բարձր պահել և ոչ թե գետին դնել:

Դուք որպես այս շրջանի բնակիչներ ձեր կյանքում, ձեր տներում, ձեր ընտանեկան բնակարաններում, ձեր դպրոցական հարկերում, ձեր մշակութային դաշտերի մեջ Հայոց շարականը, աղոթքը միշտ վառ, կենդանի պահեցեք: «Առաւօտ լուսոյ»-ն երգեցեք, ձեր շրթերի վրա «Փառք ի բարձունս»-ը թող ծաղկի. մի խոսքով՝ Եկեղեցին դուք եք, ձեր կյանքումն է Եկեղեցին ներկա, իսկ քարեղեն շինությունը առիթն է, հիշեցումն է հոգու մեջ առկա և հավետ անմահ Եկեղեցու: Իմ խոսքը փակում եմ այն աբանչելի, անզուգական բառերով, որ մեր ոսկեղենիկ գրիչը՝ Եղիշե պատմիչն է ասել վարդանանց նահատամարտը նկարագրելիս. «Վարդանի բանակի ամեն մեկ գինվորը ինքն իր մեջ մի եկեղեցի էր»: Եկեղեցին հոգու մեջն էր ապրում, հավատքը նրանց կյանքի մեջ էր ներգործում, հավատքով էին գնացել Հայրենիքի պաշտպանության, Սուրբ Եկեղեցու և հավատի պաշտպանության:

Արևմտյան Հայաստանի նահանգների մեջ որքա՜ն եկեղեցիներ հիմա ավերակ են: Դուք էլ այստեղ ունեցաք եկեղեցիներ գրեթե ավերակ վիճակի մեջ, կամ անգործ վիճակի մեջ, կամ ուրիշ նպատակների հատկացված, բայց անցավ այդ շրջանը, եկավ ազատության շրջանը՝ հիմա եկեղեցին ազատ է այլևս և վա՜յ մեզի, եթե այդ ազատությունը մենք չհարգենք, չարժեցնենք. այն ատեն ուրիշը մեղադրելու իրավունք չենք ունենա, մենք կլինենք հանցավորը:

Հիմա Հայաստանը անկախ է, մենք դարեր շարունակ այս անկախությունն էինք երազում, երգում: Ահավասիկ եկավ այդ ազատության արևը, հիմա անկախ է մեր Հայրենիքը, մեր ձեռքերում է մեր Հայրենիքը, ուրիշը չի ասել մեզ և չի ասելու, թե մենք ինչ պիտի անենք՝ մե՛նք է, որ պիտի որոշենք, թե ինչ պիտի անենք, բայց խելացի շարժվենք, միասնական լինենք, մեր ստեղծած Պետությունը մենք «դայիմ» պահենք, ամուր պահենք, անսասան պահենք և վեր մնանք ամեն տեսակի նեղ, ճղճիմ, փոքրոգի հաշիվներից. Հայրենիքի, ընդհանուրի շահը նկատի ունենանք բոլոր գրադումների, մտածումների և գործերի մեջ: Ահավասիկ իմ առաջին պատգամը:

Ես ցանկանում եմ և ի խորոց սրտի աղոթում եմ, որ Աստված Իր շնորհի ներգործությամբ այս օրը մեզի համար վերածի խմոր օրի, խմորվեն մեր գալիք օրերը այսօրվան խորհուրդով: Մեր այս հանդիպումը թող լինի ինձ համար, ձեզ համար վերանորոգիչ ուժ՝ վաղվան կյանքը մի քիչ տարբեր լինի երեկվան կյանքից: Շնորհակալ եմ, որ եկել եք բոլորդ այսքան խուռն բազմությամբ, բայց եթե ուզում եք ինձ հարգել, ոչ իմ անձը, այլ այն պաշտոնը, որ Աստծու օրհնությամբ ինձ տրվեց, փոխվե՛ք, եղբայրներ և քույրեր: Բարեփոխվե՛ք, ձեր վաղվան կյանքը ավելի պայծառ լինի և ազգային-եկեղեցական ձեր ճիվիրաբերումը լինի ստեղծագործական: Շինարար և միասնական եղբայրության ոգիով մենք աշխարհին ասենք, աշխարհի միջից Աստծուն ասենք. Աստված, անհավասիկ Դու մեզ հայ ստեղծեցիր, մենք հավատարիմ ենք մնում Քո ստեղծած հայու կերպարին, որ դարերից եկած ճիվիրական սուրբ կտակ է և մենք պահում ենք այդ կտակը:

Թող Աստված օրհնի ձեզ բոլորիդ և մանավանդ այս դպրոցական երեխաներին, այս երիտասարդներին, այս գալիք սերունդին և դուք, հայրեր, մխիթարվեցեք, երիտասարդներ, խանդավառվեցեք ու, չափահասներ, դուք էլ եղեք կամուրջ հին սերունդի և նոր սերունդի միջև Աստծու փառքին, մեր Հայրենիքի շինության և մեր Եկեղեցու պայծառության համար: Ամեն»:

Ներքին Բազմաբերդից մեքենաների շարասյունը շարժվեց Շիրակի դաշտավայրի խորքը, որի առաջին հանգրվանը պիտի լիներ Թալին ավանը: Սասունի լեռնաշխարհից դարասկզբին այս փոքրիկ հողակտորին հաստատված ժողովուրդը ժամանակ առ ժամանակ մաքառել և ծառացել է բռնադատման և ինքնության ոտնահարման դեմ: Դեպի այս հերոսական ժողովուրդն էր գնում Հայոց Հայրապետը ասելու նրանց, որ անցյալի սրխրանքները արժևորվում և նոր իմաստ են ստանում միայն ներկայի աշխատանքով և տքնանքով՝ հայացքը Աստծուն և Հայրենիքին, ընդհանուրի շահերը դասելով մասնավոր հարցերից:

Թալին ավանի ժողովուրդը Դավթաշեն գյուղի մոտից դուրս էր եկել դիմավորելու իր Հովվապետին, առաջնորդելով և ուղեկցելով նրան ավանի կենտրոնում գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցի, որտեղ և Վեհափառ Հայրապետը օրհնեց և քաջալերեց թալինցիներին, պատգամելով մաքուր, անաղարտ և կենդանի պահել Լուսավորչի անխախտելի հավատքը՝ առարկայացած Սուրբ Էջմիածնի Մայրավանքով, հայրենի հարազատ ավանդություններն ու այդ ավանդությունների ծննդյան օրրան հայրենի հողը:

«Հավատացյալ և հավատարիմ ժողովուրդ Աստուծո և քաջահոգի զավակունք հայ ազգի,

Փառք և գոհություն եմ վեր առաքում դեպի Աստված, որ ինձի տվեց այս բացառիկ հոգևոր ուրախության և ոգևորության պահը: Ես շատ էի լսել Թալինի մասին՝ ամբողջ շրջանի մասին, բայց ուրիշ բան է լսելը, ուրիշ բան է տեսնելը: Հիմա իմ մտքի մեջ դուք պատկերացվում եք որպես ապրող, շնչող, գործող հայության մեկ ամենեն առողջ մասնիկը: Ես իմ հոգու մեջ, իմ աղոթքների մեջ ձեզ միշտ ներկա պիտի ունենամ և, երբ հիշեմ Շիրակա թեմի այս Թալինյան շրջանը, աղոթքներիս մեջ դուք բոլորդ պիտի ունենաք հատուկ տեղ և մասնավոր համակրանք:

Սիրելինե՛ր, ես իմացել եմ, որ ձեզնից ոմանք, ձեր հայրերից և մայրերից շատերը, մեր Հայրենի հողի այս պատառի վրա են եկել Հայրենի

հողի ուրիշ մեկ պատառից՝ Արևմտյան Հայաստանից, որտեղից ձեր հայրերը հազիվ մազապուրծ եկել են այստեղ մեր թշնամու յաթաղանից ազատված, բայց միշտ նայել են կյանքին, նայել են ապագային և ոչ թե միայն մահվան և գերեզմանի վերին շաստակին: Դուք մի ժողովրդի զավակներ եք, որ կարողացել է իր հայրենասիրությունը հայրենապաշտությամբ արտահայտել: Ես կարդացել եմ այն ազատագրական շրջանի հերոսական պայքարի, ոգորումի մասին, ոգորում, որ մղել են ձեր հայրերը ի պաշտպանություն Հայրենիքի և ի կենդանություն հայ ժողովրդյան: Ես աչքերովս տեսել եմ ձեր հայրերի հերոսներից Մուշեղին, ապրել եմ երեք տարի քեռի Ղազարի հետ վանքում, լսել եմ նրանից ձեր հայրերի մասին, այն քաջամարտիկ հոգով գինված ժողովրդի, որ երբեք չի խոնարհել իր գլուխը թշնամու յաթաղանին, բարձրացրել է իր գլուխը՝ հայի ճակատը և ասել ամբողջ աշխարհին. մենք կամ կմեռնենք հերոսաբար և կամ կապրենք հավերժաբար:

Այդ հոգին պահեցեք կենդանի, առողջ: Այդ անցյալի շրջանն էր և երբեք չի մոռացվի ձեր հիշողության մեջ: Բայց, այսօր մենք ապրում ենք մի նոր դարաշրջան՝ ձեր բոլոր հերոսները, մեր հայության ողջ հերոսների շարքը իրենց կյանքն են տվել ձեր կյանքը չտալու համար՝ դուք նրանց եք պարտական: Եվ այսօր նրանք իրենց գերեզմանների միջից, և նրանք իրենց երկնքի բնակարաններից դիտում են ձեզ, տեսնում են, որ Հայրենիքը ազատագրվել է այս մասում՝ Հայրենիքը դարձել է ազատ-անկախ Հայաստան: Սա մեր բոլոր հերոսների արյան գինն է, որ վճարվում է մեր ժողովրդի տոկունության, հավատարմության և հարատևության առաքինություններով:

Բանաստեղծն ասել է.

Արարատի ծեր գագաթին դար է եկել վայրկյանի պես ու անցել,
Անհուն թվով կայծակների սուրն է բեկվել ադամանդին ու անցել,
Հերթը հիմի քոնն է...

ձե՛րն է անհա, դուք նայեցեք Արարատին, բայց մի անցեք, նայեցեք Արարատին և հողին կապվեցեք: Այս հողն է Աստուծո տուրքը մեզ:

Եղբայրներ և քույրեր, 1915-ի ցեղասպանության տարիներին ավելի քան մեկ և կես միլիոն հայեր կորցրինք, նրանք զոհ գնացին մեր թշնամու սրին, յաթաղանին, Տեր-Զորի արևներին և ավազներին: Ես Հունվար ամսի 8-ին գնացի մի անգամ ևս Տեր-Զոր՝ սրանից ճիշտ հինգ ամիսներ առաջ: Գնացի և նրանց ոսկորների առաջ, մասունքների առաջ խոնարհվեցի և այնտեղից փառք տվի Աստծուն, որ այնտեղ իրենք մեռան, այստեղ հայություն ապրեցավ, դո՛ւք ապրեցիք և անհավասիկ մեր ազատ, անկախ պետականությունը վերստեղծեցիք: 1918 թվականին մեր հերոսների գոյամարտը պսակվեց անկախությամբ, բայց շրջանի դեպքերն այնպես դասավորվեցին, որ հազիվ երկու տարվան կյանք ունեցավ մեր անկախ պետականությունը: 70 տարիներ եկան, բայց վերստին անկախության իղձը ծաղկեց, մարմին զգեցավ մեր երազը: Այսօր մենք ունենք անհավասիկ այն, ինչ որ մեր հայրերը երազում էին և ձգտում էին ունենալ՝ իրենք չտեսան, մեզ կտակ թողեցին, մենք բախտավոր սերունդի զավակներ պետք է հաշվենք մենք զմեզ: Դո՛ւք, մանավանդ, երիտասարդներ, ձեզ եմ խոսք ուղղում այս պահին. ձեր հայրերն արեցին, ինչ որ կարող էին անել, Աստված ձեզ է նայում, պատմությունը այժմ ձեզ է նայում, դո՛ւք ի՞նչ պիտի անեք, որպեսզի այս Հայրենիքը տոկուն մնա, առողջ մնա և բարգավաճի: Ես տեսնում եմ, շատ մո-

տից հետևել եմ ձեր կյանքին. բնականորեն մենք ունեցել ենք և ունենք դժվարին պայմաններ կյանքի՝ տնտեսական նեղություններ, բա ո՞ր ազգը չի ունենա, երբ կգա անկախության:

Մենք մեր քրտինքով պիտի շահենք մեր Հայրենիքի բարգավաճումը: Մեր հայրերը, ձեր հայր հերոսները իրենց արյունով իրենց հավատքն արտահայտեցին: Դո՛ւք ունեք մի ուրիշ ձև՝ քրտինքով, աշխատանքով, հողին կապվածությամբ արտահայտեք ձեր սերը: Ով կթողնի Հայրենի հողը, նա նոր տեսակի դավաճան է այս ազգին: Այսքան խիստ եմ ես, այո՛, որովհետև ես գիտեմ, թե ինչ կնշանակի օտարություն: Քո հարազատ տունը որտե՞ղ ես թողնում, քո հարազատ մորը որտե՞ղ ես թողնում մի կտոր հացի համար: Քո հողից չե՞ս կարող այդ հացը հանել. «Մի պատառ հաց առվի ափին, իշխանական ճաշ է ինձի»,—ասել է ժողովրդական երգը:

Սիրելի՛ք, աշխարհը մեզ դիտում է, դուք այստեղ եք ապրում, աշխարհը չեք տեսնում: Ես պտտել եմ աշխարհով մեկ, աշխարհը սպասում է և կարծեք ուզում է տեսնել, թե այս ազգը արժանի՞ է անկախության, թե ոչ: Մենք պիտի փաստենք, միասնականությամբ, որ իսկապես արժանի ենք: Եթե այսօր ինձնից ձեր կեսօրվան ճաշին պես հոգևոր սնունդ եք սպասում, այդ սնունդի անունն հետևյալն է՝ առեք այս պատգամը, խառնեցեք ձեր արյան, ձեր կյանքին. ամեն բանից վեր նկատենք Հայրենիքի, Եկեղեցու, Ազգի և Պետության ընդհանրական շահը՝ մասնավոր, փոքրիկ, ճղճիմ. մանր, փոքրոգի հարցերից վեր բարձրանանք, իբրև ազգ մտածենք, իբրև պետություն մտածենք:

Անա ինչու եմ եկել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ի՞մ առաջին հանդիպումն է ձեզ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Դյուրին գործ չէ, եղբայրներ և քույրեր, այստեղի ժողովրդի հոգևոր պատասխանատուն լինել, և համայնքների, որոնք ապրում են Հարավային Ամերիկայում, Ծայրագույն Արևելքում, Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում և աշխարհի չորս ծագերին: Ես իմ կյանքս այնքան տարիներ, որ Աստված թողել է ինձ հասնի, այդ ամբողջ կյանքս նվիրում եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջից մեր Հայ Եկեղեցուն և հայ ազգին, Հայրենիքին և պետությանը: Եկեք միանանք իրար, թող Էջմիածինը չլինի մի կենտրոն, իբրև այն տեսակի մի հաստատություն, որ քարերով խոսե, ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ. Էջմիածինը ձեր հոգու մեջն է: Ես եկել եմ ձեր հոգիները խառնելու և Էջմիածինը այնտեղ վերստին կենդանացնելու: Դա մեր Սրբություն Սրբոցն է: Գիտեք ինչ կնշանակի ինձ համար Էջմիածին. Աստծու համբույրը մեր հողին:

Այս եկեղեցին հինգ, վեց տարիներ առաջ չէր գործում, բայց չէր մեռել, եկեղեցին ձեր մեջն էր ապրում և ազատության պայմանները եկան, եկեղեցին նորոգեցին, վերաշինեցին: Այստեղ եք մկրտվում, այստեղ Քրիստոսի խոսքն եք լսում, այստեղ երիտասարդներն ու երիտասարդուհիները իրենց գլուխներն են կապում, ձեռքերն են սեղմում և ընտանիք են կազմում՝ հայկական պատվաբեր ընտանիք, այստեղից էլ նաև հրաժարվում եք այս աշխարհից, տարիների բեռը ձեր ուսերին, երբ աշխարհին հրաժեշտ եք տալիս և գնում եք անդենական աշխարհ: Եկեղեցին պետք է դառնա ապրում, հավատում, կյանք ձեր բոլորի մեջ, ձեր դպրոցական հարկերի ներքև, ձեր ընտանեկան բնակարանների մեջ: Երկրորդ. եկեղեցուն կապվելով՝ կապվեցեք հայկական հողին՝ Հայրենիքին, և ձեր աշխատանքով շինեցեք այս երկիրը: Օտար ազգեր չպիտի գան և պիտի չշինեն, ոչ էլ արտասահմանի հայերը պիտի գան: Նրանք կօգնեն, բայց դո՛ւք պիտի շինեք, հայրենաշինու-

թյունը մե՛ր գործն է: Եվ երրորդ. դուք հավատարիմ մնացեք հայկական, հարազատ և մաքուր ավանդություններին, արդի աշխարհի ապականիչ երևույթներից մի տարվեք: Սուրբ ավանդ ունենք մեր հայրերից եկած, մեր տոները եկեղեցական, մեր բարքերը հայկական՝ այս բոլորը չծախենք՝ օտար ազգերից, օտար մշակույթներից եկող սին և փուչ այն բոլոր ազդեցություններին, որոնց ենթարկվում է մեր երիտասարդությունը:

Օրհնում եմ ձեզ բոլորիդ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, խնդրում եմ Աստծուց, որ Իր աչքը ամենատես և Իր Ձեռքը ամենազոր պահի ձեր վրա արևի պես պայծառ և երկնքի պես կապույտ. ամպերը կգնան, երկնքի կապույտը կմնա: Ձեր միությունը լինի այդ կապույտը, տարաձայնությունները գան ու գնան ամպի նման, օդի նման և հավերժ ըլլա հայությունը երկնքի կապույտին պես և երկրի հողի ամրության պես ու արեգակի պես միշտ հառագայթուն, Աստծու փառքին և Սուրբ Եկեղեցու պայծառության և մեր Հայրենիքի շենության համար, հավիտյանս հավիտենից: Ամեն»:

* * *

Սուրբ Աստվածածին եկեղեցում ժողովրդին հանդիպելուց հետո, Վեհափառ Հայրապետը Թալինի մշակույթի պալատում տեսակցեց շրջանի ղեկավարության և մտավորականության հետ և շեշտեց այն գաղափարը, որ հարկավոր է ապրել ու աշխատել Այետսարանի քարոզած բարոյական սկզբունքներով և ճշմարտություններով, որոնց բացակայությունը մարդուն դարձնում է կույր գոյություն և հոգևոր արժեքներից զուրկ մի զանգված.

«Մենք եղանք եկեղեցու մեջ, գտնվեցինք եկեղեցու առաջ, աղոթեցինք միասին, հրապարակավ խոսք ուղղեցինք համայն բարեպաշտ ժողովրդին: Եվ այս պահը, որ մեզ համախմբել է մշակույթի այս սրահում՝ Թալինում, մտածման, խորհրդածության, լուրջ անդրադարձումի մի պահի պետք է վերածվի և ոչ թե հոգեկան խանդավառության, զգացական վիճակի: Մեր ժողովուրդն ասում է հաճախ. «Ծուռ նստենք, շիտակ խոսենք»: **Այսօր սրտից, մտքից ինչ որ մտածում եմ, ուզում եմ ձեզ հետ միասին բաժանել:**

Առաջին. անհավասիկ երեկ միայն վերջացավ մեկ ամիսը իմ Կաթողիկոսական ընտրությանեն ասդին. միամսյա Կաթողիկոս եմ դեռ: Եվ Այետսրանում մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի ամենեն գեղեցիկ քարոզությունից մեկն այն էր, որ ասում էր. «Ծանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն» (ՀՈՎՀ. ժ 14): **Ես չեմ կարող ժողովրդին ծառայել, եթե այդ ժողովրդին չճանաչեմ: Ժողովուրդը անուն չէ ինձ համար, թիվ չէ ինձ համար՝ անձեր են, ապրող, շնչող, իրենց տագնապները ունեցող, իրենց երազները ունեցող, իրենց ձգտումները ունեցող, իրենց նպատակները ունեցող, իրենց հիշողությունները ունեցող: Ամեն մեկը մեզանից մի աշխարհ է: Եթե ինձ հարցնեք, թե ես ով եմ՝ մի հեռավոր Սիրիայում ծնվել եմ, ուրիշ աշխարհ եմ տեսել և ուրիշ տեղ եմ ուսանել, ուրիշ երկիր եմ տեսել, և սակայն այստեղ, ձեր մեջ ինձ համաքաղաքացի եմ զգում, որովհետև տրամաբանության աչքին և զգացողության դիմաց եմ տեսնում, որ մենք բաժանում ենք նույն սնցյալը, ունենք նույն հավատը, ունենք նույն լեզուն, ունենք նույն երկիրը և ունենք մեկ ճակատագիր: Հետևաբար, ես առաջին հարցումը, որ դնում եմ, այս է. ո՞վ ենք մենք, ճանաչենք մենք զմեզ: Մեծ փիլիսոփա Սոկրատը ասել է.** «Ծանի՛ր զքեզ»: **Ամենից մեծ ճշմարտությունը ուրիշին ճանաչելը չէ, ինքն իրեն ճանաչելն է: Եթե մարդ ինքն իրեն չճանաչի, սխալ ձևով կապրի: Մենք իբրև

հայություն, մենք զմեզ ճանաչելու ճիգին մեջ պետք է խուսափենք չափազանց դերզգայականությունից՝ այսինքն, զգացումով շարժվել, զգայարանքներով ղեկավարվել:

Աստված մարդուն տվել է մի մեծ ուժ, որիշ էակներից աճեջատող մի հիմնական ուժ՝ դա միտքն է: Միտքն է մարդուս ղեկավարը: Եղիշեն ասում է. «Հոգւոյ եւ մարմնոյ միտք են կառավար», մարմնի և հոգու կառավարիչը միտքն է՝ բանականությունը, տրամաբանությունը: Երևակայեցեք, հին փիլիսոփաները աշխարհումս մարդս պատկերացնում էին երեք բաղկացություններից կազմված մի էակ. մարմին՝ նյութ, միս ու ոսկոր, հողից եկած, հողին գնալու. երկրորդ, հոգի՝ զգալու եղանակ, և երրորդ՝ միտք, բանականություն: Եվ այս երկուքի՝ հոգու և մարմնի պատկերացումը տալիս էին, ասելով, թե նրանք նմանվում են երկու ձիերի, մեկը սև և մյուսը ճերմակ՝ ապիտակ, և ամեն մեկը հակոտնյա ուղղությամբ է գնում՝ միտքն է այդ երկու ձիերին կարգի մեջ՝ ուղիղ ճանապարհին պահողը: Մենք իբրև ազգ հաճախ տարվել ենք, սխալվել ենք միայն ու միայն զգացումներից առաջնորդված գործելով: Ես ուրիշ ազգերի ճանաչել եմ. մենք չափազանց զգացական ենք և միտքը պետք եղած ձևով չենք գործածում:

Սիրելինե՛ր, եթե երբեք այսօր մենք ուզենք մենք զմեզ ճանաչել, պետք է նաև խուսափենք մի ուրիշ թերությունից: Ես չեմ եղել Կաթողիկոս, որ ձեզ, որ միայն ու միայն իմ ազգին փառաբանեմ՝ ո՛չ: Հոգևոր մարզոց դուք ինձ ընտրել եք, որ ես ձեզ առաջնորդեմ: Եթե դուք ասում եք, որ ես ձեր զորավարն եմ, ես անպայման ձեզանից ավելի մեծ անձ չեմ իբրև մարդ, բայց քանի որ դուք ինձ նշանակել եք՝ հետևեք և ոչ թե ամեն մեկն իր ուզածն անի, ուզածն ասի, հապա ինչ է ղեկավարությունը, ինչ է զորավարությունը: Հոգևորականությունը մի հոգևոր գիտություն է և հետևաբար, ես եկել եմ նշելու նաև մեզ համար իրական ախտաճանաչումները մեր գոյության մասին: Ասացի առաջինը զգացականությունն է իր չափազանցյալ վիճակի մեջ, երկրորդը՝ անցյալը գովաբանելու մեր չափազանցյալ եղանակը: Չարենցը գրել է.

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա,
Աշխարհն անցիր Արարատի նման ճերմակ գագաթ չկա...

և բոլոր ասածները ճիշտ են, բայց բանաստեղծություն են: Աշխարհումս Արարատից ուրիշ բարձր լեռ կա, բայց մեզ համար չկա՝ Հիմալայան լեռները: Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա ասող և արտասանող մարդիկը շատ հաճախ չեն կարդում ո՛չ Նարեկացի և ո՛չ էլ Քուչակ: Ի՞նչ իրավունք ունեն մեր հայրերի անունով հպարտանալու, եթե իրենք այդ հայրերի հոգին իրենց մեջ չեն կրում և իրավունք չունեն մեր հայրերի արածներով միայն հպարտանալու: Դա կնմանի մի դրամագլխի, որ մենք շահագործում ենք: Մենք ի՞նչ պիտի անենք, ա՛յս է հարցը մեզ համար: Ես մի գիրք եմ գրել և այդ գրքից այսօր ձեր դպրոցների համար բերել եմ 10 օրինակ, կարող եմ ավելին էլ ուղարկել. «Հայաստանեայց Եկեղեցին իր ծառայական կերպին մէջ»: Ի՞նչ է արել մեր Եկեղեցին մեր ազգին՝ հայության և ի՞նչ է արել մեր Եկեղեցին ամբողջ մարդկության համար: Ես խնդրում եմ ձեզանից, որ կարդաք, բայց ոչ թե իմ գիրքը միայն՝ այլ նաև ուրիշ գրքեր, մեր ժողովուրդի մեջ ընթերցանությունը մեծ մտածող-

ների, մեծ տաղանդների հետ հաղորդությունը պետք է որ մշակվի, զարգանա:

Բարեկամնե՛ր, անցյալը գովելով, ներկայի մեջ մնալով զգայական, անշարժ՝ դա արդարություն չէ: Ես այս գրքում մեջբերել եմ Նոր Ջուղայի պապագան, այնտեղ Պարսկաստանում առաջնորդ եմ եղել, որ 1600 թվականից մնացած եկեղեցիներ կային, Շահ Աբբասի տարած ժողովուրդն էր դրանք կառուցել: Երբ նրանք Պարսկաստան տարվեցին, երկիրը չէին ճանաչում, լեզուն չէին իմանում և Պարսկաստանում այդ հայերը մի երեք կիլոմետր տարածությամբ հողի վրա 23 եկեղեցիներ կառուցեցին, նկարազարդեցին, ձեռագրեր գրեցին, Ամենափրկչյան վանքը հիմնեցին, մի Հայաստան փոխադրեցին արտասահման և հաղորդ մնացին մեր Հայրենիքին: Բայց երբ որ ես գնացի երեք դարեր հետո, տեսա նրանց, ասում էին՝ մեր հայրերը այսպես են արել, մեր հայրերը այնպես են արել, արե՞լ, արե՞լ, արե՞լ: Դարձա իրենց հետևյալ խոսքն ասեցի. չպետք է ասել մենք անցյալում քսանից ավելի եկեղեցի ենք ունեցել, մե՞ծ-մե՞ծ ուսուցիչներ ենք ունեցել, մե՞ծ-մե՞ծ հոգևորականներ ենք ունեցել, շեն թատրոն ենք ունեցել, երգչախմբեր ենք ունեցել, ունեցե՞լ, ունեցե՞լ:

Դարձա և ասացի. ի՞նչ ենք անում մենք հիմա, Աստծու առջև կանգնել ենք, պատմության դիմաց. ես ասում եմ մեզ համար անցյալը հուշ է՝ ապագան երազ, իրականը ներկան է: Հինգ րոպե առաջ ինչ որ արեցինք եկեղեցում, անցյալին կպատկանի, ինչ որ անելու ենք Լենինականում կամ Գյումրիում՝ դա ապագա է հիմա ինձ համար, ինչ որ հիմա արժի, հիմակվան մեր արածն է: Ներկան է կարևոր և այդ ներկան՝ մեր սա անկախացյալ Հայաստանն է: 1988 թվականի ղարաբաղյան շարժումից հետո, 1988 թվականի Գյումրիի շրջանի աղետից՝ երկրաշարժից հետո, 1991 թվականի սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախ պետականության հռչակումից հետո, հայը չի կարող լինել նույնը, ինչ որ էր անցյալում: Սա ճշմարտություն է:

Պարզ եմ ասում՝ ես չեմ կարող լինել նույնը, ոչ էլ դուք և ոչ էլ արտասահմանցի հայը, ոչ էլ երևանցին: Դրանից առաջ ուրիշ կարգ էր տիրում աշխարհում, դրանից առաջ Խորհրդային Միություն կար Էստեղ: Դուք չէիք կարող որոշել, թե ինչ պիտի անեք: Դրանից առաջ մենք Սիյուռքում Հայրենիք էինք երազում: Մեզ համար Հայրենիքը թուրքերի կողմից գրավված մեր հողերն են և երկրորդ՝ Խորհրդային Միության կողմե տիրապետված այս փոքրիկ Հայաստանն էր այն ատեն: Հիմա Աստված մեր երեսին նայեց, մեր ժողովրդի կամքի հարատևության պատճառով մենք դիմացանք, տոկացինք և՛ Սիյուռքում, և՛ Հայաստանում, և Աստված վարձատրեց մեզ, անկախ Հայրենիք ունեցանք, հիմա Պետություն ունինք՝ մեր ընտրած Պետությունն է, հիմա կառույց ունինք: Գիտե՞ք ինչ պատահեց ինձ Անթիլիասում՝ Սիլիկիո Կաթողիկոսության կենտրոնում, Լիբանանի մեջ, երբ եկավ այնտեղ իմ Հայրենիքի արտաքին գործոց նախարարը, երբ նա վերադառնում էր Նյու Յորքից՝ այդ մեծ քաղաքից, Միացյալ Ազգերի Կենտրոնից և դեպի Հայաստան էր ուղղվում, կանգ առավ Լիբանանում երկու օրով և այնտեղ, երբ եկավ մեր կաթողիկոսարանը՝ հոգևոր կենտրոնը Անթիլիաս, նա պատմեց, թե ինչպես Միացյալ Ազգերի Կենտրոնում հայկական Եռագույն Դրոշը բարձրացավ:

Ես այդ քաղաքում ապրել էի երեք ու կես տարի, ամեն շաբաթ այդ շենքի առաջից անցնում էի, հարյուրից ավելի ազգերի դրոշներն էի տեսնում. բայց չկար իմ ազգի դրոշը: Եղա՛վ, պատահեց, չէինք ապատում թերևս,

բայց աշխարհը փոխվող աշխարհ է՝ երեկվան աշխարհը այսօրվանը չի և ոչ էլ վաղվա աշխարհը այսօրվանը պիտի լինի: Այդ փոփոխությանց մեջ մենք պետք է միշտ արթուն մնանք՝ իրատես ըլլանք, որամաբանությամբ շարժվենք և մեր Հայրենիքին՝ անկախացյալ այս պետականության ամրացումը ապահովենք ամեն ձևով:

Ես ճանաչել եմ շատ ազգեր, երբ ուսանող եմ եղել Անգլիայում, 9600 աշակերտների մեջ երեք հայ էինք միայն, և հաճախ հարց եմ տվել ինձ. ինչո՞ւ հրանք ավելի զարգացած լինեն և մենք այնքան զարգացած չլինենք՝ որտե՞ղ է պատճառը: Կարդացել եմ հրանց գրականությունը, ճանաչել եմ հրանց պատմությունը, հաղորդակից եմ եղել հրանց ապրող ղեկավարների հետ և՛ հոգևորական, և՛ քաղաքական, և՛ պետական: Ես եկել եմ հետևյալ եզրակացության. հրանք կարգավորյալ ձևով են դասավորում իրենց կյանքը և մեկ փիլիսոփայություն ունեն, դա հետևյալն է՝ ընդհանուրին շահին մեջն է անհատին շահը, ոչ թե անհատականին մեջն է ընդհանուրին շահը: Եթե երբեք ընդհանուր մարմինս առողջ չլինի, իմ թևը չի կարող երկար առողջ մնալ: Մարմին է ազգը, այդ մարմինը իր ամբողջության մեջ եթե առողջ չլինի, ես մի մասնիկս չեմ կարող այդ վատառողջ մարմնի մեջ առողջ լինել:

Հետևաբար, ընդհանրական շահը Թալին քաղաքի, փողոցը, հրապարակը, այն բոլոր հասարակական շենքերը, հաստատությունները, որոնք կան, իմ տնից վեր պետք է դասվեն, որովհետև նա կպատկանի ամբողջին, ոչ թե ինձ: Եթե երբեք իմը նախընտրեմ, մի օր ընդհանուրի հիվանդությունը իմ տանը կհասնի: Սա շատ պարզ ֆապալիայան ճշմարտություն է, բայց մենք իբրև հայություն պետք է որ դա ճանաչենք, իբրև ազգություն պետականորեն մտածենք: Գիտե՞ք, ինչ է պատճառը, որ մենք չենք կարողացել այդ աճել, որովհետև ուրիշ ազգերի տիրապետության տակ ենք ապրել: Հիմա, որ անկախ ենք, հիմա, որ մենք մեր դաստիարակությունը, մեր կրթական, դպրոցական կյանքը մենք ենք դասավորում, պետք է որ հիմա մենք խելացի շարժվենք և այս բոլորը անենք ի սեր մեր Հայրենիքի: Վերջում ուզում եմ ասել, որ մեր Եկեղեցին՝ Հայոց Եկեղեցին մեր ազգի գոյության միախառնվել է, մեր պետականությունը մեր Եկեղեցուց անկախ չի եղել. պատմությունը կարդացեք և պատմությանը հետևեցեք ուշադիր կերպով:

Եղբայրներ և քույրեր, մեր Եկեղեցին եղել է սնուցիչ մայրը բարոյական ընթացումների, հոգևոր արժեքների. եթե մի ազգի մեջ բարոյական ուժը՝ առողջությունը տկարանա, ո՛չ դրամը մեզ կփրկի և ո՛չ էլ զենքը: Ապրևորը մարդ էակի և ազգի առողջություն է հոգևոր և բարոյական, որ իմաստ կտա և՛ դրամին, և՛ զենքին: Դրամը տուր հիմար մարդու ձեռքը կմսխի, դրամը ուժ չէ, մարդն է ուժը: Զենքը տուր մի ոճրագործի ձեռքը՝ մարդ կսպանի, բայց զենքը տուր քաջամարտիկի ձեռքը, որ իր Հայրենիքը պաշտպանի, Հայրենիքի գաղափարը ունենա, բարոյական հասկացողություն ունենա, ազգային ընթացում ունենա՝ նա կպաշտպանի: Ինչպես Գալշոյանն է ասում իր Ջորի Միրոյի մեջ. «Տղաս, դու ասկյար չես, դու զինվոր ես»: Ես զինվոր եմ, սրբազանը զինվոր է, վարդապետը զինվոր է, քահանան զինվոր է՝ հոգևոր զինվոր է. կարգ ու կանոնով պիտի ապրինք: Եթե կարգ ու կանոնը խաթարվե, ներդաշնակությունը խաթարվե, կյանքը կքայքայվի: Որպես պարզ օրինակ. առեք այս շենքը. սա քարերի կույտ չէ. ճարտարապետի մտքով դասավորված, չափագրված, շինված տոկուն շենք է: Հանեք պատը՝ կընկնի շենքը, վերցրու այուը՝ կքանդվի շենքը: Ազգն էլ մի համատեղ կառուցվածք է՝ հոգեկան, ազգային, մշակութային, կրթական,

ընկերային, տնտեսական ազդակներով: Եկեղեցին այս մարմնին այուն է, ճշմարտությունների քարոզիչն է: Էջմիածինը, մեր սրբություն սրբոցը, որին Մայր Աթոռ ենք ասում, Մայր Աթոռ ի՞նչ կնշանակի: Որդի՛ լինենք, եթե ես ասում եմ իմ մայրը և նրա հետ չեմ վերաբերվում զավակի նման, մայր ասելը ի՞նչ իմաստ ունի՝ ես ինձ խաբում եմ:

Առաքյալն ասում է. «Եթե մեկն ասի, թե՝ սիրում եմ Աստծուն, և ատի իր եղբորը, տուտ է. ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա ՀՈՎՀ. Դ 20): Ով Աստծու սերը եղբոր հանդեպ ցույց տված սիրով կարտահայտե, նա է Աստծու ծառան: Եթե մարդուն ատես, չես կարող Աստծուն սիրել: Այսպես ալ մեր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով և բոլոր թեմերով՝ և՛ այստեղ՝ Հայրենիքում, և՛ արտասահմանում, պետք է դառնա մեր ժողովրդի կյանքի մեջ ներգործող ուժ, գաղափար, ապրում, աղոթք, Ավետարանի քարոզություն և ոչ թե քար, հուշարձան, խաչքար, գմբեթ միայն: Մեր հայրերը իրենց հավատքն են արտահայտել, իսկ մենք ինչպե՞ս ենք արտահայտում մեր հավատքը այսօր: Եկեղեցին հորոգեցիք՝ ապրե՛ք, բայց եկեղեցին պետք է լցնել, եկեղեցին պետք է այնպես ապրել, որ դառնա մեր ժողովրդի դաստիարակության կարևորագույն ազդակներից, միջոցներից մեկը:

Այսօր առաջին անգամ որպես Ամենայն Հայոց հորընտիր Կաթողիկոս այսպիսի մտերմիկ զրույց եմ ունենում Թալինի շրջանում: Դեռ նման զրույց չեմ ունեցել ո՛չ Էջմիածին քաղաքում, ո՛չ էլ Երևան քաղաքամայրում. առաջինը Թալինում է: Այս հիշատակը ինձ համար միշտ քաղցր պիտի մնա և խնդրում եմ ձեզանից՝ բոլորիդ, եկեք մենք այսօր մի որոշում առնենք բոլորս միասին՝ Կաթողիկոսով, սրբազաններով, վարդապետներով, քաղաքային իշխանության ներկայացուցիչներով, մշակույթի սպասավորներով՝ բոլորով միասին, որ եթե հոր Կաթողիկոս ենք ընտրել՝ հորհռված ազգ և Եկեղեցի դառնանք:

Ո՛չ իմ համար՝ ես կամ-չկամ, բայց Կաթողիկոսությունը կա: Մենք պետք է փոխվենք և այդ փոփոխությունը պետք է լինի բարեփոխություն: Երեկ գիշեր մի գիրք էի կարդում, այդ գրքում մի տող կարդացի. և Տոլստոյ ռուս մեծ գրողը ասել է. «Ամեն ոք խոսում է աշխարհը փոխելու մասին, ոչ ոք չի խոսում ինքն իրեն փոխելու մասին»: Ճիշտ է: Նոր Հայրենիք, նոր ազգ՝ անկախ Հայրենիք, նոր ձևով մտածողություն և այդ մտածողության ողնաշար, մայր ջիղ պետք է լինի մեր եկեղեցին և մեր պետությունը: Մենք՝ հայ մարդիկ այսօրվա՝ 1995 թվականի, որ ապրում ենք երկրորդ հազարամյակի ավարտին, բանալու համար երրորդ հազարամյակը մեր պատմության մեջ, մենք փառք տանք Աստծուն, որ անկախությունը ունեցանք:

Հայրենիքը մեր ձեռքով շինենք, ուրիշը չպիտի գա շինի մեզ համար: Երեկ Էջմիածնում ինձ մոտ եկավ ՄԱԿ-ի ներկայացուցիչը Երևանում: Նա ի՞նչ պիտի անի, կօգնենք ձեզ, ասեց, բայց եթե ես չաշխատեմ, ինքն ի՞նչ կարող է անել, նրա օգնությունը որի՞ համար է: Ի՞նչ գեղեցիկ է այն խոսքը, որ ասում է. «Դուն քեզ օգնի, Աստված քեզ կօրհնի» և ասվել է «Աշխատանքը թանձրացյալ աղոթք է»: Աստծու հանդեպ հավատարմության եղանակը աշխատանքն է, գործը: Շատ ենք խոսում, ամեն բանի մասին խոսում ենք, խոսում ենք ու խոսում: Խոսքի առատություն, խոսքի ճշմարտության փաստը սակայն գործն է: Գիտեք, Հիսուս ինչ ասեց. «Թէև ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք». չես կարող գործին չհավատալ: Մեկն ասի, որ ես մեծ տաղանդավոր գրող եմ, բայց չգրի՝ ի՞նչ արժեք ունի:

Մեկին ալ՝ Աստված եթե տված լինի սքանչելի ձայնի տաղանդ երաժըշտական, բայց նա չերգի՝ ի՞նչ արժե, կնմանի մի արևի, որ ճառագայթ չունի և նման արև չի կարող երևակայվել՝ արևը եթե արև է, ճառագայթ ունի:

Այսպես էլ, եթե մեկը արժեք ունի, այդ արժեքը պետք է արտահայտի: Գործն է, ճվիրումն է, աշխատանքն է, որ այս Հայրենիքը պիտի շինե: Այդ աշխատանքը պետք է լինի ներդաշնակ, միասնական ուժով, ընդհանուրին շահը, Հայրենիքին շահը, Եկեղեցու շահը ամեն տեսակի մասնավոր շահերից վեր դասելով: Ահա ձեզի իմ հասկացողությունը կյանքի, Հայրենյրքի և Եկեղեցու մասին: Եթե սխալ բան ասեցի, թող Աստված ինձ ների, իսկ եթե ճիշտ բան ասեցի, թող Աստված ձեզ օրհնի: Ամեն»:

Հաջորդ հանգրվանը **Մաստարա** ավանն էր, որի Է դարի հրաշագեղ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, իր 1300-ամյա քարերի շունչը ընդխառնելով հավատացելոց հոգիներին, ուրախությամբ վերամբարձել էր գլուխը՝ դիմավորելու Սուրբ Սեղանի առաջին սպասավորին և այս միջոցով հաղորդվելու իր Մոր՝ Միածնաէջ Տաճարի սրբարույր և հայաբարբառ ավազանի ու Սուրբ Խորանի հետ: Մի գեղեցիկ ավանդություն պատմում է, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Հայոց դարձի Աստվածընկալ օրերին Կեսրիայից բերած Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքն է ամփոփել այս վայրում և հիմնադրել համանուն եկեղեցին, որտեղից էլ ծագել է անունը՝ Մաստարա: Այսօր, 13 դարերի հեռավորությունից, Լուսավորչի արժանի հաջորդ Գարեգին Ա Հայրապետը Սուրբ Էջմիածնի հոգեկան մասունքն է տանում այնտեղ՝ վերաշինելով և վերանորոգելով հայրերի ուխտն ու պատգամը.

«Հավատացյալ, հավատարիմ հայորդիք և զավակունք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու,

Ինձ համար հոգեկան մեծ ուրախության անմոռանալի օր է այսօր: Ես կարդացել եմ ձեր եկեղեցու պատմության մասին, հիմա ձեր առաջնորդ սրբազանն էլ հիշեցրեց, որ Է դարից այս եկեղեցին կանգուն է մնացել արտում այս ամբողջ շրջանի մեր հավատացյալ ու սիրեցյալ ժողովրդյան: Ի՞նչ կնշանակի է դարից այս կողմ՝ 13 հարյուր տարիներ, 13 դարեր, որ այս եկեղեցին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խոսքն է խոսում՝ այս վերջին 70 տարիներին անբարբառ լեզվով, քարեղեն լեզվով, որովհետև փակ էր մնացել այդ եկեղեցին: Ի՞նչ անենք, հավատացյալներ, անցյալն ավաղենք և դրանով գոհանա՞նք: Անցյալը անցել է: Հիմա մենք նայենք ներկային, հիմա մենք նայենք ապագային: Որքա՜ն ուրախություն է ինձ համար, տեսնել այս երեխաներին, այս պճլտուն աչքերով, վառ նայվածքով, պայծառ ճակատով երեխաներին, պատանիներին, պարմանուհիներին, որոնց աչքերի միջից դուք և ես տեսնում ենք մեր Հայոց պայծառ ապագան.

Ով անմեղ է լիքը սիրով
Ու հավատով անսասան,
Ով նայում է վառ հույսերով
Դեպի Հայոց ապագան...

Երեխե՛ք, դուք ինձ մտիկ արեք, դուք այսօր նայում եք գալիք կյանքին, մենք այնես ապրում ենք մի քիչ հիշատակներով: Նա, որ արդեն կանցնե



Մուտ Մաստարա



Մասսարա. Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում

60 տարեկանը, հինը հիշելու տրամադրության մեջ կլինեն, բայց դուք, երիտասարդներ, դո՛ւք եք այս Հայրենիքի նոր գավակները:

Հայրենիքը չէ՛ այն, ինչ որ եղել է ձեր հայրերի օրով: Մենք օտարի կամքով էինք ապրում, ուրիշն էր որոշում, թե մենք ինչպես պիտի ապրենք: 70 տարիներ դուք այդպես ապրեցիք այս երկրում, իսկ ես, որ գալիս եմ արտասահմանից, մենք էլ ապրեցինք օտար երկրներում: Իմ հարազատ հայրն ու մայրը այսպիսի փոքրիկ երեխա էին 1915 թվականին, երբ անապատից փրկվեցին թուրքի յաթաղանից և սրից, ազատվեցին և վերապրեցին: Մենք էլ շատ ծա՜նր-ծա՜նր օրեր ենք տեսել, բայց հիմա անցել են այդ բոլորը, հիմա մենք նոր՝ ազատ ու անկախ Հայաստան ենք հիչակել, պետություն ենք դարձել, կյանքով ենք ապրում, ազատ ժողովուրդ ենք, հետևաբար, գիտցեք հարգը ազատության: Մի՛ գնաք անիշխանության, մի՛ գնաք անկարգության, ազատությունը կարգով, կարգապահությամբ պետք է ապրել, որպեսզի դա ստեղծագործ լինի. իսկ ուզած անձը, ուզած բանը եթե անի՝ դա ազատություն չէ, դա անիշխանություն է, կամ կամայականություն է. կարգով, օրենքով ապրող ժողովուրդներն են, որ մեծ կլինեն, տևական կլինեն և հաղթող կլինեն բոլոր տեսակի թշնամիների առաջ:

Ինչպես գիտեք բոլորդ էլ, ես եկել եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ձեր առաջնորդը, Գրիգորիս սրբազանն ասեց, որ այս շրջանը պատկանում է Սուրբ Էջմիածնին. եկել եմ իմ իրավունքը պահանջելու՝ այսինքն ձեզ ասավել ևս կապելու մեր Սուրբ Աթոռ, Մայր Աթոռ, Սրբություն Սրբոց Էջմիածնին: Բայց մի բան չասեց նա, ո՞ր մեկ տեղը չի կապվել Էջմիածնին, միայն Մաստարան չէ՝ բոլոր Հայաստանը, ամբողջ հայությունը աշխարհի չորս ծագերի. դուք ունեք մի այնպիսի հոգևոր կենտրոն, որ քար ու շենք, գրասենյակ ու թանգարան չէ. այնտեղ աղոթում ենք ձեզ համար: Գիտեք Էջմիածին ինչ կնշանակի՝ «Միածինը իջավ», Աստծու Որդին՝ Ինքը, Լուսավորչի տեսիլքի մեջ լուսեղեն կերպարանքով իջավ երկնքից երկիր, մրճակը ձեռքին (ուռնակը, ինչպես ասվում է գրաբար լեզվով) ոսկեղեն, բախեց հայոց գետինը՝ հողը: Ես պատկերավոր ձևով հաճախ ասում եմ Քրիստոս համբուրեց այս հողը Սուրբ Էջմիածնում և ասաց. «Այստեղ պիտի լինի իմ եկեղեցին»: Այս բացառիկ մի շնորհ է հայության համար:

Էլ ո՞ր երկիրը կարող է ասել, որ Քրիստոս իջել է իր երկիրը, բացի Պաղեստինից, բացի Բեթղեհեմից, որտեղ Հիսուս մի անգամ մարդեղացավ, մարմին զգեցավ: Մենք այդ հավատով ապրել ենք՝ Լուսավորչի այդ հավատքով: Շա՜տ հոսանքներ, քարոզություններ եկել-գնացել են, բայց հայու Լուսավորչահիմն հավատքը, Էջմիածնական կենտրոնով ղեկավարված Եկեղեցին մնացել են կանգուն և անսասան, որովհետև նա եղել է մեզ համար Մայր, Մայր անուգիչ, հոգևոր անունդ է տվել մեզ: Երբ պատմություն ենք կարդում, երբ մեր գրականություն ենք ուսումնասիրում, տեսնում ենք, թե ինչպես սուրբ հայրերը մեր՝ մարտիրոսներ, նահատակներ, հայրապետներ, վարդապետներ, ապրել են այդ հավատքով, գործել են այդ հավատքով և մեր երկիրը պահել են հավատքով քրիստոնյա և հայադրոշմ քրիստոնյա: Ես բոլոր ուրիշ տեսակ քարոզությունների համար մի խոսք ունեմ. —նրանք ամպի նման կգան ու կերթան, եկել են ու գնացել պատմության մեջ. մեր Եկեղեցին մնացել է տոկուն և պիտի մնա տոկուն ձեզանով: Եկեղեցին այս քարը չի, քարը Եկեղեցու արտաքին արտահայտություն է՝ Եկեղեցին դուք եք, ձեր հավատքն է: Երբ Վարդանանց գինվորները Ավարայրի դաշտ գնացին, երբ Ղևոնդ երեցը պատերազմի նախորդ գիշերը

հաղորդություն տվեց 66 հազարանոց Սուրբ և քաջ Վարդանի բանակին. եկեղեցի՞ ուներ այսպես քարաշեն՝ ո՛չ, դաշտի մեջ էր: Աստծու տաճարն է այս տիեզերքը, ամեն մեկը իր հոգու մեջ ապրում է Քրիստոսի հավատքը, հետևաբար դուք եք, մանավանդ, երեխեք, դո՛ւք. ձեր կյանքով, որ լինում եք եկեղեցի:

Վաղը, որ ավարտվի այս եկեղեցու շինությունը, նորոգությունը, պայծառացնենք այս եկեղեցին ձեր ձեռքերով, ձեր աշխատանքով՝ գաք, հայոց շարականները երգեք, «Առաւօտ լուսոյ»-ն երգեք, «Փառք ի բարձունս»-ը երգեք, «Որք զարդարեցին տաճարիս զիմաստս անեղին» երգեք, երբ որ երգեք «Ճորտահրաշ պատկառոր եւ զօրագլուխ առաքինեաց» այս շարականները, ձեր հոգին կանանչի, դուք ինքզինքնիդ կճանաչեք, թե ով եք. բայց եթե մոռանաք, եթե չերգեք, քարը ի՞նչ կարող է անել: Հետևաբար պետք է հավատքով շինչավորեք քարերը, ուժ տաք, որպեսզի ուժ առնեք քարերից՝ շինչավորյալ քարերից, աղոթածայն քարերից: Այն բոլոր գորությունը հոգևոր, մեր հայրերը որ դրել են այս քարերի մեջ, այդ գորությանը հաղորդ լինելու համար պետք է զգայուն հոգի ունենաք, հավատք ունենաք, այլապես ոչինչ կտեսնեք այս շենքի մեջ, բայց միայն քար. բայց այս եկեղեցին քար չէ՝ հոգի է, քարերը հոգի ունեն, բայց հոգի պետք է լինել, հավատք պետք է ունենալ՝ նրա գորությունը զգալու համար: Եթե արևը լույս է տալիս, բայց մեր աչքերը փակ լինեն, մենք լույս կտեսնե՞նք, չենք տեսնի: Այս իմաստով ասում եմ, որ մենք պահենք մեր Եկեղեցու հավատքը կենդանի մեր մեջ, ուր էլ լինենք՝ քաղաքացի լինենք, թե գյուղացի, լեռնական լինենք, թե դաշտաբնակ, որտեղ էլ որ լինենք, մեր հավատքի մեջ ամուր, տոկուն և առողջ մնանք:

Այսօր ես բերում եմ ձեզ այս խոսքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Եվ երբեմն էլ ձեզ տեսնեմ այնտեղ, եկեք երբեմն ուխտի, եկեք այնտեղ, աղոթքների մեջ դուք էլ խառնվեք, որպեսզի մեր մայր սրտի հետ հաղորդ մնալով, սրտից հոգևոր արյուն առնենք և մեր մարմինները այդ արյունով վառ, կենդանի, առողջ և ստեղծարար պահենք մեր նոր Հայրենիքի հետ կապված, մեր հողին արժեքը գիտցող և այնպես այս հողից կյանք հանող ժողովուրդ լինենք և ուրիշին չնայենք, մենք մեզի նայենք: Եթե մենք զմեզ հարգենք, իրար աչքի մեջ եղբայր և քույր տեսնենք, հավատացեք, օտարները մեզ կհարգեն: Վեր բռնենք և բարձր պահենք ընդհանուր ազգի շահը բոլորիս մասնավոր շահերից, այն ատեն մենք կդառնանք տոկուն և դիմացկուն ազգ, Աստծուն օրհնությանը արժանի ազգ: Թող Հովհաննես Մկրտիչ անվամբ մկրտված այս եկեղեցին դառնա ձեր բոլորի հոգիների նոր մկրտարան, որպեսզի այնտեղ երբ մտնեք, ձեր հոգիները պայծառացած լինեն, ուժեղացած լինեն, լիցքավորված լինեն, և երբ որ դուրս գաք այս եկեղեցուց, Աստծու ուժը ձեր մեջ զգաք և գնաք, մեր Հայրենիքի այս հողի հետ ապրեք և հողը դարձնեք ձեզ համար կյանքի աղբյուր և նաև մեր հպարտության առիթ, որովհետև այս է, որ ունենք աշխարհումս, երկու Հայաստան չունենք՝ այս մեկն ունենք, այս մեկին հարգը գիտենանք և այն ատեն Աստված ձեզ կօրհնի և հազար կապրեք, եթե այսպես ապրեք, Աստծու շնորհքով, մեր Եկեղեցու հովանու տակ և Սուրբ Էջմիածնի հովվության ներքև: Ամեն»:



Ժողովրդային հյուրասիրություն Ջուրակատում



Մարալիկում

Մաստարայից շարասյունը ուղղություն վերցրեց դեպի Սառնաղբյուր, ուր գյուղը հսկող բարձունքի վրա արթուն դիտողի նման վեր է խոյացած Սուրբ Թադեոս եկեղեցին:

Վեհափառն այստեղ ասաց.

«Հավատացյալ և հավատարիմ զավակներ Հայոց ազգի և Մայր Եկեղեցու,

Դուք, որ աքանչելի մի աննունով մկրտել եք այս ձեր գյուղը՝ Սառնաղբյուր, և բարձունքին այս եկեղեցին դարձել է ձեր բոլորի համար ներշնչումի աղբյուր: Այսօր ձեզ հետ լինելով ճորոգյալ հոգիով եմ զգում, զորացած եմ զգում ձեր բոլորի այսպիսի սիրալիր, հայավայել և հարգալից վերաբերմունքի համար: Ապրե՛ք, ժողովուրդ Աստծու: Դուք, որ գիտեք ձեր եկեղեցին հարգել, ձեր եկեղեցիով օրհնված լինեք, հոգիով լիցքավորված լինեք: Դուք ինչ որ անում եք ինձ համար, իմ անձին չի վերաբերում, ես փոքր անձ եմ, բայց դուք իմ անձի միջից ձեր Եկեղեցու հանդեպ սերն եք դրսևորում: Դրա համար ես գնահատում եմ ձեր այս փառավոր ընդունելությունը և դրա համար ասում եմ ձեզ բոլորիդ՝ օրհնյա՜լ լինեք և հազար ապրեք ու վստահեցնում եմ ձեզ, որ հազար կապրեք, եթե այսպես ապրեք՝ հավատարիմ մեր Եկեղեցուն, հավատարիմ մեր ազգին և հավատարիմ, մանավանդ, մեր գալոց ապագային:

Սիրելի՛ք, դուք այս եկեղեցին անհավասիկ մի քանի տարիներից ի վեր ճորոգել եք և եկեղեցվով դուք ճորոգվել եք, դուք զորացել եք: Եվ կիրակի օրեր, երբ այստեղ պատարագ է մատուցվում, դուք Աստծու Հոգու հետ հաղորդության մեջ եք մտնում: Այս բարձունքը, այս բոլորն այս եկեղեցիով դարձել է ձեզ համար մի Թաբոր լեռ, որտեղ Հիսուս՝ մեր Տերը, Երկնավոր Վարդապետը, բարձրացավ մի օր, և այնտեղ Հայր Աստված Նրան երևաց, և ամպերի միջից ձայն եկավ և ասեց Քրիստոսին. «Դու ես Որդի իմ սիրելի», և լույսը ամպերի միջից շառավիղեց:

Ավետարանիչն ասում է, որ Հիսուսի դեմքը այնպես պայծառացավ, որ երբեք արևի լույսն այդքան պայծառ չէր երևար: Դուք ամեն անգամ, որ այս բարձունքը գաք եկեղեցի, ի՞նչ կպատահի ձեր մեջ. Աստված ձեր մեջ կիջնի, դուք Աստծուն կբարձրանաք աղոթքով, հոգեկան հաղորդակցությամբ: Եվ եթե մի մարդ կտրվի իր Աստծուց, ինչ էլ լինի, ինչքան կարող անձ էլ որ լինի, տկար կմնա առանց Աստծու:

Մենք ներկայումս, մանավանդ, նոր սերնդի զավակները, ապրում ենք մի նոր շրջան պատմության մեջ: Տեսնում եք բոլորդ էլ ձեր սեփական աչքերով, որ մեր Հայրենիքը կերպարանափոխվել է: Դուք ինձնից լավ գիտեք, որ սրանից հինգ-վեց տարիներ առաջ ինչ պայմանների տակ էիք ապրում և այսօր ինչ պայմանների տակ եք ապրում: Ճիշտ է, լավ եմ հասկանում, որ ձեղություններ ունեք, ո՞վ չունի, մենք էլ ունեցել ենք, բայց խերն եմ անիծել բոլոր տեսակի ձեղությունների՞ կամ հայ ենք, պիտի տոկանք, կամ հայ չենք պիտի չտոկանք. ես այսպես եմ ընդունում: Կբավե այլևս գանգատը. որի՞ դեմ ենք մենք բողոքում, ինչո՞ւ ենք դժգոհում: Մի դժգոհ ժողովուրդ չի՛ կարող ապրել, գործող ժողովուրդն է, որ կապրե՝ ալ կբավե՛:

Սիրելինե՛րս, սա մեր Հայրենիքն է, այս մեր Հայրենիքը մեր գերագույն սրբություն է, մեր գերագույն հարստություն է: Ես թողել եմ արտասահմանը, եկել եմ հայրենիքում մեռնելու համար: Ի՞նչ եք ուզում դեռ, հետևաբար քաջ եղեք, քաջ՝ հայի պես: Ինչո՞ւ, մեր հայրերը այս հողից կյանք

չէի՞ն հանում՝ հանո՛ւմ էին, բա մեզ ի՞նչ է պակասում, մենք հայ չե՞նք, մենք ձեռք չունե՞նք, մենք խելք չունե՞նք՝ մենք պետք է որ լինենք այս Հայրենիքի հավատարիմ զավակները: Եվ ասոր համար է, որ ես այսօր եկել եմ Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռից ձեզ հույս ներշնչելու, ձեզ բերելու լույսի և հույսի խոսքը:

Մենք պիտի քայլենք դեպի առաջ. հա, որ կոկաթաճա իր հոգու մեջ, այդ անձը այս հայության պատմության մեջ տեղ չի գտնի: Նա, որ կկապվի իր հողին, կկապվի իր Հայրենիքին, կկապվի իր ընտանիքին, կկապվի իր եկեղեցուն, նա, որ կկապվի իր դպրոցին՝ նա է, որ կդիմանա, նա է, որ կհավերժանա: Ապրե՛ք ժողովուրդ և այսպես ապրեք Աստուծով, և մեր այս անկախացյալ Հայրենիքի բարիքը մենք ստեղծենք մե՛ր ջանքերով, մե՛ր աշխատանքով:

Թող Աստված օրհնի ձեզ բոլորիդ և այս հոգով՝ քրիստոնեական այս հոգով պաշտպանի և զորացնի: Ամեն»:

Հրաժեշտ տալով Սառնաղբյուրին, Վեհափառ Հայրապետը այցելեց Զորակապ գյուղ և կարծես թե ժողովրդի ներաշխարհում զանազան պատճառներով գոյացած վիհ-ձորը կապեց-կամրջեց Աստուծո Հոգուն՝ ամբողջ Շիրակա աշխարհը ամրացնելով ու հաստատելով Տիրոջ ուխտադիր ծիածանի ներքո, այդ անդունդը լցնելով Հոգու զորությամբ ու կենդանությամբ: Եվ այս անձնյութական կամրջումով Թադեոս առաքյալի առաքելահաջորդը մուտք գործեց Մարալիկ քաղաք, որտեղ իրենց Մեծ Հայրիկին ցնծությամբ և խանդավառությամբ էին դիմավորում հատկապես մանուկները: Ակամայից մտաբերում ես շարականագրի Ծաղկազարդի կամ Արմավենյաց տոնի նկարագիր փառաբանությունը, որ «տղայք ոստովք արմաւենեաւք երամ երամ դասուք աղաղակէին. Ովսաննա՜, Օրհնեալ եկեալն անուամբ Տեառն»: Այստեղ, ինչպես նաև մյուս բնակավայրերում Վեհափառ Հայրապետի մտահոգության նյութն էր հատկապես մատաղ սերնդի դաստիարակությունն ու կրթությունը՝ հայի վաղվա հույսն ու ապագան:

Մարալիկի հրապարակում երեխաները ստացան Վեհափառի Հայրական օրհնությունը.

«Սիրելի Սրբազան եղբայր, հոգևոր եղբայրներ, քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, հարգարժան ճահճագապետ և շրջանի պատասխանատուներ, թանկագին հայրենակից, հավատակից և արյունակից եղբայրներ և քույրեր,

Այսօր այս պահը մի օրակն է այն այցելության շղթային, որ բացվեց իմ կյանքում Կաթողիկոսական ընտրությունից և Գահակալությունից հետո, սեհավոպիկ, հազիվ մի ամիս անց: Որևէ մի հոգևոր առաջնորդ, որ Աստծու կամքով և ժողովրդի ընտրությամբ կոչվել է ծառայելու ժողովրդին, Աստծուն, Եկեղեցուն կամ Հայրենիքին, այդ անձը ով որ էլ լինի, չի կարող ծառայել, եթե չճանաչի ժողովրդին, եթե ժողովրդի զգացումները, ակնկալությունները, սպասումները նա ուղղակի հաղորդականությամբ չիմանա: Եկել եմ ձեզ ճանաչելու, որպեսզի դուք էլ ինձ ճանաչեք և լինենք միասնական գործունեության նոր առաքյալներ մեր ազատ, անկախ Հայրենիքում, որ դարերի երազն է մարմին առել, և ազատ, անկախ պետականության շրջանի մեջ ենք մտել:

Ձեր Շիրակի թեմի պատգամավորները լավ են հիշում, որ երբ Մենք Էջմիածնի Խորանի վրա Մեր ուխտը կատարեցինք, Մեր ժողովրդին ուղղած խոսքի մեջ ասեցինք. Ես ձեզ նման Հայրենիքի հողի վրա չեմ ծնվել, ես արտասահմանում եմ ծնվել, ուրիշ երկրի մեջ եմ ծնվել, բայց Հայրենիքը իմ ընջց է ծնվել, ես չեմ եղել դուրս Հայրենիքից, որովհետև սովորել եմ մեր մայրենի լեզուն, շաղախվել եմ մեր Եկեղեցու կյանքի հետ, իմացել եմ մեր ժողովրդի պատմությունը և օտար երկրի մեջ ծնվելով հանդերձ, Հայաստանը իմ մեջ մի օր բացակա չի եղել: Ատոր համար եկել եմ այսօր, երբ իմ ժողովուրդը ուզեց, ցանկացավ, որ ես այս երկրում ծառայեմ, եկել եմ ձեր կյանքը բաժանելու, կիսելու, ձեզ հետ ապրելու՝ Աստված տա այնքան տարիներ, որքան, որ ինձ վիճակվել է, բայց սրանից հետո ուրիշ ոչ մի երազ չունեմ, բայց Մայր Հայրենիքում, Սուրբ Էջմիածնում մատաղ լինել մեր հայ ժողովրդին:

Այսօր ես ներկաում եմ մեր ժողովրդի մեջ հանդիսավառության մի նոր պահ, հույսի բարձրացում: Եղբայրներ և քույրեր, լավ իմացեք, որ մեր Տերը Հիսուս Քրիստոս, Ինքը ժողովրդի հետ եղավ միշտ, Նա շրջագայեց գյուղերում, քաղաքներում, անցավ փողոցներից, քարոզեց հրապարակներում, մտավ տների մեջ, ծովի մեջ գնաց, լճի վրա նավակից խոսեց, լեռան լանջը բարձրացավ՝ այնտեղից խոսեց և ժողովրդին հետ ապրեց Իր կյանքը: Մենք էլ Նրան հետևելով, ջանալով հետևել, Մեր տկար ուժերով ուզում ենք, որ դուք լավ իմանաք, որ Մենք ձեզ հետ պիտի լինենք միշտ, երբ ձեր կարիքը մեզ կանչի ձեզ ծառայելու:

Սուրբ Էջմիածինը, մեր Մայր Աթոռը, ամբողջ հայության հոգևոր սիրտն է, այն տեղը, ուր Աստված և հայություն իրար հանդիպեցին: Մայր Աթոռում մենք ամեն օր աղոթում ենք ձեզ համար: Ես ուզում եմ, որ երբեմն դուք էլ գաք մեզ այցելության, ինձ առանձին չթողնեք Էջմիածնում, եկե՛ք ուխտավորներ իբրև և ասեք՝ մենք եկել ենք Մարալիկ գյուղից, ուրիշներ ասեն՝ մենք եկել ենք Թալինի շրջանից, ախր Էջմիածինը Էջմիածինցիներին չի պատկանի, ձեր բոլորին կպատկանի, ամբողջ հայության՝ ողջ աշխարհում:

Իմ վերջին խոսքը ուղղում եմ այս մեր մանուկներին. լսո՞ւմ եք ինձ, սիրելի՛ երեխեք: Ես պիտի խնդրեմ ձեր Սրբազանին և նաև ձեր դպրոցի տնօրենին, որ ինձ ուղարկի ձեր աշխատանքի արդյունքը պատկերացնող օրագիրը: Վա՜յ որ ձեզնից մեկը ցած նիշ բերած լինի, վա՜յ ձեզ, հա: Տեսնո՞ւմ եք այս գավազանը, գիտե՞ք որքան ծանր է այս փայտը, սրանով ձեր կրունակներին կտա՞մ: Իսկ եթե դուք ուզեք լավ նիշ բերել, լավ, հաջող լինել, գիտե՞ք ինչ պիտի անեմ՝ էս ոսկու մասով ձեզ պիտի օրհնեմ, ոչ թե պիտի ծեծեմ: Երկրորդ՝ ես մի բան պիտի ասեմ ձեզ, մտիկ արեք, ձեր ծնողները թող չլսեն. ուրեմն, նայեցեք՝ ձեր դասերը լավ սովորեցեք, աղվոր արտասանություններ սովորեցեք, երգեր սովորեցեք, գնացեք տուն՝ ասեք. հայրի՛կ, մայրի՛կ ես հիմա մի արտասանություն պիտի ասեմ ձեզ. աղվոր արտասանեցեք, և նրանց արտերր կկակուղանան, լա՜յն-լա՜յն նրանց գրպանները կբացվեն և ձեզ լա՜վ-լա՜վ նվերներ կտան:

Այս խոսքը հատուկ կերպով ուղղեցի մեր մատղաշ սերնդին, որովհետև, ինչպես ասում էի Սրբազանին, այս այցելությանս առաջին տպավորություններից մեկն այն եղավ, որ ես նոր սերունդի թիվը շատ աճած տեսա կամ չէի տեսել նախապես: Շատ երկրներ գնացել եմ, Եվրոպա գնացել եմ, Ամերիկա գնացել եմ, բայց երեխաների այսպիսի բազմություն չեմ տե-

սել: Ապրե՛ք երեխեք, միշտ այսպես կայտառ եղեք, միշտ ազգի կյանքին մասնակցեցեք: Ես տեսա ձեր եկեղեցին, որ նորոգվում է, էնտեղ պիտի գնա՞ք:

— Այո՛:

— Շարականներ պիտի երգե՞ք:

— Այո՛:

— Այն ատեն ես ալ ձեզ նվեր պիտի ուղարկեմ Էջմիածնից:

Եկեք բոլորս միասին աղոթքին ունկնդիր դառնանք և մեր հոգիները բացենք Աստծուն և խնդրենք ուժ և կարողություն: Ամեն»:

Արթիկի մշակույթի պալատում էլ մեծ անսակնկալ էր սպասում բոլորին: Շենքի նախասրահում Տերունական աղոթքի երգեցողությամբ Վեհափառին դիմավորեցին քաղաքի զոհված ազատամարտիկների որբացյալ երեխաները, ովքեր իրենց թախծոտ, բայց ոչ նվաղուն ձայներով աղոթք էին վերառաքում Երկնավոր Հորը՝ Վեհափառ Հայրապետի արևշատության, Մայր Եկեղեցու կենդանության և վերածաղկման, Հայրենիքի անսասանության, խաղաղության ու բարգավաճման համար, որպեսզի Տիրոջ արքայության, խաղաղության ավուշահոտությունը տարածվի Հայաստան երկրում, Նրա Սուրբ անունը կենդանի կերպով հռչակվի Ավետարանի քարոզությամբ Հայ Եկեղեցու ծիրից ներս, որպեսզի Տիրոջ կամքի մեջ գործելով հայը կարողանա իր սեփական ձեռքերով ու քրտինքով և Աստծո օրհնությամբ վաստակել իր հանապազօրյա հացը հոգու և մարմնի: Այս նախասրահում էլ ծաղիկներ զետեղվեցին Հայաստանի Հանրապետության և Արցախ աշխարհի անդորրը պաշտպանած և հերոսաբար իրենց արյունը հեղած քաջամարտիկների հուշատախտակի առջև, որից հետո կայացավ մտավորականության և ղեկավարության հետ ծրագրված հանդիպումը.

«Ահավասիկ, հարազատ, սիրելի անդամներ Արթիկի շրջանի մեր հայ ժողովրդի պատասխանատու շրջանակների, ահավասիկ այս օրը կյանքումս վերածվեց մի բացառիկ օրվա: Ութերորդ անգամն է, որ ես առավոտից այս կողմ խոսում եմ մեր ժողովրդին և պիտի ասեմ, որ, փառք Աստծու, երբեք, երբեք հոգնություն չեմ զգում: Փառք և գոհություն Աստուծո, որ ինձի տվեց մեր Եկեղեցու ճամփով մեր ազգին և Հայրենիքին ծառայելու պատիվը, մեծ պատիվ է, բայց ծանր պարտականություն: Այսօր, առաջին անգամ լինելով, ես դուրս եկա Մայր Աթոռից՝ Սուրբ Էջմիածնից, որպես թեմական, պաշտոնական, Հովվապետական այցելության և այս առաջին այցելությունը փափագեցա տալ այն շրջանի մեր հայության, որ վերջին տարիներին և հատկապես Դյումրիի կամ Լենինականի երկրաշարժի աղետից վնասված, ազդված ժողովրդի զավակներն են: Եկեղեցին իր կոչումով, Քրիստոսից իրեն տրված կոչումով պետք է լինի այն հաստատությունը, այն շարժումը հոգևոր, որ պիտի գնա այն ժողովրդին, որ ամենից ավելի կարիք ունի: Հիսուս գնաց հիվանդներին, աղքատներին, անկյալներին, մեկ խոսքով նրանց, ովքեր Իրեն պետք ունեին անմիջականորեն: Ես ցանկացա իմ Հովվապետական այցելությունների շարքը սկսել Շիրակա թեմով, որովհետև Շիրակա թեմը մեր ամենից ավելի տուժած թեմերից մեկն է, և ուզեցի մեր ժողովրդին ասել, որ Եկեղեցին Հայոց, Սուրբ Էջմիածին Մայր Աթոռով, գտնվում է Քրիստոսի Եկեղեցու պաշտելության ուղղության մեջ, երբ այսպես գալիս է ձեզ այցելության;

Խորապես գնահատում եմ այն բոլոր աշխատանքները, որ ձեր առաջնորդ Սրբազանը և հոգևորական դասը և մեր աշխարհական պատասխանատու անձերը թեմական խորհուրդ ունենի ներքև, գործակցությամբ և ամբողջական մասնակցությամբ մեր Հայրենի պետական իշխանություններին, ընծայում են մեր ժողովրդին: Ես տեսա արդեն ոգևորության, հոգևոր խանդավառության մի պիր է բարձրացել մեր ժողովրդի մեջ: Եվ, հետևաբար, մենք կգտնվենք անհրաժեշտության առջև, որ Եկեղեցու հոգևոր ուժը, հավատքը կյանքից չվհատվելու, նեղությանց հաղթելու, կյանքի փիլիսոփայությունը, որ Քրիստոսի փիլիսոփայությունն էր, մեր ժողովրդին բաժանվի. «Հաւատք քո կեցուցեն զքեզ»:

Ավետարանական այն մյուս խոսքն էլ, որ, հավատացեք, մինչև այսօր անհավասիկ 50 տարիներ են անցել մոտավորապես, և այդ խոսքը մեր Անթիլիասի Մայր տաճարի բեմից արտասանեց իրեն հատուկ հավատքի ջերմությամբ և հաղորդականությամբ Գարեգին Ս. Հովսեփյան Կաթողիկոսը. ես այն ատեն Գպրեվանքի՝ Հոգևոր Ճեմարանի սան էի, երիտասարդ սարկավագ էի, նա ասեց. «Մի երկնչիր, բայց միայն հաւատա, և տե՛ս,—ասեց,—հիվանդներն առողջանում են, տե՛ս ինչ հրաշքներ են կատարվում աշխարհիս մեջ, տե՛ս,—ասեց,—մեռելներն անգամ հարություն են առնում հավատքով: Այդ հավատքի անկոտրում և մշտազանգ զանգակատունը Սուրբ Էջմիածինն է մեր ողջ հայության համար»: Ես այդ դողանջն եմ բերում ձեզ Պարույր Սևակի հետևողությամբ, դողանջը հույսի, դողանջը սիրո, դողանջը լույսի և վերածնության մեր հայ կյանքի:

Ես արտասահմանից երկար տարիներ շատ մոտից հետևել եմ մեր հայրենի ժողովրդի և Հայրենիքի կյանքի ընթացքին: Հայոց Պատմությունը, մեր անցյալի կյանքը եթե մենք ուզենանք ճշգրիտ կերպով ըմբռնել, պիտի ասենք 1988 թվականից այս կողմ նոր շրջան է, մեր ազգային ինքնագիտակցության, ազգային ազատության և անկախության շարժումի շրջան է: 1988 թվականից առաջ, այս դարում, 1909 թվականից սկսյալ և նույնիսկ կարող ենք ասել 19-րդ դարի վերջին տասնամյակից, սկսյալ 1894—95 թթ. Սասունի, Մուշի, Տարոնի ջարդերից, 1909 թվականի Կիլիկյան արհավիրքից և 1915 թվականի մեր դեմ գործված ցեղասպանության անհավոր եղեռնի՝ ջարդի տարիներից հետո, 20-րդ դարը ցավով, սուգով, անով բացվեց, բայց լույսով է փակվում: Մենք անհավասիկ 1991 թվականին, Ղարաբաղյան շարժումով ծնված այն ոգևորության ալիքի բերումով, երբ հռչակվեցավ Հայաստանի անկախությունը, Սեպտեմբեր 21-ին շրջադարձ կատարվեց մեր կյանքում և՛ այստեղ, և՛ արտասահմանում: Մենք չենք կարող այլևս այնպես մտածել, ինչպես մտածում էինք առաջ: Սեփական պետություն ունեցանք, փառք Աստուծո, մենք մեր համազգային կամքը արտահայտեցինք:

Հիմա ունենք աքանչելի առիթը ձեր կամքով ձեր կյանքը կազմակերպելու: Այս օրը պետք է լինի հայության համար համայնական, միասնական, ամբողջական ազգի և պետության գաղափարով ապրելու պահը: Այլևս մենք չենք կարող թույլ տալ, որ մանր-մունր հաշիվներ՝ դավանաբանական, գաղափարաբանական և ուրիշ տեսակի հաշիվներ խանգարեն մեր կյանքը ազգային, մեր կյանքը պետական, մեր կյանքը Եկեղեցու:

Մենք պետք ունենք համախմբումի: Գիտեք, երբ մի բանակ գտնվի մի ճակատագրական պահի առջև, երբ փողը կհնչի, բոլոր գինվորները կմիանան, համախմբումի պահն է, կգան և կդառնան, բոլոր մատները իրար միացնելով, բռունցք, կաթիլները իրար միացնելով՝ հոսանք, մի խոսքով

կդառնան ոչ անհատների մի գումար, այլ համայնություն, միասնություն: Մի մեծ գիտնական, ֆրանսիացի փիլիսոփա ասել է. «Ազգ ասվածը մի հավաքական հոգի է»: Հավաքական հոգի. ինչպես ես, ինչպես ձեզնից որևէ մեկը առանձին մի աշխարհ է, մի անձ է, այնպես էլ ազգը հավաքական մի անձ է, մի մարմին է: Եթե երբեք մենք թույլ տանք մեզի այդ հավաքական հոգիին մեջ չներդաշնակվելու, մենք կդառնանք իսկապես կազմալույծ ազգ, անիշխանական մի վիճակի մատնված մի այնպիսի ժողովուրդ, որին ես դժվար կասեմ ազգ և պետություն: Պետություն և ազգ գոտին է, որ կկապե ամբողջ մարմինը, ուժի աղբյուր է:

Մեր Եկեղեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գլխավորությամբ պիտի դառնա բարոյական այն ուժը, որ մեր ժողովրդի գավակներին պիտի փոխանցի Քրիստոսի Ավետարանի ճշմարտությունները, այն ճշմարտությունները, որոնցից մեկը ամենից կենսականն է, Հիսուսի բոլո՜ր-բոլո՜ր մյուս ուսուցումները ի մի հավաքող այն սևեռակետն է, առանց որի Ավետարանը չի հասկացվի: Մատթեոսի Ավետարանի Է գլխի 12-րդ համարի մեջ Նազկեղեն կանոն առված մի տող կա. «Ինչ որ ցանկանում ես, որ ուրիշը անի քեզ համար, նույնը արա դու նրա համար»՝ **ուրիշի համար: Ուզո՞ւմ ես մի** մարդ քեզ բամբասի, ուզո՞ւմ ես մի մարդ քեզնից գողանա, ուզո՞ւմ ես մի մարդ քեզ վնասի, ուզո՞ւմ ես մի մարդ քեզ դավաճանի, ուզո՞ւմ ես մի մարդ քեզ սպանի՝ ո՛չ: Ինչ որ չես ուզում, որ ուրիշը անի քեզ համար, դու մի արա նրա համար:

Ազգի ուժը որտե՞ղ կկայանա, իր դրամի՞ մեջ, իր զենքի՞՝ ո՛չ: Իր բարոյական, իր գիտակցական, մարդկային, հոգևոր ըմբռնումին մեջն է ինքն իրեն ճանաչելու, «Ծանիր զքեզ»-ը գիտնալու մեջն է: Տվե՛ք դրամ մի հիմար տղի՝ կերթա և կմսխի, դրամը չէ ուժը՝ մարդն է և՛ բանդողը և՛ շինողը: Տվեք զենքը մի հիմարի ձեռքը՝ ոճրագործ կդառնա, բայց տվեք նույն զենքը Հայրենիքի, ազգի պաշտպանության գաղափարով ապրող քաջ-մարտիկին՝ հերոս կդառնա: Հետևաբար մարդն է կարևորը, ազգի մեջ բարոյական ըմբռնումն է կարևորը:

Եկեղեցին ամեն տեղ մեր բոլոր հոգևորականներով պետք է դառնա շարժուն և շարժող ուժ ժողովրդի կյանքը բարձրացնելու բարոյականորեն, որպեսզի մեր պետությունը և մեր ազգը զորանան, մեր Հայրենիքը ամրանա և բարգավաճի: Այս շրջանը հոգևոր գինվորագման շրջան է, գինվորական այլ պատասխանատվությունների կողքին, որի պատասխանատուն մեր պետությունն է, և մենք հարգում ենք մեր պետությանը: Բայց մեր գործը իբրև Եկեղեցի հետևյալն է. հոգով գինել մեր ժողովուրդը, նրա արժանապատվությունը արթնցնել: «Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց»՝ վարդանին նվիրված շարականի հեղինակ Ներսես Շնորհալի Հայրապետը գրել է զորագլուխ ոչ թե գինվորների, ասկյար ասված գինվորների, այլ պաշտպան գինվորների՝ զորագլուխ առաքինյաց՝ առաքինի մարդոց զորագլուխն է վարդանը, ոչ թե դրամով գործող վարձկան գինվորների: Եթե հոգիի զենքերով վարդան վառված չլիներ, մենք Ավարայրի ճակատամարտը, վարդանանց հերոսամարտը չէինք ունենա: Եթե հոգիի զենքերով գինված չլիներ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսեի մեր հայ տղաքը, եթե իր վեղարը գլխից հանելով Գարեգին Հովսեփյանը չմտներ գնդակների տեղատարափի տակ, «Խփե՛ք տղերք վասն հայրենյաց» չասեր, մենք ինչպե՞ս կկարողանայինք ունենալ Սարդարապատի հերոսամարտը:

Բարեկամնե՛ր, արթնանաք, վերստին մենք զմեզ դիտենք, արժևորենք, քննենք, սրբագրենք: Մենք պետք ունենք ներքին, հոգեկան ջրդեղումի, բյուրեղացումի՝ առանց դրա ոչ մեկ ուրիշ ուժ կարող է մեզ փրկել: Ահավասիկ իմ առաջին պատգամը ձեզի: Դուք այստեղ Արթիկի շրջանում և Շիրակա ամբողջ թեմում, դուք, որ տառապանք տեսաք, դուք, որ երկրաշարժի աղետին արհավիրքները տեսաք՝ Մենք ալ այն ատեն եկանք, եկանք և ինչ որ կարող էինք անել Մեր երջանկահիշատակ և ամենասիրելի վազգեն Ա. Կաթողիկոսին հետ, ջանացինք անել այն քրիստոնեական հավատքով, որ մեզ կներշնչի չվհատիլ, չհուսահատիլ: Եվ երբ որ ես Լենինականի աղետի ժամանակ գնացի Լենինական և 10-րդ օրն էր՝ 14 դեկտեմբերին, եկա և այնտեղ գնացի, վերադարձիս Անթիլիասի Մայրավանքում մի քարոզ տվի և երեկ գիշեր այդ քարոզը, ահավասիկ յոթը տարի ետքը վերստին կարդացի: Այնտեղ մի խոսք եմ ասել՝ մոռացել էի, հիմա կրկնում եմ. հայություն և հուսահատություն չեն կրնար իրար հետ հաշտվիլ՝ հայություն և հուսահատություն:

Մենք շատ ավելի ծանր աղետներ ենք տեսել՝ չենք հուսահատվել: 641 թվականին, երբ արաբական արշավանքը կատարվեց, Դվին քաղաքը տակնուվրա եղավ, կործանվեց: Եվ Կաթողիկոսին համար գրվել է, որ դարձավ մեռելաթաղ՝ 30.000 հայ թաղեց այն ատեն, բայց ետիից ապրեցինք: Չեմ ուզում երկարել. վերջինը ցեղասպանություն է՝ երևակայեցեք մեկ ու կես միլիոն հայ ջարդվի, իրենց տներից դուրս պոկվեն, արմատախիլ լինեն և անապատ գնան՝ ավազների մեջ, արևի ներքև, առանց անունդի և շատերը մաշելով, կմախանալով մահանան: Իմ հայրն ու մայրը նրանցից են, ովքեր ազատվել են և պատմել են ինձ, թե ինչ տառապանքի միջից են ապրել, բայց ապրել են, որովհետև կամք են ունեցել, հավատք են ունեցել, տեսիլք են ունեցել, ապագայի նկատմամբ ձգտում են ունեցել: Հուսահատական վիճակը, ողբական վիճակը, տեսակ մը դժգոհանքի վիճակը մենք այլևս պետք չէ հանդուրժենք: Մենք այսօր ապրող հայեր ենք նոր Հայրենիքի մեջ, ազատ ու անկախ Հայրենիքի մեջ: Մենք պարտք ունենք կատարելիք՝ կատարի՛ր պարտքդ, որպեսզի մեծանաս Աստծու աչքին:

Նայեք մեր պատմությանը: Երանի, Սրբազան եղբայրներ, մենք մի աշխատանք տանենք, որ այդ օրերին մեր հայ եղբայրների կրած տառապանքները մեր Հայաստանյան ժողովրդին իմանալի դառնան, ծանոթանան: Երևակայեցեք հարյուր հազարներով հայեր անտվեցին Լիբանանի և Սիրիայի ծովի ափերը: Միայն իրենց հագուստներն ունեին իրենց հետ, Կիլիկիայից, Արևմտյան Հայաստանից ոչինչ կարող էին տանել: Ես հարց եմ տալիս. էս հարյուր հազարավոր հայերը ինչպե՞ս ապրեցին այդ երկրներում, որ գնացին ո՛չ արաբերեն լեզուն գիտեին, ո՛չ ֆրանսերեն լեզուն գիտեին, ո՛չ էլ կյանքի ձևերին վարժված էին, և ցնցոտիներով հասան այնտեղ: Թիթեղածածկ տների տակ, ցեխոտ (ես տեսել եմ այդ բոլորը) ապրեցին: Մի հայ գրող երեք հատորներ է գրել, ես հրատարակեցի այդ երեք հատորները՝ «Որբը տուն շինեց» վերնագրով: Ինքը որբ է եղել, ինքը պատմում է, թե ինչպես որբերը ոչնչից կյանք հանեցին:

Նրանք կամաց-կամաց թողեցին թիթեղաշեն տները միայն ու միայն իրենց ձեռքի վաստակով, իրենց ճակատի քրտինքով՝ ո՛չ մի օգնություն, ո՛չ մի տեղից: Սա մեծ նշանակություն ունի: Երևակայեցեք միայն Լիբանանի ծովափին, 20—30 կիլոմետր տարածության վրա, ութ հայ որբանոցներ կային՝

6544 որբերով, 130.000 որբեր կային առանց հոր և առանց մոր: Համաշխարհային առաջին պատերազմից հետո մենք ինչպե՞ս ապրեցինք: Ապրեցինք քրիստոնեական հավատքով և ազգային, հայկական արժանապատվության գիտակցությամբ: Մենք ընկճվելիք ազգ չենք, ահավասիկ տոնելու ենք մեր Եկեղեցու 1700-ամյակը: Հարց եմ տալիս ձեզ, աշխարհումս կգտնվի՞ ուրիշ մի ազգ, որ կարողանա 1700-ամյակ տոնել իր Եկեղեցու մեջ՝ չի՛ կարող, բայց ախր մի՛ հպարտանաք դուք դրանով, կատարե՛նք մեր հիմիկվան պարտքը՝ այսինքն, Եկեղեցին աշխուժացնենք, Եկեղեցին մեր կյանքի մեջ ներկա դարձնենք և ոչ թե ասենք՝ մենք առաջին ազգն ենք եղել աշխարհումս: Եղել ենք, հասկացա, բայց ե՞նք այսօր՝ դա՛ է նշանակություն ունեցողը: Այսօր ի՞նչ ենք, եթե երբեք Մարալիկի եկեղեցին պիտի մնա կիսավարտ, եթե մյուս եկեղեցիները պիտի չկարողանանք շինել, հապա որտե՞ղ է մեր քրիստոնեությունը, ի՞նչի համար ենք մենք հպարտանում:

Եղբայրներ, ժամն է գործի՝ ոչ խոսքի, ամեն մարդ խոսում է: Եթե ուզում ես, որ քո հավատացած ճշմարտությանը ուրիշներն էլ հավատան, գործի՛ր, մի խոսիր, թող գործդ լինի խոսք: Մեր հայրերի խոսքը որտե՞ղ է՝ նրանց շինած եկեղեցիները, նրանց հորինած երաժշտությունը, նրանց մշակած գրականությունը, նրանց կերտած պատմությունը: Հետևաբար, մենք այսօր կոչված ենք նոր Հայրենիքում, Հայրենի ազատ, անկախ պետության այս շրջանում զոհողությամբ, աշխատանքի, կարգապահության, միասնության, ամբողջական ազգի գաղափարով լծվել գործի: Այս է իմ առաջին պատգամը ձեզի: Եվ Էջմիածինը, որ համազանգումն է բոլոր հայության հոգևոր ապրումների, այս պատգամն է փոխանցում ձեզ: Այս պատգամն եմ փոխանցում ձեզ, եղբայրներ և քույրեր, 130 այն Կաթողիկոսների անունով, որոնք ինձնից առաջ նստել են այդ Գահի վրա: Նրանց պատգամը ես հավաքել եմ այսօր իմ տկար անձի մեջ և բաշխում եմ ձեզ:

Զորացեք հոգով, տեր եղեք ձեր հայրենի հողին: Մեր թշնամիներին մի անգամ ևս ծիծաղել չտանք մեզ վրա, թող ամաչեն մեր միությամբ և ոչ թե հրճվեն մեր պառակտությամբ, թող ամաչեն մեր շինարարությամբ և ոչ թե ծիծաղեն մեզ վրա լքվածության, թոշակության, աշխատանքի հանդեպ մեր անտարբերության պատճառով: Աշխատանքն է մարդու ճակտին գիրը: Աստվածաշունչին մեջ Աստված երբ ուզեց նույնիսկ Ադամին՝ նախամարդուն անիծել, նրան ասաց՝ օնա, ճակտի քրտինքովդ հացդ շահիր: Դա օրհնություն է: Ասոր համար մենք պիտի այնպես անենք, որ Հայրենիքը հայի ձեռքով, հայորեն, հայու ապագային համար պիտի վերաշինենք ու եկեղեցին ձեր բոլորի սպասավորության մեջն է: Եկե՛ք, բոլորդ միացեք, եկե՛ք, բոլորդ ներդաշնակվեցեք:

Մերվենք, բոլորս ներդաշնակվենք այդ մի անուն հայության հետ, որ **չունի երկու անուն, չունի երկու արյուն, չունի երկու դիմագիծ՝ մեկ Հայրենիք, մեկ Եկեղեցի և մեկ ազգ ապրեք և հազար կապրեք, եթե այսպես ապրեք: Ամեն»:**

Վեհափառ Հայրապետը պատգամեց ապրել քրիստոնյային վայել Աստվածային հույսով, վանելով հուսահատության ընկճվածության և ճնշված ազգ լինելու հոգեբանությունը, և լծվել միայն ու միայն աշխատանքի, գործի՝ ի փառս Աստուծո, ի բարօրություն ժողովրդյան, այնուհետև ընդառաջ դուրս եկավ պալատի հրապարակում անհամբերությամբ սպասող ժողովրդական բազմությանը.

«Հավատարիմ և հավատացյալ հայ ժողովրդի զավակներ,

Ես ամենայն սիրով ողջունում եմ ձեզ բոլորիդ այս առաջին այցելության առիթով՝ իբրև հորընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց: Գալիս եմ Սուրբ Էջմիածնից, բայց Էջմիածինը միշտ ձեր մեջն է լինելու, Էջմիածինը մի աշխարհագրական վայր չէ, Էջմիածինը հոգի է, խորհուրդ է, գաղափար է, հավատք է, և նրա թարգմանն եմ ես և ոչ թե ուրիշ մի արժանիք ունեցող անձ: Ես ցանկանում եմ ձեր բոլորի համար, որ մենք այսպես տոկուն, առողջ և հայորեն, հայու արժանապատվության վայել կերպով տանիք ձեր կյանքը:

Եղբայրներ և քույրեր, ես արտասահմանից եմ գալիս, արտասահմանում օտար ազգերի եմ ճանաչում, օտարը մեզի հարկ չի տար, արժեք չի տար, եթե մենք իրար արժեք չտանք, եթե մենք միասնական ձևով չլինենք: Ահավասիկ նոր Հայրենիք, անկախ պետություն ունենք, երազում էինք ազատ-անկախ Հայաստանը՝ ունեցանք, արժեցնենք, Աստծուն ասենք՝ փառք Քեզ Աստված, որ այսօրվան բերեցիր մեզ, և անկախության օրը մենք ողջունեցինք, լինենք արժանի այդ բոլորին:

Երկրորդ՝ ես ուզում եմ ձեզ ասել նաև, որ բոլորդ էլ այն գիտակցությամբ առաջ տանեք ձեր կյանքը, որ մեր Եկեղեցին դառնա ձեր կյանքում ներկա մի գաղափար, մի հավատք: Հավատքով ապրեք, այդ հավատքն է մեզ ապրեցրել, և Էջմիածինը՝ մեր եկեղեցին, այդ հավատքի զանգակի ժամկոչն է: Մենք այդ հավատքի չվանն ենք շարժում, հավատքն է հնչում և ղողանջում ձեր բոլորի կյանքի մեջ, ապրեք, ա՛յդ հավատքով ապրեք»:

Այս բազմության ուղեկցությամբ էլ Վեհափառն առաջնորդվեց դեպի Արթիկի Է դարի Սուրբ Գևորգ եկեղեցի, որը ցավոք այսօր խոնարհված, գլխահակ վիճակում է, սակայն իր հովանավոր Սուրբի աջաբազուկի հովանավորությամբ պիտի վեր ալանա՝ դիմագրավելու և հաղթելու ապագայի սպասվելիք բոլոր հարձակումները «երևելի և աներևոյթ թշնամեաց»:

«Արթիկի շրջանի հայ ժողովրդի հավատավոր զավակներ,

Ես խորապես երջանիկ եմ զգում, որ այսօր, իմ առաջին Հովվապետական այցելության ընթացքում, երբ դուրս եմ գալիս Սուրբ Էջմիածնից և ժողովրդի մեջն եմ մտնում, իմ ցանկությունն էր՝ ճանաչել ժողովրդին և ճանաչվել ժողովրդի կողմից: Այս առաջին մեր հանդիպումն է և առաջին հանդիպումը ուզում եմ, որ լինի աղոթքի հանդիպում:

Ես ձեր եկեղեցին տեսա և այս շրջանի պատասխանատու անձերի հետ երկարորեն խոսեցա: Այս եկեղեցին չի կարելի կիսավարտ թողնել: Հիմա հարցում մը անեմ՝ գնացեք ձեր բարեկամներին էլ ասեք, եթե մեր հայրերը այսքանը չհնել են այն դժվար օրերին, մենք ինչո՞ւ չպիտի ամբողջացնենք այն: Հարց եմ տալիս ձեզ՝ եթե նրանք կարող էին, մի՞թե նրանք մեքենա ունեին, մի՞թե նրանք էլեկտրականություն ունեի՞ն, մի՞թե նրանք գործնական տեխնիկ դյուրություններ ունեին, բայց հավատքով արեցին, և ճշմարտությունը այն է, որ արժանապատվության հարց կար: Օտարը գա և տեսնի, որ մենք այս եկեղեցին դուրս շարունակ թողել ենք այսպես կիսավարտ՝ մեր պատվին, մեր արժանապատվության դա մենք կվայելեցնե՞նք, ես չեմ պատկերացնում: Հավատացե՛ք, եթե ժամանակ ունենամ, կգամ ես, աշխատանքի մեջ կմտնեմ, շաղախ կընեմ և կաշխատեմ: Գիտե՞ք, Էջմիածինն ինչպես է շինվել՝ Գրիգոր Լուսավորիչը առել է չափը, Տրդատ թագավորը

Մասիս լեռն է գնացել և ուսերի վրա ժայռեր է դրել և քարերը բերել է Էջմիածին, Աշխեն թագուհին, Խոսրովիդուխտ արքայադուստրը՝ Տրդատի քույրը, իրենց բեհեզյա սքանչելի հագուստները գոգնոցի են վերածել և հող են թափել հիմքերի մեջ: Բացեք Ագաթանգեղոսը և կարդացեք: Ես պիտի գամ մի ուրիշ անգամ ձեր Սրբազանին հետ, ձեր հոգևորականների հետ, ձեր պատասխանատու ազգայինների հետ, պետք է մենք չթողնենք, որ եկեղեցին երկնքին բաց մնա այսպես, և Աստված նայի և ասի. Ինձ համար մի եկեղեցի չե՞ք կարող շինել: Ամո՛թ է մեզ: Աստված ձեզ ուժ տա գործելու: Ամեն»:

Գյումրի հասնելուց առաջ օրվա այցելությունների վերջին հանգրվանը Հառիճ գյուղն էր՝ իր հոչակավոր Հառիճա Սուրբ Աստվածածին վանքով, որի պատերը ներծծված լինելով մեր սուրբ հայրերի աղոթքներով ու Ավետարանական պատգամներով, շարականների և սրբազան Պատարագի անմահացնող հրաշայլքով, այսօր պիտի այդ ամենին միացներ ու շաղախեր Ամենայն Հայոց ներընտիր Հայրապետի օրհնությունն ու հորդորը՝ որպես խոսք վերստին նորոգման ու կենսագործունեության: Ջորաբերանին ոտքը ամրությամբ հենած Հառիճա վանքը իր հաստաբետ պարիսպներով վկայություն է մեր հայրերի հավատքի կենդանության, Աստուծո Հոգով ու շնչով ապրելու երևանության, որ **«ո՞ իցէ որ յաղթիցէ աշխարհի, եթէ ոչ՝ որ հաւատայցէ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ»:**

Ինչպես Երուսաղեմում ժողովրդի բազմության ուղեկցությամբ, օրհնաբանությամբ և փառաբանությամբ մուտք էր գործում Հիսուս Քրիստոս, այնպես էլ Հայ Եկեղեցու առաջին և գերագույն սպասավորը իրեն վստահված հոտի ուրախության ողջույններով առաջնորդում էր նրան դեպի Հառիճա վանք, որի տակավին չսրբագործված, բայց սրբազան Խորանից էլ հնչեց Վեհափառի կոչը առ ժողովուրդն Հայոց.

«Հավատացյալ զավակներ մեր Եկեղեցու և հավատարիմ քաղաքացիներ մեր Հայրենիքի,

Այս օրս իմ կյանքի մեջ և նաև ինձ ընկերակցող սրբազանների և նաև մեր պետական, քաղաքային իշխանությունների համար աննախընթաց օր է: Երբեք չէ պատահել 43 տարիների իմ հոգևորական կյանքում, որ մի օրվա մեջ այսքան մարդ տեսնեմ, այսքան աղոթք անեմ, այսքան ներտանջամ, մտերմանամ իմ ժողովրդի հավատքի և հոգու վկայությունների հետ:

Առավոտյան ժամը ինն և կեսից մինչև այս պահը գրեթե ոչ մի վայրկյան չեմ ունեցել հանգիստ անելու, բայց եթե հանգիստ անեի, այդ ինձ անհանգիստ արած պիտի լիներ, որովհետև չէի կարող մեր ժողովրդի այս սրտամոտ ընդառաջումը Եկեղեցու հանդեպ, այս բոլորը նկատի չունենալ, և ասեմ ձեզ պարզ խոսքով, ես այսօր ձեր հավատքով զորացա, ձեր հավատքով բյուրեղացա, որովհետև քրիստոնեական հավատքը մարդկանց, անձերի, մարդկային էակների կյանքի միջից կարտահայտվե և ոչ թե թուղթի վրա և կամ գրավոր ձևով կամ խոսքի ճամփով: Ձեր հավատքի մեջ հավատարմությունը և՛ հուզիչ է, և՛ քաջալերիչ միանգամայն:

Այս պահուն Էնճիճևական կամ Գյումրի հասնելուց առաջ վերջին հանգրվանն է օրվա իմ այցելությունների: Ես փառք եմ տալիս Աստծուն, որ ինձ շնորհեց Հառիճա վանքում լինել և այս վանքի պատերի ներսում խոսել ձեզ: Հիսուս մի օր, երբ իրեն մոտեցող ժողովրդին և երեխաներին առաք-

յալները հեռացնում էին, ասաց. «Թողեք, որ գան, եթե նրանք լռեն, քարերը կխոսեն», և քարերը այստեղ խոսում են: Ես հարց եմ տալիս՝ դուք էլ մտածեք մի պահ, ինչպե՞ս, ի՞նչ ուժով, ի՞նչ տեխնիկական միջոցներով մեր հայրերը այս եկեղեցին կառուցեցին: Հավատքով, եթե հավատք չլիներ, էս հրաշալի գեղեցկությունը որտեղի՞ց կլիներ, և հետևաբար, այդ հավատքի ուժը անցյալի հարց չէ, այդ հավատքի ուժը այսօրվա հարց է, մեզ համար արժեք ունի: Հավատքը անցյալին չի պատկանում, հավատքը այսօր էլ մենք պետք է արտահայտենք, վաղն էլ: Հավատքը ժամանակ չի ճանաչում, և դրա համար ես ուզում եմ, որ բոլոր Շիրակա թեմի զավակները, ձեր Սրբազան հոր առաջնորդությամբ, ձեր հոգևորականների ծառայությամբ շենացնեն հավատքի կյանքը այս թեմում և, հատկապես, Հառիճա այս շրջանում:

Ի խորոց սրտի, հանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ողջունում եմ ձեզ բոլորիդ: Էջմիածինը, երբեք վաղաշրջապատի մեջ մի շենք չէ, Էջմիածինը հավատքի աղբյուր է, որ բխում է և այսօր ես լինելով 131-րդ Գահակալը, իմ ընտրությունից մեկ ամիս ետքը գալով ձեզի, ուզում եմ ասել, որ Էջմիածինը ծառայության կոչված հոգևոր գերագույն կենտրոնն է մեր երկրում, պետք է հաղորդ լինենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, որ նրա հավատքով զորանանք: Այնտեղ մենք ամեն օր աղոթում ենք Մայր տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առաջ: Ես ուրիշ առիթներով էլ մտածած եմ, եթե Աստված ինձ կյանք տա, պիտի գամ և պիտի մնամ այս վանքի մեջ, մի գիշեր պիտի անցկացնեմ այս վանքի մեջ: Այս վանքի շունչը իմ մեջս պետք է խառնվե, ինչպես որ ձեր կյանքի մեջ է խառնվել: Բայց հրավիրում եմ ձեզ, դո՛ւք էլ եկեք Էջմիածին, եկե՛ք, ուխտի եկե՛ք և այնտեղ զորացեք մեր սուրբ հայրերի հավատքով: Հետևաբար, թող այս այցելությունը որպես մեր հայրական սիրո արտահայտություն լինի բոլորիդ համար, վերանորոգության առիթ՝ այսինքն, հոգևոր վերազարթոնքի առիթ: Թող Աստված ձեր ոխտը կատարի և ձեր հավատքը զորացնի, որպեսզի մեր նոր Հայրենիքում՝ ազատ-անկախ պետության մեջ կարենանք Աստծուց խնդրել՝ փառք Քեզ, Տեր, անկախություն տվիր մեզ, մենք երախտապարտ ենք Քեզ, մեր Եկեղեցին պիտի շենացնենք, մեր Հայրենիքը պիտի վերաշինենք: Աստված թող օրհնի բոլորիդ»:

Հառիճ-Գյումրի ճանապարհին տեղի ունեցավ մեկ չնախատեսված հանդիպում Փանիկ գյուղի կաթողիկե հայերի հետ, որոնք իրենց կրծքի տակ դեռևս կենդանի են պահում Մայր Եկեղեցու ներկայությունը, որի վկայությունն էր այս սրտաճույզ հանդիպումը երեխաների «Կեցցե՛ Վեհափառը» հոգեբուխ բացականչություններով, ովքեր արյան կանչի ներքին զգացողությամբ հասկանում և զգում էին, որ հանդիպել են իրենց հարազատ Հոլը, ում միջոցով տեսնում և միախառնվում էին հարազատ Մոր՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ հայորդյաց Ընդհանրական Տան հետ, ում Հայրական խոսքին սրտի թրթիռով ապասել էին երկար ժամանակ, և այսօր այդ իղձը իրականացած ու առարկայացած էր նրանց համար:

«Սիրելի հոգևոր եղբայրներ և հավատացյալ հայորդիներ,

Այսօր իմ առաջին Հովվապետական այցելության առիթով ես կողջունեմ Փանիկ գյուղի մեջ մեր սիրելի կաթողիկե հայ համայնքի անդամները և շնորհակալություն ու գնահատանք կհայտնեմ Հայր Կոմիտասին՝ կատարած ուղերձին համար, իր անկեղծ զգացումներուն և հարգալից վերաբե-

րումին համար հանդեպ մեր Առաքելական Հայաստանյայց Մայր Եկեղեցվո: Այսօր ես ձեզ կողջունեմ որպես նույն ազգի զավակներ, նույն հավատքի ձեր հոգիներուն մեջ կրողները, և Մենք հայրական քաղցրագույն սիրով կողջունենք ձեզ բոլորդ, և ինչ որ ըսինք մեր ժողովուրդին, նույնը կըսենք նաև ձեզի:

Պատմական և վճռական օրերու մեջեն կանցնի ողջ հայությունը, Մայր Հայրենիքի և Սփյուռքի մեջ կգտնվի ապագայի իր լինելության կարևոր մեկ հանգրվանին: Այսօր մեր երկիրը՝ մեր Հայրենիքը ազատ անկախ պետականություն դարձած է: Սա վճռական դեպք է, սա շրջադարձային նշանակություն ունեցող հանգրվան է մեր ազգի պատմության մեջ: Պետության ստեղծումը և ընդհանուր աշխարհի մեջ հայության պահպանության հրամայականը միության, ամբողջական ազգ, մեկ ազգի գաղափարի շուրջը պիտի համախմբե բոլորս անխտիր: Գաղափարաբանական կամ դավանաբանական տարբերությունները երբեք պետք չէ ըլլան իրար միջև վեճի նյութ, այլ պետք է մենք բոլորս համախմբվինք մեկ քրիստոնեական հավատքի և մեկ ազգության տիրապետող կամարակապ ձևով մեզ բոլորիս ընդգրկող ազգության մեջ, որ հայ ազգն է և Հայ Եկեղեցին:

Ես սրտանց կաղոթեմ առ Աստված, որ ձեզի տա հավատքի զորացում, առավել ևվիրում և մեր Հայրենիքի և Եկեղեցվո բոլոր գործունեությանց մեջ ձեր ամբողջական և անվերապահ մասնակցությունը: Կշնորհավորեմ ձեզ և իմ եղբայրական սիրո ողջույնը այս եկեղեցիեն կուղղեմ նաև Ամենապատիվ Տեր Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյան Պատրիարքին, որուն հետ մենք եղբայրական հարաբերություններ ունեցած ենք առաջին իսկ օրեն, և թող ինքն էլ մնա առողջ և մնա իր ծառայության մեջ միշտ առատաբեր, պտղաբեր՝ վասն փառացն Աստուծո և վասն շինության Եկեղեցվույս և վասն ամրության ու բարգավաճմանն ազգիս և Հայրենիքիս ու Պետության Հայոց: Աստված օրհնե ձեզ բոլորդ: Ամեն»:

Այս չկանխատեսված հանդիպումից հետո, շարապյուն-թափորը շարժվեց դեպի օրվա, Վեհափառի բնութագրմամբ՝ Ծիրակի օրվա վերջին կայան: Առջևում Գյումրին էր:

1988 թվականի աղետից և նրա հետևանքներից դժվարությունների ու ծանրության ներքև կորացած ամբողջ Ծիրակ աշխարհը, գլուխ ունենալով դաշտավայրի հարսը՝ Գյումրին, Վեհափառ Հայրապետի այցելությամբ նոր կյանքի ու հարության լիցք էր ստացել, Աստուծո հետ հանդիպելու և ապրելու իրականություն ու ճշմարտություն էր կենդանացել ժողովրդի հոգում:

Թեև ժամը շատ ուշ էր, բայց գյումրեցիները քաղաքի ապահմանագծում մեծ բազմությամբ, երկար ժամեր սպասելով աղ ու հացով, ավանդական զուռնայի ու դհոլի հնչումով, պարերի գուպարով դիմավորեցին իրենց հոգու առաջնորդին՝ Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյանին, բայց վաղաժամոթ ու քաջածանոթ Հայրապետին: Ոգևորության այս ալիքն ու շղթան ձգվում էր մինչև քաղաքի սիրտը՝ Յոթվերք Սուրբ Աստվածածին եկեղեցի, որի առջևի հրապարակում խոնված հավատացյալներին, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր անդրանիկ Հայրապետական պատգամը տվեց՝ ասելով.

«Թանկագին հավատացյալներ Հայաստանյայց Եկեղեցվո, զավակներ Հայոց ազգի և բնակիչներ Գյումրի քաղաքի,

Այս օրը և վաղը, շաբաթ օրը, մինչև կիրակի կեսօր, իմ կյանքի և կենսագրության մեջ կգրվի որպես Գյումրիի, Շիրակի օր: Այս իմ գահակալությունը որքան կտևի, ես չգիտեմ, Աստված գիտե, բայց այնքան, որքան ես զգում եմ, ո զում եմ ձեզ էլ վստահացնել, որ ցանկանալով ցանկանում էի գալ Գյումրի և հազիվ ավարտվեց առաջին ամիսը իմ գահակալության, ես ցանկացա գալ այստեղ՝ Շիրակի թեմ, այցելել, ձեր ժրաջան առաջնորդ Սրբազանի հրավերով և նաև բարյացակամ մասնակցությամբ այս շրջանի նահանգապետին՝ մեր սիրելի Անդրանիկ Քոչարյանին: Եվ պետություն ու Եկեղեցի եթե միասին լինեն այսպես, ես կհավատամ, որ հրաշքներ կգործվեն:

Ուզում եմ նաև ավելացնել, որ Եկեղեցին իր առաջին մտահոգություններից մեկը նկատում է այն ժողովրդին ծառայել, որ ամենից շատ կարիքը ունի: Դո՛ւք եք, որ ամենից շատ տառապեցիք 1988 թվականի երկրաշարժից, և Եկեղեցին պետք է, որ իր կարիքավոր զավակների հանդեպ հայտնե իր սերը, իր հոգածությունը, և խորհրդանշական ձևով, որպես առաջին թեմ ընտրվիլը Շիրակի՝ Եկեղեցու հանդեպ ժողովրդի իր պարտականության գիտակցության զորացումն է մեր Հայրենիքի մեջ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ: Եկել եմ ձեզ հետ լինելու: Ես չեմ եղել Կաթողիկոս Ամենայն Հայոց Էջմիածնի մեջ նստելու համար: Նստելը իմ հոգեխառնությանը հաշտ չի, շարժվելն է ինձ հարազատ:

Առաջին անգամ, երբ դուրս եկա Էջմիածնից՝ այդ եղավ Շիրակի թեմը և Գյումրին, և վստահեցնում եմ ձեզ, որ որքան Աստված ինձ կյանք տա և կարողություն, իմ գերագույն ճիգերը չեմ խնայի ձեր թեմի բարգավաճման, ձեր վերքերի դարմանման և ձեր կյանքի պայմանների առաջադիմական ձևով վերականգնման կամ բարելավման կամ բնականոնացման համար:

Երկրորդ՝ այն ատեն, երբ եկա այստեղ, լաց էր չորս դին, ավեր կար չորս դին, դագաղների դեզը իմ աչքերիցս երբեք չի հեռանա: Ցավ էր, կըսկիծ, մորմոք բոլորի սրտերում: Բայց այդ թվականից այս կողմ փոխվեց ողջ հայության կյանքը և՛ Հայրենիքում, և՛ Արցախում, և՛ արտասահմանում: Դարե՜ր, դարե՜ր հայ ժողովուրդը երազել էր իր սեփական կամքի արտահայտությունը ունենալ, իր սեփական հողի վրա: Եվ ստեղծվեց Հայաստանի անկախ պետությունը: Մեր երազներին, գերագույն իղձերին Աստված մարմին հագցրեց և անմիջապես, ես եկել եմ և ձեր դեմքերի վրա (հակառակ, որ արև չկա) ես արևն եմ տեսնում, ժպիտ եմ տեսնում: Մի ասեք, որ ես չեմ ճանչնար կյանքը այստեղ, ճիշտ է, դժվար, շատ դժվար պայմանների միջից եք անցնում, բայց Եկեղեցին քրիստոնեական հավատքի իր քարոզությամբ ձեզ ասում է՝ եթե քրիստոնյա եք, եթե հայ եք, չեք կարող հաշտվել պատվածության հոգեբանության հետ, չեք կարող ընկրկել, չեք կարող նահանջել, չեք կարող հուսահատվել: 1988 թվականի դեկտեմբերի 15-ին այստեղ ամբողջ ցավը տեսնելուց հետո, երբ վերադարձա Սեբաստիա՝ Կիլիկիո Կաթողիկոսության հոգևոր կենտրոն, այնտեղ մի քարոզ տվեցի Մայր տաճարից և հետևյալ բառերը գործածեցի այդ քարոզի մեջ. «Հայություն և հուսահատություն չեն կարող իրար հետ հաշտվել»: Մեր ամբողջ պատմությունը ես գիտեմ՝ մենք երեկ չծնվեցինք, որ վաղը գնանք: Դարե՜րն են խոսում, հազարամյակներն են խոսում մեր ազգի միջից:

Հարց եմ տալիս ձեզ բոլորիդ, ինչպե՞ս ապրեցինք մենք Լենինականի կամ Գյումրիի աճյունոր աղետից շատ ավելի ծանր, ողբերգական դեպքերից հետո: Մեր պատմությունը ի՞նչ ձևով շարունակվեց երկնել և փա-

ռավորապես ստեղծագործականորեն կերտվել: Հավա՛տք, «հաւատք քո կեցուցեն զքեզ»: Նա, որ Աստծուն կհավատա, ևա, որ Քրիստոսին կհավատա, չի կարող հուսահատվել, չի կարող տրտունջով ապրել, չի կարող դժգոհությամբ ապրել, այլ հաստատական կամքով, աշխատանքի մղումով, զոհողության գաղափարով մեր ազգը ապրել է միշտ և այսօր էլ պիտի ապրի:

Չեմ ուզում ընդհանուր խոսք ասել բարեկամներ, եղբայրներ, քույրեր, զավակներ, ես ձեզ պիտի տամ օրհնակը: Երբ 1915 թվականի ցեղասպանությունը կատարվեց և մեկ և կես միլիոն հայեր՝ ձեր եղբայրները՝ նույն արյունը, նույն աճումը կրող, երբ Դեր-Զորի անապատում և ուրիշ վայրերում հողին հանձնվեցին, երբ Արևմտյան Հայաստանի մնացյալ ամբողջ հայությունը արմատախիլ եղավ իր հողերից, իր տներից, իր շեներից, իր քաղաքներից և դուրս շպրտվեց՝ աշխարհով մեկ ցրվեց, ինչպե՞ս կարողացանք մենք վերապրել: Ձեր եղբայրները և քույրերը երբ թողեցին իրենց Հայրենիքը պարտադրաբար՝ մեր թշնամու կողմից գործադրված ցեղասպանության հետևանքով, ոչ թե իրենց կամքով, և գնացին Սիրիա, Լիբանան և այլուր, ի՞նչ ունեին իրենց հետ, ի՞նչ տարան իրենց հետ՝ ցնցոտիներ էին իրենց հագուստները: Իմ հայրը, իմ մայրը անապատի ավազների միջից վերապրեցին և ինձ կյանք տվեցին, բայց այդ ժողովուրդը, երբ դուրս եկավ իր հայրենի հողերից և գտնվեց «օտար, ամայի ճամփեքի վրա», ինչպես ասում է բանաստեղծը, ո՛չ լեզուն էին իմանում և ո՛չ էլ այդ ժողովրդի կյանքը ճանաչում: Թիթեղաշեն տների մեջ էին ապրում, ցեխով ծածկված հողի մեջ էին ապրում: Ես տեսել եմ՝ աչքերովս տեսել եմ և նույնիսկ ապրել եմ էդ տնակների, էդ խրճիթների մեջ, երբ անձրևը գալիս էր, այնպես էր խփում այդ թիթեղին, որ կարծեք թե ականջներիդ մեջ անդադար արձագանքում էր: Երբ դուրս էինք գալիս, ցեխի մեջ էինք մղտում մեր ոտնամաններով, այն ալ ի՞նչ ոտնամաններ: Բայց ապրեցինք և այդ վիճակից դուրս եկանք և տուն-տեղ շինեցինք, գործատեղի բացին մեր հայրերը և նոր կյանք սկսեցին:

Անգլիո ամենեն մեծ նկատված քաղաքական դեկտվարներից մեկը սըր Ուինստոն Չերչիլ գրել էր 1929 թվականին. «Հայաստանը ջնջվեց աշխարհի քարտեզից, և այս ժողովուրդը այլևս փոշի դառնալուն սահմանված է, անշուշտ, եկել է վերջը»: Այդպես էր մտածում աշխարհն ամբողջ, որ կարծես թե գերեզմանի քարը դրել էին հայության վրա, բայց մարգարե չէին գիտնալու համար, թե հայ ժողովուրդի մեջ կա հավատքի անպարտելի ուժը, ստեղծարար ուժը: Այն ատեն, որ մեր հայրերը վերապրեցին ահավոր ջարդից, ոչ ոք օգնեց հայերին, մի քանի միսիոնարներ միայն որբերին նայեցին: Հայը իր ճակատի քրտինքով, իր պատվո գիտակցությամբ, արժանապատվության տեր ըլլալու իր կամքով, իր չարքաշությամբ, իր պարկեշտությամբ, աշխատանքի ճվիրվելու իր առաքինությամբ իր կյանքը վերաշինեց:

Մենք այսօր Հայաստանը ունենք իբրև ազատ և անկախ պետություն: Ժամանակին կարող էիք ասել, ես էլ կրնող էի ասել, թե մենք ազատ չենք, որովհետև ուրիշներ ասում էին, ինչ որ մենք անելու ենք, մենք չէինք կարողանում որոշել: Հիմա ազատ ենք, դո՛ւք կարող եք որոշել իբրև ժողովուրդ, դո՛ւք եք ընտրել մեր պետությունը և այսօր դո՛ւք եք շինելու մեր Հայրենիքը, մե՛նք ենք շինելու: Ես հիմա եկել եմ Աստծու կանչին ընդառաջելով, մեր ժողովրդի կամքին ընդառաջելով իմ ամբողջ կյանքը մինչև վերջ, այնքան, որքան տա ինձ Աստված, Հայաստանի, մեր Մայր Աթոռ

Սուրբ Էջմիածնի, մեր ընդհանրական ազգին ընծայելու: Պետք է ձեռք-ձեռքի տանք՝ Եկեղեցին ես չեմ, Եկեղեցին սրբազանները, վարդապետները և քահանաները չեն, Եկեղեցին ո՛չ աղյուսն է, ո՛չ մարմարն է և ո՛չ էլ ջահն է, Եկեղեցին ժողովուրդն է՝ դուք եք, հավատքն է ձեր մեջ, որ Եկեղեցին կշինի՝ ոչ թե քարեղեն եկեղեցին, այլ կյանք Եկեղեցին: Անապատի մեջ ո՛վ եկեղեցի ունեցավ, բայց աբտոված քահանաները բաց օդի մեջ և ավազի վրա պատարագ արեցին և հավատքը կենդանի պահեցին: Մենք այսօր վերածնված ազգ ենք:

Իմ այսօրվա վերջին խոսքը, մենք իբրև նորոգյալ ժողովուրդ, նոր Հանրապետության կանչված ժողովուրդ, մենք պետք է այնս թողնենք այն հոգեբանությունը, որով ժամանակին մենք ասում էինք՝ ջարդվեցինք, ավերեցին մեր երկիրը, քանդեցին մեր երկիրը, «ողբամ զքեզ Հայոց աշխարհ». ո՛չ, հազար անգամ ո՛չ: Նայե՛նք կյանքին, նայե՛նք ապագային, մենք վերածնված ազգ ենք՝ մեկ ու կես միլիոն զոհ տվեցինք, բայց այսօր ութ միլիոն հաշվվող ազգ ենք՝ պետությամբ, դիմագիծ ունենք, ՄԱԿ-ի ճակատի վրա Եռագույնն է ծածանվում, մենք նոր ազգ ենք՝ ոչ թե ջարդված, ոչ թե հալածված, այլ վերածնված, վերաշինյալ Հայրենիքով և ազատ ու անկախ պետականությամբ: Պետք է այնս կյանքին նայենք, գործին նայենք և խոսքին այնս պետք չէ այդքան ուժ տանք և մեր կյանքը և մեր գործը պիտի ըլլան մեր խոսքը առ Աստված՝ և՛ առ մարդկությունը, և՛ առ մեր ապագան: Թող Աստված ա՛յս հոգեբանությամբ զինե զձեզ բոլորդ և երբեք չհուսահատվեք: Աստվածաշունչն է ասում. «Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ» և մենք ա՛յդ կյանքով պիտի նայենք դեպի Հայոց Ապագան: Աստված օրհնի ձեզ բոլորիդ: Ամեն»:

Այնուհետև ժողովրդի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը մուտք գործեց թեմի Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցի, որտեղ գոհություն և փառք հայտնեց Ամենակալ Տիրոջը՝ Շիրակ աշխարհի անսասանության և հաստատության համար, որպեսզի Նրա ամենակարող Աջը զորավիգ և հովանի լինի Իրեն հավատացող տառապյալ ժողովրդին, որոնց Ավետարանի ողջունատու խոսքով կանչում է հավերժաբար. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և հոգնաբեկք և ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 29):

Օրվա վերջում, գիշերվա բավականին ուշ ժամին Վեհափառ Հայրապետը իջևանեց Շիրակի թեմի առաջնորդարանում, որտեղ և հանդիպեց Գյումրիի Ընծայարանի սաներին՝ պատգամելով նրանց ապրել ընծայյալի հոգով և ավիրումով Աստուծո փառքի, Եկեղեցու անսասանության և հարատևության ու Հայրենիքի շինության և անխախտելիության համար:

ՄԱՅԻՍ 6, ՇԱԲԱԹ

«Ունկնդիր լերուք լսելոք ձերով[ք],
զհետ եկայք ճանապարհաց իմոց.
լուարուք ինձ, և կեցցեն ի բարութեան անձինք ձեր»:
(ԵՍԱՅԻ ԾԵ 3)

Առավոտը Գյումրիում բացվեց Վեհափառ Հայրապետի՝ Լորդ Բայրոնի անվան դպրոց այցելությամբ: Դեռևս 1989 թվականի աղետալի երկրաշար-

ժից հետո, Վեհափառը, լինելով Կիլիկիո Աթոռի Գահակալ, այցելել էր այս դպրոց, որ այդ օրերին ծանր կացության մեջ էր գտնվում, և դասերը ընթանում էին վրանային ճամբարում: Սակայն հետագայում Մեծ Բրիտանիայի կառավարության և ժողովրդի ձեռքմեկնումի և օգնության շնորհիվ այն ընդունեց այժմյան բարվոք վիճակը:

Վեհափառ Հայրապետին ողջունեցին և փոքրիկ համերգային ծրագրով հանդես եկան դպրոցի աշակերտները, որից հետո Վեհափառն իր Հայրապետական պատգամը և սերն ու գոհունակությունը հայտնեց ուսուցչական կազմին և աշակերտությանը.

«Սիրելի և թանկագին ուսուցիչներ և մանավանդ, թանկագին սաներ Լորդ Բայրոնի անունը կրող այս վարժարանի,

1989 թվականին էր, երբ ես առաջին անգամ այցելեցի այս վարժարանը, այն ատեն որպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, այս շքեղ շենքը տակավին չկար, այլ վրաններուն տակ էին դասերը լինում: Այն ատեն դուք չեք հիշում, հավանաբար, ես մի խոսք ասեցի. համեստ արտաքին ցնոթական պայմանները երբեք պատճառ չեն ուսման մեջ ետեմանալու կամ տկարանալու: Ես շատ աղքատ դպրոցի մեջ եմ մեծացել, բայց այդ աղքատությունը ցնոթական երևույթ էր՝ գրասեղանը շատ փայլուն չէր, գրիչ, մատիտ այնքան առատ չունեինք՝ մեկ մատիտ ունեինք՝ սրում հա սրում էինք, երբ որ վերջանում էր, մի մատի փոքրիկ ծայրի էր վերածվում: Չունեինք պետք եղածը, բայց սովորեցինք, ուսուցիչներ ունեցանք՝ դպրոցը ուսուցիչն է, դպրոցը աշակերտն է, դպրոցը հոգեկան ջրտուքն է: Նայեցեք, աշակերտներ, այս խոսքը, որ պիտի ասեմ, լավ լսեք՝ ես էլ ուսուցիչ եմ, մինչև կաթողիկոսական այս աստիճանիս մեջ ամեն շաբաթ մի օրը գնում էի մեր հոգևոր դպրանոցը Բեյրութում և այնտեղ դասավանդում էի մինչև այսօր:

Ասելիքս այն է, որ դպրոցում միայն թվաբանություն, գիտություն, քերականություն, թվական չպետք է սովորեք՝ կյանք պիտի սովորեք, ապրել պիտի սովորեք: Այսօր փոքրիկ մեքենաներ կան, երկու առավել երկուն ի՞նչ կանի ասելու համար, կարող եք այնտեղ գումարը ունենալ՝ դա գիտո·թյուն չէ: Գիտությունը՝ ինչպե՞ս ապրել իրար հետ, ինչպե՞ս վարվել իրար հետ, ինչպե՞ս վարվել բնության հետ, ինչպե՞ս արժևորել ցնոթը, մինչև ո՞ր աստիճանի արժևորել ցնոթը և ի՞նչ արժեք տալ հոգեկանին, բարոյականին, իմացականին, հոգևորին և ուրիշ բաներին, որոնք մնայուն արժեքներ են: Դպրոցը օջախն է, որտեղ մենք սովորում ենք ոչ թե չոր ու ցամաք գիտություն, այլ հոգեկան ազնվություն, վերաբերման եղանակ: Եվ ատոր համար ձեզ բոլորիդ ուզում եմ ասել, որ այս դպրոցը Լորդ Բայրոն կոչված, որից այնքան լավ տպավորվեցի՝ կարգ ու կանոն կա, կոկիկ դասավորում կա, այս բոլորը պետք է որ շնչավորվեն:

Հիսուս ասել է. «Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծու», ինչ որ ցնոթին կպատկանի, բնականորեն պիտի տանք, մարմին ենք՝ պետք է խնամենք մեր մարմինը, բայց ո՛չ մարմնապաշտ լինենք, ո՛չ ցնոթապաշտ լինենք: Մարդը կընկճի իր բարձրությունից, երբ դառնա միայն ցնոթի հետ՝ ցնոթով արժևորվող մարդ: Հետևաբար դուք սովորեք ճշմարտությունը դարձյալ Ալեքսանդրացի բառերով. «Հոգի առաւել է քան զկերակուր և մարմին քան զհանդերձ»: Աշխարհումս պիտի գիտնաք՝ ի՞նչ բանն է կարևորը և ի՞նչ բանն է ցնցող կարևորը, և ի՞նչ բանն է անկարևորը՝ ա՛յս է դպրոցին արվեստը: Եվ ատոր համար ես կշնորհավորեմ տնօրենության, ուսուց-

չական կազմի բոլոր անդամները և բոլոր այն անձերը, որ այս դպրոցի բարգավաճման, բարեկարգ պահպանումի համար չեն խնայեր ո՛չ զոհողության և ո՛չ էլ ճիգի որևէ մեկ բաժին, որովհետև սրտի մոտիկ ունեն՝ իրենց փառքն է այս դպրոցը, ձեր պատիվն է այս դպրոցը, ինչքան որ դուք այս դպրոցին կտաք, այնքանով կմեծանաք:

Իմ ընթունման ուսուցչության՝ այս է. աշակերտով զբաղվել իբրև անձ, ոչ թե անոր գիտություն փոխանցել իբրև գործիք, և դրա համար շնորհավորում եմ ձեզ և այժմ ասում եմ. Անգլիական մեծ պետության ժողովուրդը, երբ մեր աղետին առիթով այսպիսի գեղեցիկ մարդկայնական և ազգերի միջև եղբայրության իսկական արտահայտություն ունեցավ, եկեք արժեցնենք: Այդ հարգանքը, որ մեր հանդեպ նրանք ունեցան, այդ սերը, որ արտահայտեցին և այս դպրոցը բացվեց և տիկին Թետչերը եկավ այստեղ Վազգեն Վեհափառին հետ և այս դպրոցին բացումը կատարեցին, մենք արժեցնենք նրանց այդպիսի համարումը մեր ազգի նկատմամբ և շե՛ն պահենք այս դպրոցը»:

Լորդ Բայրոնի անվան դպրոց այցելությունը երկար և անջնջելի պիտի մնա դպրոցի բոլոր սերունդների հիշողության մեջ, քանզի այն վարժարանի պատմության մեջ դարձավ նվիրական և Հայրապետական շնորհների օրհնության օր, որը հավերժացվեց այս կրթական հաստատության տարեգրության մեջ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շրջագայեց քաղաքում, ծանոթացավ տարվող շինարարական աշխատանքներին, եղավ 58-րդ և Ավստրիական կոչվող թաղամասերում, զրուցեց ժողովրդի հետ, իր հայրական ջերմ սերն ու հորդորները բաշխեց մանուկներին, հանդիպեց երկրաշարժի հետևանքով անդամալույծ դարձածներին՝ ամենքին ոգևորելով, գոտեպնդելով և մխիթարելով նրանց Ավետարանի լույս պատգամներով և Աստուծո Խոսքի ուժավորող զորությամբ: Ժողովրդի մեջ շրջելուց, նրանց ցավերին, տագնապներին և դժվարություններին անմիջականորեն հաղորդակից և արտահայտից դառնալուց հետո, Վեհափառ Հայրապետին սպասվում էր մի նոր հանդիպում, բայց միևնույն ժամանակ բերկրալի հանդիպում Գյումրիի Միքայել Նալբանդյանի անվան Մանկավարժական ինստիտուտում: Մանկավարժական ինստիտուտը 1988 թվականի երկրաշարժից հիմնովին ավերվել էր, և հարյուրավոր պարմանիներ ու պարմանուհիներ զոհ գնացին այդ սարսափելի աղետին: Բայց այսօր ամբողջությամբ վերանորոգված շենքը իր լուսավոր դասասենյակներով և, որ ամենակարևորն է՝ ուսանողության թվի բազմությունը և նրանց դեմքերից ուրախության միջից նկատվող ապրելու կամքն ու կորովը, կարելի է ասել գրեթե իսպառ ջնջել էին արհավիրքի վերքերն ու հետքերը:

Այստեղ Վեհափառին երախտագիտության և ողջույնի խոսք ուղղեց ինստիտուտի տնօրեն Մ. Սարգսյանը, ապա հանուն ուսանողության շնորհակալություն հայտնեց Բ կուրսի ուսանողուհի Նարինե Ղազարյանը, որից հետո Հայոց Հայրապետը Ճշմարտության, ուսման և ուսուցման մասին իր մտածումները և խոհերը կիսեց դասախոսական կազմի և ուսանողության հետ.

«Սիրելի առաջնորդ Սրբազան, հոգևոր եղբայրներ, պետական, քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ, հարգարժան վարիչ-տնօրեն պա-

րոն Սարգսյան, ուսուցչական կազմ, դասախոսական կազմ և սիրելի ուսանողներ և ուսանողուհիներ:

Այս պահը հատուկ նշանակություն ունի իմ համար, որովհետև իմ անձնական կյանքի կարևորագույն մեկ բաժինը անցել է մանկավարժական բնագավառին՝ այսինքն, կրթական, դաստիարակչական գործում և, եթե երբեք մի օր իմ մի ուսանող հարց տա և ասի՝ Վեհափառ, եթե եկեղեցական կամ հոգևորական չլինեիր, ի՞նչ կուզեիր լինել, պիտի ասեի՝ համալսարանի դասախոս: Այս մեկը ո՛չ ուրիշ նպատակի համար, ո՛չ փառքի համար, ո՛չ դրամի համար, այս մեկը ասոր համար, որ իմ հավատքը, իմ ըմբռնումը այն է, որ նա, ով ճշմարտության թարգմանը կհանդիսանա երիտասարդ սերնդին՝ Աստծուն գործակից անձ է, որովհետև ճշմարտություն է, որ երբ մարդու մը էության, գոյության, ամբողջ կյանքի շաղվածքի հետ կմիանա, այդ ճշմարտություն է, որ անհատը և մարդը կփրկի: Ավետարանն ասում է. «Ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեացէ զձեզ (Հովհ. Ը 32): Կեղծիքը, սուտը, կարճատեսությունը մարդկանց սխալ ճանապարհի մեջ կգցեն՝ ճշմարտություն է, որ իբրև լույս ճանապարհը կլուսավորե:

Ասոր համար է, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ասեց. «Ես լոյս եկի յաշխարհ»՝ ես իբրև լույս եկա աշխարհ: Ասոր համար է, եղբայրներ և քույրեր, որ մեր հավատո հայրը մենք կկոչենք Լուսավորիչ, իսկ եկեղեցին՝ Լուսո Խորան: Հետևաբար, այս իմացական, հոգեկան լույսն է, որ կհայտնաբերե մեզ համար կյանքի ճշմարտությունը, և առանց այդ ճշմարտության ո՛չ մարդը մարդ կլինի և ո՛չ էլ ազգը՝ ազգ:

Այստեղ պիտի ուզեի ձեզի մի փոքրիկ պատկեր, մի փոքրիկ նմանություն գծել երկու լույսերի միջև.—ֆիզիկական, արեգակնային լույսն է, որ իմաստ կուտա տիեզերքին: Հանեցե՛ք լույսը աշխարհից՝ խավար է. խավարը անգոյություն է, կույր գոյություն է: Լույսն է, որ գոյության գոյությունը մեզի կհայտնաբերե ֆիզիկական աշխարհի մեջ: Եթե երբեք դուք հարցնեք աչագուրկ մարդուն, թե ի՞նչ է աշխարհը, նրա պատասխանը ձեզ կհամոզի, թե լույսը ինչ մեծ արժեք ունի... Այսպես է նաև իմանալի լույսը՝ «Լոյս Արարիչ լուսոյ առաջին լոյս, բնակալդ ի լոյս անմատոյց, ի ծագել լուսոյ արեգական՝ ծագեա ի հոգիս մեր զլոյս Քո իմանալի», Արևագալի շարականն է Ներսես Շնորհալու գրած, որ չորս տողի մեջ յոթ անգամ երաժշտականությամբը բանաստեղծության լույս բառը երաժշտական հանկերգի պես, կհանդիպի. «Լոյս առաջին լոյս, արարիչ լուսոյ բնակեալդ ի լոյս անմատոյց», երբ արևը ծագի մեր մեջ, ծագեցուր իմանալի լույսը: Ասոր համար չէ՞ արդյոք, եղբայրներ և քույրեր, մտքի հաղորդակիցներ, որ ըսված է մեր մատենագրին կողմե «Վաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք»: Մտքի կուրությունը անհավոր բան է: Աչքի՝ մանավանդ աչքի կուրության համար դարման կա. աչագուրկը գաւխազան կրնա ունենալ և խարխափել և տեսնել ճամփան, հոտառությունը շոշափելիքի կարողությունը կզորանան, երբ աչքի տեսողության ուժը կտկարանա: Բայց ի՞նչ պիտի անի այն մարդը, որ զրկված է իմացական լույսից, չի իմանում, թե կյանքը ի՞նչ է արժում, չի իմանում, թե մարդը ո՞վ է: Կույր գոյություն մըն է, և ա՛յս է տգիտությունը: Անգիտություն է մեր ազգի ամենից մեծ վտանգը, որի առաջը պետք է առնենք: Այս հաստատությունը, որտեղ գտնվում եմ հիմա, իմացական լույսի մի ուրիշ խորան է:

Խավարը, կյանքի իմաստին, արժեքներու ըմբռնողության խավարը և անգիտությունը փարատողը լույսի խորանն է: Ասոր համար է, որ երբ Մովսես Խորենացին կնկարագրե Թարգմանիչ վարդապետաց առաքելությունը,

այնտեղ մի նշանավոր խոսք ունի՝ տգիտահալած Գիրքը՝ ճշմարտության խոսնակը, տգիտությունը կհալածե և լույսը կառատացնե մեր կյանքի մեջ: Ահա թե ինչու այս մանկավարժական կենտրոնը, հարթելի պարոն տնօրեն, իմ սրտին շատ մոտիկ հաստատություն է, որովհետև կյանքումս ճանաչել եմ, Աստված գիտի, թե որքան եմ հաջողել, լույսին երկրպագու դառնալ և լույսին որոնողը դառնալ իմ տկար կարողության սահմանների մեջ:

Դո՛ւք, աշակերտներ, դուրս եկաք մի անավոր աղետից: Ես վկան եղա՝ առաջին վկաներից մեկը, թե այս քաղաքը և Շիրակա նահանգը որքան ցնցվեց: Ես այն ատեն մի բան գործածեցի, ան երկրաշարժ չէր միայն՝ ան մարդաշարժ էր, հոգեշարժ էր, ազգաշարժ էր:

Աշխարհը արթնացավ, և Հայաստանը դարձավ շատ երկրների մամուլի, հաղորդագրության միջոցների ևևեռակետ: Բայց մոռացվեց, վերջին տարիներին մոռացվեց, և ես այսօր եթե ընտրեցի որպես առաջին Հովվապետական այցելության դաշտ Շիրակա նահանգը, իմ փափագն էր, իմ նպատակն էր մեր ողջ ժողովրդի գիտակցության մեջ և՛ Հայաստանում, և՛ աստանահմանում վերստին արթնացնել Շիրակա նահանգին աղետի դարմանումին համայնական, հասարակաց և ընդհանուր պարտքը: Հուզվել չի բավեր, կերակուր տալ չի բավեր՝ վերակառուցել, վերականգնել, բնականոն պայմանների բարձրացնել այս նահանգի մեր ժողովրդի կյանքը: Այս պետք է լինի մեր հասարակաց նպատակը և դրա մեջ առաջին պատասխանատվությունը կիյնա մեր վրա, իբրև շիրակացի ժողովուրդ:

Հայաստանի մեր մյուս եղբայրները, բնականորեն նաև արտասահմանի մեր եղբայրներն էլ կգան, իրենց ձեռքերը կմիացնեն մեր ձեռքերին. և սակայն պարտավորության առաջին գծի վրա դարձյալ մենք ենք գտնվում: Ուրդեն չեմ ասում դուք, ասում եմ մենք, որովհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը ով որ էլ լինի, չի կարող մի նահանգի, մի վայրի քաղաքացի լինել: Նիկա ամենահայ է՝ և՛ շիրակացի է, և՛ երևանցի է, և՛ արցախցի է, և՛ այուձեցի է, և՛ Գուգարաց աշխարհից է, և՛ արտասահմանցի հայ է: Ամենայն Հայոց Կաթողիկոսը բոլորին համար է և բոլորն էլ իրեն համար տեղ ունեն, բայց դուք, շիրակացիներ, առաջին տեղում եք: Եվ ձեր գործը՝ մտավորական դասակարգին գործը, համալսարանական ուսանողության հեռանկարային գործը պիտի ըլլա բարոյական, հոգևոր, իմացական, նկարագրային, մարդկային վերականգնումը՝ առանց որին նյութական վերականգնումը մեծ արժեք չունի:

Երկրորդ նշանակությունը, որի մասին այսօր ուզում եմ մի քանի բան ասել, այն է, որ մանկավարժության պատրաստվող, իմացական առաջնորդության պատրաստվող, ուսուցչության հանրային դաստիարակության համար պատրաստվող ուսանողները և ուսանողուհիները լավ պիտի իմանան, որ ուսուցումը տեխնիկա չէ, ուսուցումը անձից բխող առաքելություն է: Մեքենագետը կարող է համակարգիչ պատրաստել, մեքենական գեներատոր շինել, որը տեխնիկական նյութի՛ անշունչ նյութի հետ կապված գործ է: Բայց ուսուցիչը, հոգևորականը, գրողը, մտավորականը իր անձն է, որ պիտի տա և ոչ թե մեթոդ կամ այնպիսի մի աշխատանք, որ անանձնական լինի: Մանկավարժությունը լեզվաբանական գիտություն սովորելու հետ կապ չունի: Կարող եք սովորել և պարտավոր եք սովորել, բայց դրանով չեք կարող ուսուցիչ լինել: Ես ունեցել եմ ուսուցիչներ, որոնք մանկավարժական ինստիտուտ չեն կարողացել գնալ, առիթ չեն ունեցել, բայց երբ դասարանում, բեմում

խուսում էին, մենք սարվում էինք, վեհանում էինք, բարձրանում էինք, խաղդավառվում էինք, և եղանք այն, ինչ որ ենք այսօր շնորհիվ այդ մանկավարժների, որոնք հոգուց էին խոսում, իրենց անձն էին անում դասագիրք, իրենց անձից էին բխեցնում ճշմարտությունները և ոչ թե գրքի թարգմանն էին լինում կամ իբրև գործիք գործածում էին գիրքը: Հետևաբար, դուք պետք է այս ուսանողության շրջանին սովորեք ո՛չ միայն տեսություն, ո՛չ միայն մեթոդաբանություն բոլոր այն բնագավառներում, որտեղ դուք ուսանում եք, այլ պետք է սովորեք առաքելության գերագույն դասը: Հիսուս ի՞նչ արեց, 12 հոգի ընտրեց, 12-ին Իր անձին շուրջը բոլորեց, ո՛չ դասարան, ո՛չ դասագիրք, ո՛չ գրասեղան, ո՛չ գրիչ, այլ՝ հոգի տվեց, Իր հոգին տվեց, Իր կյանքով Ինքն Իրեն տվեց:

Ճշմարտությունը դա է. չասեց՝ ճշմարտությունն այս է, այսպես է, ասեց. «Ես եմ ճշմարտությունը», չասեց տեսականորեն, վերնախավային կերպով, հայեցողական կերպով: Ճշմարտությունը կյանքումն է արտահայտվում, անձերի միջից է մարմնավորվում, և դուք պետք է այդ դասը սովորեք, դուք ձեզ ազգին, մարդկությանը ընծայելու գերագույն դասը: Եվ դրա մեջն է ձեր ուսումին անդրագույն, հանգուցային իմաստը. եթե չկարողանաք այդ անել, ինչ էլ որ սովորած լինեք, համակարգիչն էլ կարող է անել, այսօր, մանավանդ այս զարգացման դարում: Վերջապես դուք շիրակացի եք, մենք ունեցել ենք մի մեծ գիտնական՝ Անանիա Շիրակացին, Է դարի այդ հանճարեղ աստղը: Եվ երևակայեք նրանից մենք այսօր սովորելու ենք՝ ի՞նչ քան. նա գնաց Շիրակավանից Բյուզանդիոն, գնաց Տրապիզոն Տյուքիկոս անուն հույն մեծ գիտնականի մոտ աշակերտելու և վերադարձավ իր հայրենիք, չմնաց օտար երկինքների տակ, եկավ, դպրոց բացեց:

Ա՜խ, եթե կարդաք նրա ինքնակենսագրությունը, կզգաք ամբողջ դառնությունը, երբ տեսավ, որ իր ուսումը գնահատող մարդ չկար Հայաստանում, ափսոսաց, բայց չհուսահատվեց: Գիրք գրեց և մինչև այսօր իր գրքերը ճանաչվում են մեր գիտական գրականության բարձրակետերը, և մինչև այսօր մենք ուսանում ենք նրանից: Նրա կյանքի օրինակը թող ձեզ համար առաջնորդող աստղ լինի, փարոս լինի: Մենք չարհամարհենք գիտությունը, բայց գիտություն էլ զարդի, փառքի չվերածենք՝ գիտությունը ծառայության վերածենք, գիտությունը մարդու բարիքին ընծա անենք, որպեսզի մարդը բարձրանա մեր բոլորի ծառայությամբ՝ հոգևորականների, մտավորականների, մանկավարժների, գրողների՝ մի խոսքով, նրանց, ովքեր կարող են ճշմարտության լույսը ժողովրդի կյանքի մեջ տարածել, ինչպես արևն իր ճառագայթներն է տարածում աշխարհիս չորս կողմերը:

Ես հավատում եմ, որ մեր վերստին անկախացյալ Հայրենիքի մեջ նորաստեղծ անկախ պետականության այս օրերին Եկեղեցին պիտի բերի իր բաժինը, մտավորականները պիտի բերեն իրենց բաժինը, մանկավարժները պիտի բերեն իրենց բաժինը, գիտնականները պիտի բերեն իրենց բաժինը, գյուղացին պիտի բերի իր բաժինը, քաղաքացին պիտի բերի իր բաժինը:

Համաներդաշնակյալ, համակարգյալ ձևով մենք մեր պետության և Մայր Աթոռի միացյալ գործունեության միջից պիտի այս Հայրենիքը անենք այն, ինչ որ Աստված ուզում է, որ լինի, ինչ որ պատմությունը պահանջում է մեզանից, որ լինի, ինչպես մեր երեխաները մեզնից սպասում են, որ լինի: Մեր նահատակները ա՛յս են կտակել մեզ: Այս ցուցահանդեսը, որ այս սրահին մեջ տեսա շատ արագ, ակնթարթային, ակնարկային ձևով, ես սրանցից շատ ավելի ծանր տեսարաններ եմ տեսել, բայց սրանք



Շիրակի թեմի երեխաների հետ

հուշարար են: Այս ամբողջ նկարները վկայություններ են ոչ թե անցյալի պատահածի մասին միայն, այլ մեր անելիքի համար, մեր այսօրվա անելիքի համար: Ես եղել եմ Տեր-Զորում, տեսել 600.000 հայերի գերեզմանը առանց շիրիմի, խաչքարի: Ոտք Հունվարին, հինգ ամիսներ առաջ, այնտեղ գնացի, այս ձեռքերովս փորեցի, ո՛չ թե փորեցի, քրքրեցի՛ հողը, ավազը և ոսկորները դուրս բերեցի: Տակավին մինչև այսօր, 80 տարիներ են անցել, մենք շատ վերք տեսանք, բայց երբեք մահացու վերքի չվերաածեցինք ստացած վերքերը: Վերքից երգ սարքեցինք, ցավից նոր տեսիլք կազմեցինք մեզ մեռցնել ուզող որևէ մի պետության, որևէ մեկ ուժի դիմաց պիտի կանգնենք ուժե՛ղ, Սրսրատի նման կանգուն, ժայռի նման անսասան և այդ պիտի անենք ո՛չ թե խոսքով, ո՛չ թե ճառով, և ո՛չ էլ քարոզով: Սա պիտի անենք կյանքով, ներկայով ու գործով:

Եղեք հողում, եղեք Հայրենիքում, մի լքեք էս Հայրենիքը, ա՛յս է Աստծու տված մեզ՝ քա՞ր է, քարից խաչքա՛ր կհանենք, անասո՞ւն է, կաշուց մագաղա՛թ կշինենք, մենք գիր կստեղծենք, Աստծու ստեղծագործությանը գործակից կլինենք: Ա՛յս է հայուն ճակտի գիրը, պայծառ պահեցեք: Դո՛ւք սիրելի երիտասարդներ և երիտասարդուհիներ, որ այս կամքին գործադրողները պիտի լինեք. ձեր երիտասարդությամբ մենք էլ երիտասարդացանք և մեր երիտասարդ պետությունը միշտ երիտասարդ, ստեղծագործ և հաղթական պահենք Աստծու փառքին, մեր ազգի պատվին համար: Ամեն»:

Աշոցք մեկնելու նախապարհին Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Գյումրիի Ամերիկայի Հայկական Համախմբումի (Ասամբլեայի) կողմից հաստատված տնտեսական գործարան, ծանոթացավ կատարվող և կատարվելիք աշխատանքներին, գործարանի արտադրական կարողականությանը, ինչպես նաև մինչև այսօր իրականացրած ծրագրերին, որից հետո Վեհափառն ուղևորվեց դեպի **Աշոցք**, ուր մշակույթի տան հրապարակում շրջանի ամբողջ ժողովուրդը անհամբերությամբ և սրտի թրթիռով էր սպասում Սուրբ Էջմիածնի ներկայությանը, քանզի պատմության մեջ առաջին անգամն էր, որ ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական այցելություն էր տալիս այս շրջանի հավատացյալ ժողովրդին՝ այսինքն սա Աշոցքի ժողովրդի հանդիպումն էր Գարեգին Վեհափառի միջոցով նախորդ բոլոր 130 Հայրապետների հետ, որոնց կենսավորող շնչի և հոգևոր ներների փոխանցողը և թարգմանը եղավ Մայր Աթոռի 131-րդ Գահակալը՝ Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

«Սիրելի առաջնորդ Սրբազան Շիրակա թեմի, հարգարժան պետական ներկայացուցիչներ, պարոն նահանգապետ և օգնականներ, սիրեցյալ և հավատացյալք Աստուծո, որ գտնվում եք պատմական այս շրջանում Աշոցքի,

Ես ձեզ առաջին անգամ տեսնում եմ իբրև ամբողջական հայություն, իբրև համայնական ներկայություն և ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ արևով, արևի լույսով, պայծառ դեմքերով, Աստծու լույսը ձեր դեմքերի վրա: Աստված միշտ արև տա ձեզի, ձեր կյանքը արևով օծի, որպեսզի դուք միշտ Աստծու լույսին մեջ մնաք:

Սիրելինե՛ր, ուզեցինք, որ դուք գգաք, որ Եկեղեցին, Մայր Աթոռը շենք չէ, աշխարհագրական վայր չէ, ձեր հոգիների մեջ ապրող հավատք է, ներկայություն է, զՔրիստոս թարգմանող հաստատություն է, Ավետարանը քարոզող գործունություն է, և դրա համար ես թողեցի իմ գրասենյակը,

եկա ձեզ հետ լինելու, ձեզնով զորանալու և ձեզ էլ զորացնելու: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, երբ աշխարհ եկավ երկնքից, Նա ժողովրդի հետ խառնվեց, ժողովրդի մեջ գտնվեց, ժողովրդի հետ եղավ, քարոզեց, դարմանեց, բժշկեց, մի խոսքով՝ ծառայեց այդ ժողովրդին: Մենք ալ Նրա օրինակով անդադրում շրջագայում ենք և առաջին հերթին Շիրակա թեմը, որովհետև այս թեմի ժողովուրդը սրանից շուրջ յոթ տարիներ առաջ երկրաշարժի ամենեն ծանր վերքը կրեց և տակավին այդ վերքը չի դարմանվել ամբողջականորեն: Ուզեցինք գալ և ձեզի հայտնել, որ Եկեղեցին ձեզ հետ է և ինչ որ կարող է անել, պիտի չխնայի ձեզ համար, միայն թե դուք հավատքը ունեցեք ձեր ուժերին, ձեր կարողություններին, ձեր աշխատանքներին: Երբ մի մարմին, ֆիզիկական մարմին վերք ունենա, հիվանդություն ունենա և երբ ինքը իր միջոցով կկարողանա այդ վերքը դարմանել, այդ մարմինը բժիշկներն ասում են ամենեն առողջ մարմինը կլինի: Դուրսից եկած ճարը, դարմանը էդ մարմինը չեն կարող բուժել, եթե այդ մարմինը ներքին ուժականություն չունենա: Դուք ունեք այդ ուժը, հայ եք, հայի պես ապրեք, ինքնավստահ, ոչ թե անցյալը ավաղող, անցյալից դժգոհող, ո՛չ, ներկայումս աշխատող և ապագային նայող ժողովուրդ: Մանավանդ մի նոր շրջան ենք մտել Հայոց հազարամյակների պատմության մեջ: Այդ շրջանը կոչվում է ազատ-անկախ Հայրենիքի նոր դարաշրջան: Մենք, որ արտասահմանում ենք ծնվել, արտասահմանում ենք ապրել, միշտ երազել ենք մեր Հայրենիքի ազատությունը և անկախությունը: Այստեղ տեսնում եմ երեխաներ, պճլտուն աչքերով, անուշիկ դեմքերով երեխաներ: Ես էլ այդպիսի երեխա էի. և գիտե՞ք, իմ մայրը ինչ էր սովորեցրել ինձ.

Ազատն Աստված այն օրից, երբ հասեցավ շունչ փչել,
Իմ հողանյութ շինվածքին կենդանություն պարգևել,
Ես անբարբառ մի մանուկ երկու ձեռքս պարզեցի,
Եվ իմ անզոր թևերով ազատություն գրկեցի:

Այսպես ենք ապրել մենք: Այդ ազատությունը եկել է մեզի հիմա և մենք պետք է որ լծվենք աշխատանքի, տանք ձեռք-ձեռքի, միանանք, միության մեջ զգանք մեր զորությունը՝ լինենք ամբողջական ազգ, մեկ Հայրենիք, մեկ հայություն, մեկ Եկեղեցի, մեկ պետություն: Ա՛յս թող ըլլա մեր ճակտին պատիվը, պայծառությունը: Աշխարհումս ներկայանանք և աշխարհն ասի՝ հայե՛ր են սրանք, որովհետև միասին են ապրում, հայե՛ր են սրանք, որովհետև սիրում են իրար, հայե՛ր են սրանք, որովհետև շինում են, կառուցում են, ուրիշները քանդել են, բայց ինքը՝ հայ ժողովուրդը, շինել է, վերաշինել է: Ա՛յս է մեր պատիվը, բարձր պահեցեք այդ պատիվը:

Ես եկել եմ այսօր մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, բերել եմ ձեզի Սուրբ Գրիգոր Յ.ուսավորչի տեսիլքի լույսը, բերել եմ ձեզի Աստծու այն օրհնությունը, որ իջավ Վաղարշապատ և այնտեղ Հայոց հողի վրա ցույց տվեց այն տեղը, որ Իր եկեղեցին պիտի շինվի: Այդ եկեղեցին շինվեց Աստծու կողմից՝ «Էջմիածին», Միածին Որդին իջավ, մե՛նք բարձրացանք դեպի Իրեն: Այս է իմ առաջին խոսքը ձեզի, լծվեցեք ձեր հավատքի ուժին, կենդանի պահեցեք մեր հայրերի հավատքը՝ դա է մեր ուժը: Ճիշտ է, լսեցի ձեր առաջնորդ Սրբազանից, որ տակավին եկեղեցի չունեք Աշոցքում, էլի հավատք ունեցեք, եղբայրներ, տակավին մի ամիս է Կաթողիկոս եմ ես,

հրաշքներ չեմ կարող գործել, բայց պիտի ջանամ իմ գերագույն կարելիս ի գործ դնել, որպեսզի ձեր առաջնորդ Սրբազանի հետ, ձեր աշխարհական, պետական, քաղաքային իշխանությունների հետ, բայց ամենեն ավելի ձեզ հետ միասին ձեռք-ձեռքի տված Աստծու Տունը շինենք Աշոցքում: Այս տեսիլքով ես ողջունում եմ ձեզ և օրհնում եմ ձեզ բոլորդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Աշոցքի շրջանում Վեհափառն այցելեց նաև շրջանի նշանակալից հատուցություններից մեկը՝ «ՔԱՐԻԹԱՍԻ» Նարեկի Աստվածամայր անունը կրող կաթոլիկ հիվանդանոց, ուր քարոզեց՝ շեշտադրելով այն գաղափարը, որ բժշկությունը դավանանք և գաղափարախոսություն չի պահանջում և չի ճանաչում, այն բոլորի համար է անկախ ամեն ինչից, քանզի Տեր Հիսուս բժշկեց անխտիր բոլորին՝ առանց հավատաքննության և հավատազննության.

«Եթե երբեք այս հիվանդանոցին մեջ բոլոր հայերը առանց խտրության պիտի դարմանվին, այդ է պատիվը, այդ է առաքելությունը այս հաստատության, որովհետև Հիսուս Քրիստոս որևէ մեկին բժշկելու ատեն չսպասեց, թե ինչ բանի կհավատաս՝ կհավատա՞ս Աստծուն, ասեց. ոչ այս ձևին կամ այն ձևին: Հետևաբար ես ուրախ եմ և վստահ եմ, որ այս ոգիով պիտի շարունակվի այս հաստատությունը և այս միասնականության, համաքրիստոնեական գաղափարաբանության մեջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո ավանդություններուն հարգումով և այդ բոլորին եղբայրական գործակցությամբ մենք առաջ պիտի տանինք այս սուրբ գործը և Քրիստոսի սերը պիտի թևածի ույստեղ և ամենուրեք:

Վերադառնալով Գյումրի, Վեհափառն այցելեց քաղաքապետարան, որտեղ դիմավորվեց քաղաքագլուխ Միքայել Վարդանյանի և քաղաքային իշխանության պատասխանատու պաշտոնյաների կողմից: Այստեղ փոխադարձ զրույցի ընթացքում քննարկվեցին քաղաքի վերականգնման աշխատանքներին, բնակարանաշինության, արդյունաբերական ձեռնարկությունների և խոնարհված Եկեղեցիների վերաշինությանը վերաբերող բոլոր այն խնդիրները, որոնք ծառացել են քաղաքային իշխանությունների և ընդհանրապես շրջանի և Հանրապետության առջև:

Քաղաքապետարանում այս գործնական զրույցից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Գյումրիի հրետանային զորամաս, որտեղ հրամանատարությանն ու զինվորներին պատգամեց կյանքով ու գործով վկայել Հայրենիքի հանդեպ ունեցած սերն ու նվիրումը, բարձր պահել և արժևորել հայ զինվորի պատիվը, որի հաղթական փայլատակումները դարեր շարունակ չեն խամրել և առավել հատու են դարձել մեր ժամանակներում՝ Արցախյան ու Հայաստանյան հերոսամարտերով: Հովհաննես Մկրտչի օրինակով խրախուսեց և պատվիրեց Հայոց Բանակի զինվորներին՝ երբեք ու երբեք չդադարել զինական դրությունը, այլ, գործելով Աստուծո պատգամներին հավատարիմ, զենքը օգտագործել իմաստուն կերպով, միայն ու միայն Հայրենիքի պաշտպանության ժամին, որպեսզի այն չլինի մարդասպանության, այլ մարդապաշտպանության և հայրենապաշտպանության գործիք:

«Սիրելի և քաջարի զինվորներ Հայոց բանակի,

Կյանքումս այս պահը պիտի չմոռացվի: Առաջին անգամ է, որ ես գտնվում եմ հայկական բանակի մի ջոկատի առջև, Գյումրի քաղաքում: Ոչ միայն իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, այլ նաև որպես հոգևորական ևս, առաջին անգամ լինելով իմ կյանքում, նայում եմ հայ բանակի զինվորների աչքերին, տեսնում եմ նրանց կեցվածքը և նրանց միջից մեր Հայրենիքի ապահովության և անկախության պահպանումի ու պաշտպանության գրավականն եմ տեսնում: Բանակը երկրի ողնասյունն է: Աշխարհումս պետություններ, ժողովուրդներ, որոնք իրենց հայրենի հողը ուզում են պահել իրենց ազգային անկախության գաղափարականին մեջ և իրողականորեն այդ անկախությունը արտահայտել կյանքում, նրանք ուժ են տալիս, զորացնում են իրենց բանակը, որպես պաշտպանության այնպիսի հավաստիք, որ ոչ մեկ թշնամի համարձակվի այդ Հայրենիքին հողը բռնաբարել և ժողովուրդը իր ազատության մեջ կաշկանդել:

Հայաստանի Հանրապետության հռչակումից մինչև այսօր, 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև այսօր, դուք գործում եք, ապրում եք, շնչում եք Հայոց Եռագույնի ծածանումին ներքև՝ անկախության Դրոշին ներքև: Այդ Դրոշը պաշտպանելը ձեր պարտքն է սրբազան: Մենք, իբրև Ամենայն Հայոց ընդհանուր Կաթողիկոս, երբ Մեր առաջին Հովվապետական այցելությունն ենք տալիս Շիրակի թեմին և Գյումրի քաղաքին, անհուն սիրով ողջունում ենք ձեզ բոլորիդ և ձեր մեջ տեսնում ենք հայ ժողովրդի արիության նոր վկայությունը: Մի ժողովուրդ, որ հոգեկանորեն իր արիությունը չի կարող արտահայտել, այդ ժողովուրդը իբրև պետություն և ազգ երկար չի կարող ապրել: Բնականորեն ես կկարողանայի շատ ավելի երկար խոսել զինվորության առաքելության մասին, բայց վստահ եմ, ապահով եմ, որ դուք պետք չունիք իմ խոսքին, որովհետև դուք գիտակցությամբ եք եկել այն պարտավորությանը, որ հայ զինվորի պարտավորությունն է:

Միայն ուզում եմ ձեզ մի խոսք ասել. դուք ձեր գենքերի առաջինը և բարձրագույնը նկատեք հոգեկան, բարոյական, ազգային, հայրենասիրական ոգին: Դա՛ է, որ ձեր մյուս գենքերին արժեք կտա, դա՛ է, այդ հոգեկան արիությունը, ազգային գիտակցությունը, Հայրենիքի պաշտամունքը, որ ձեր գենքերին իմաստ կտա, այլապես ձեր գենքերը մեծ նշանակություն չունենան և չեն կարող այն նվիրականությամբ գործածվել, ինչ որ բանակի մեջ կգործածվեն վասն հայրենյաց, վասն հավատո և վասն հավերժության մեր ազգի: Ուզում եմ նաև ձեզ հիշեցնել, որ երբ հայ ժողովրդի գոյության հարցը խնդրո առարկա էր 451 թվականին, երբ Հայոց սպարապետը՝ Քաջն Վարդան, գնաց վեց Ավարայրի դաշտ, նա կռվի մտնելուց առաջ իր ամբողջ բանակով հաղորդվեց Սուրբ Ղևոնդ Երեցի պատարագով և հաղորդության մասնակցեցավ: Երբ դարեր ետքը և այս դարուս սկզբին՝ 1918 թվականին, Հայրենիքը վերստին պաշտպանության պետքը զգաց, երբ Սարդարապատյան դաշտի վրա հայ զինվորը, գրեթե ամեն մարդ զինվոր դարձած, իր կուրծքը բացեց և թշնամու դիմաց կանգնեց անխորտակելի պատվարի նման, այն ատեն այդ բանակի կողքին էր մի դարաբաղցի հոգևորական, Էջմիածնի հոգևորականության փառքերից մեկը, որ թողեց գրիչը, թողեց համալսարանը, թողեց Էջմիածնի Մայր տաճարը և գնաց, զինվորների կողքին կանգնեց և նրանց Ղևոնդ Երեցի ոգիին համաձայն ուժ ներարկեց, հոգեկա՛ն ուժ, որպեսզի նրանց ֆիզիկական ուժը արժեքավորվի Հայրենիքի պաշտպանության գաղափարով: Դա Գարեգին Հովսեփյանցն էր, որ հետո եղավ

Կիլիկյան Աթոռի Կաթողիկոս, որ մեր պատմության մեջ կմնա ո՛չ միայն իր գրիչովը, ո՛չ միայն իր գիտական, գրական աշխատասիրություններովը, այլ նաև իր հերոսական մասնակցությամբը Հայոց բանակի կողքին՝ վսեմ պաշտպանության Հայրենյաց Հայոց:

Հարգելի հրամանատար զորավար, ձեր անձի մեջեն Մենք կողջունենք բոլոր մեր այն քաջարի երիտասարդները, որոնք իրենց կյանքը ընծայում են մեր Հայրենիքի պաշտպանության: Երբ 1940-ական թվականներին, Համաշխարհային երկրորդ պատերազմին, հայ զինվորները գնում էին պաշտպանելու համար իրենց Հայրենիքը, մեր գրագետներից Մուշեղ Գալշոյանը «Զորի Միրոն» իր վեպի մեջ գեղեցկորեն նկարագրեց, թե ինչպես մի հայր զավակին առաջնորդում էր դեպի կայարան, որպեսզի այնտեղից շոգեկառքով նա գնա Հայրենական պատերազմի: Այն ատեն ձեռքը դրեց իր զավակի ուսին և ասեց այդ հայ հայրը. «Տղաս, դու ասկյար չե՛ս, դու զինվո՛ր ես»: Զինվորն ուրիշ է, ասկյարը ուրիշ է: Ասկյարը մարդ կսպանե, զինվորը մարդ կպաշտպանե: Հետևաբար, դուք մեր հայ ժողովրդի ամենեն ամուր գոյության կռվաններից մեկն եք և ես ցանկանում եմ ձեզ իմ ողջ սրտից, որ դուք շարունակեք գիտակցորեն, նախանձախնդրորեն բարոյական բարձր գիտակցությամբ արժեքավորել ձեր զինվորությունը: Այնքան նվիրական է այդ ձևի զինվորությունը, որ քրիստոնեական Եկեղեցին մեզ՝ հոգևորականներիս ներկայացնում է որպես հոգևոր զինվոր: Հավատարմություն, հնազանդություն, պատրաստակամություն և զոհողության գերագույն աստիճանի գիտակցություն: Անհավասիկ ձեզ այդ իմաստով կարող եմ ասել պաշտոնակիցներ: Մենք Աստծուն ենք զինվորագրվել, Եկեղեցուն, դուք՝ Հայրենիքին: Եկեղեցին և Հայրենիքը անբաժան են եղել մեր հայ կյանքում: Շարունակեցեք այդ առողջ և պատվաբեր զինվորության գաղափարով ապրել և գործել իբրև Հայոց բանակի զինվորներ: Թող Աստված օրհնի ձեզ բոլորիդ և ձեր նման բոլոր հայ զինվորներին: Թող Աստված ձեզ ուժ տա՝ հոգեկան ուժ, բարոյական ուժ, ազգասիրության գիտակցություն և այն ատեն ես կհավատամ, որ Աստված ձեր ձեռքերը կօրհնի, Աստված ձեր կյանքերը կպաշտպանի:

Թող Աստծու օրհնությունը անպակաս լինի ձեր վրա և Աստծու աչքը ամենատես և Աստծու Աջը ամենակարող լինեն ձեզի առաջնորդ: Ամեն»:

Վեհափառի օրհնությանը հաջորդեց կազմակերպված զինվորական շքերթ-տողանցը, որի ընդունողն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որից հետո ծաղիկներ զետեղվեցին զորամասի բակում երկրաշարժի և արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարի առջև: Այս միջոցին էլ Վեհափառը ծանոթացավ զինվորների կենցաղին և առօրյային:

Օրվա այցելությունների եզրափակումը եղավ Գյումրիի Վ. Աճեմյանի անվան թատրոնի դահլիճում հանդիպումը քաղաքի մտավորականության և ղեկավարության հետ: Լեփ-լեցուն դահլիճը խոսում վկայություն էր հավատքի կենդանության և Մայր Եկեղեցուդ ու նրա Գահակալի նկատմամբ ունեցած սիրո և ակնածանքի: Վեհափառ Հայրապետի խոսքերով ասած, սա մի զրույց էր և մտքի հաղորդության անպաճույճ մի պահ՝ ժողովուրդը ներկայացնող և ժողովրդի պատկերը հանդիսացող խավի հետ:

«Սիրելի հոգևոր եղբայրներ, թանկագին արյունակից և հավատարիմ եղբայրներ և քույրեր: Այսօրվան իմ՝ ձեզի խոսելը պաշտոնական խոս-

քի, Հայրապետական պատգամի բնույթ չունի: Ուզում եմ, որ մենք բոլորս զրույցի նստենք իրար հետ, մտերմական զրույցի, սրտից սիրտ, մտքից միտք, հոգուց հոգի հաղորդությամբ: Հռետորական, պաշտոնական, պարագայական, հանգամանավոր, հաճախ ձևական խոսքերը կարող են մի որոշ տպավորություն թողնել, բայց ո՛չ սրտերը հուզել, ո՛չ մտքերը պայծառացնել և ո՛չ էլ կամքերը պրկել: Խոսիլ առանց խոսակցելու ամբողջակաւորեն՝ իր իմաստը չի գտնի: Խոսիլ՝ ունկնդրողին ինքն իրեն հետ խոսիլ տալու նպատակով, այդ է բուն սահմանումը և ճշմարիտ նկարագիրը իրական խոսքի: Երբ Հիսուս խոսում էր, ճշմարտություն էր քարոզում, պարզաբանում, մարդիկ հաճախ ասում էին՝ ո՞վ է սա, ի՞նչ իրավունքով է խոսում. ոչ քահանայապետ է, ոչ փարիսեցի իշխանավոր է, ոչ օրենքի մասնագետ դպիր է, ոչ թագավոր է, ոչ թագավորազարմ է, ուրկե՞ կուգա իր խոսքին ուժին աղբյուրը, գաղտնիքը: Երբ խոսում էր, մարդիկ, ունկնդրելուց հետո, ասում էին իրար. «Իշխանութեամբ խօսի սա եւ ոչ որպէս դպիրքն եւ փարիսեցիքն»:

Գրքից չէր խոսում, աթոռից չէր խոսում, մակաճով չէր խոսում, սուրով, բանակով, նիզակով չէր խոսում: Հոգուց էր բխեցնում ճշմարտություն Աստվածային և դա բաժանում էր հացի պես, հոգևոր հացի պես: Ամեն մարդ, որ ունկնդրում էր նրան, ինքն իրեն հարց էր տալիս. ես ո՞վ եմ այդ խոսքերի հայելիին մեջ, ե՞մ այն, ինչ որ պարտավոր եմ ըլլալ իմ սրտի թելադրությամբը, և եթե չեմ այն, ինչո՞ւ չեմ, ինչ որ պարտավոր եմ ըլլալ: Մենք հաճախ խոսքը նկատում ենք որպես վարագույր, մինչդեռ խոսքը հոսք է և ոչ թե մտածումը ծածկող մի վարագույր:

Այսօր ես ուզում եմ իմ տկար ուժերով ձեզ հետ զրույցի նստել խոսքի այս հասկացողությամբ, և ոչ թե բեմի աթոռից ձեզ հետ խոսել: Հաղորդության, մտքի հաղորդության մի պահ թող լինի այս պահը:

Առաջին մտածումը, որի մասին ուզում եմ ձեզ հետ զրուցել, այն է, որ ներկայումս ամբողջ աշխարհում մի կրոնական վերազարթոնքի շարժում է սկսվել: Որտեղ որ գնաք՝ պատերազմներից հոգնած, մահվան, ավերակի, քանդումի երևույթներից այլևս զզված, պատերազմի, նոր պատերազմի հավանականությունը այլևս չտեսնող այս մարդկությունը շվարած վիճակի մեջ է: Այդ ամբողջ նոր քաղաքակրթություն կոչված իրականության մեջ, այսօրվան տեխնոլոգիայով, գիտությամբ, չոր գիտությամբ, առարկայի քննությամբ հագեցած և առատ արտադրության մեջ եղող արևմտյան աշխարհի հագեցումի հասած ընկերության, կարող եմ ասել նույնիսկ հղփացած վիճակի մեջ մարդիկ հարց են տալիս. ինչո՞ւ ենք ապրում, վասն ինչի՞: Կար մի փիլիսոփայություն՝ էպիկուրյան փիլիսոփայությունը, որ ասում էր. «Կե՛ր, ա՛րբ և ուրախ լեր»: Կյանքի մի հասկացողություն է սա. կեր, խմիր և զվարթ եղիր: Բայց կյանքը ա՛յս է: Եթե այս է, ապա մենք ինչո՞վ ենք տարբեր ուրիշ էակներից, շնչող, զգացող, բայց ան-ասուն մյուս էակներից:

Ես հիշում եմ իմ փիլիսոփայության ուսուցչին, երբ մեզ Աթիլիասի դպրեվանքում փիլիսոփայության դաս էր տալիս և ջանում էր բացատրել, թե ի՞նչ է մարդկային կյանքի նպատակը, ասում էր՝ երջանկության որոնումը, և որ Ավետարանի բառերով «երկնից արքայութիւնն է, որ ի ներքս ի մեզ է»: Եվ հանկարծ այդ դասախոսը՝ Շահան Պերպերյան, պատուհանից մյուս կողմ դարձավ և տեսավ կովեր, որոնք վաճքի մոտի պարտեզի մեջ խոտ էին ուտում. գարնան եղանակն էր, խոտն էլ առատ



Գյուղի ոճեսպիսա բաստե. հաճախության էտոլի հաստատ



Գյումրիի պետական թատրոն. հանդիսության ընթացքում հայաստանյան հյուրերի հետ



Վեհափառ Հայրապետը ընդունում է Գյումրիի գնդի զինվորների տողանցը



Հանդիպում Գյումրիի երեխաների հետ



Փանիկի Կաթողիկե եկեղեցում



Վեհարանի առջև տեղի է ունենում Գյումրիի գնդի զինվորների տողանցը

և, հիշելով նախասոկրատյան շրջանի փիլիսոփաներից Հերակլիդեսին, ասեց. «Հերակլիդես մի օր ասել է, եթե երբեք երջանկությունը հաճույքին մեջն է, ինչպե՞ս չենք դառնա և ասի՝ ես կովերը ի՞նչ երջանիկ են, որովհետև կով են: Մենք շեշտակի տարբերություն ենք դնում զգայական հաճույքի և հոգեկան երջանկության միջև: Եթե կյանքը միայն այդ է՝ խմել, ուտել, զվարճանալ, ամեն մարդ կարող է ասել, ի՞նչ իմաստ կա էս կյանքի մեջ. «Մարդոյ որպէս խուոոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկէ: Ընչէ ի նմա հողմ եւ ոչ է, եւ ոչ եւս երեւի տեղի նորա»—ասում է սաղմոսերգուն: **Ոչ թե մարդն է խոտ, մարդու օրերն են խոտի նման, կուգան ու կերթան:**

Մենք, հետևաբար, պետք ունենք ազգովին և իբրև մեկ մարդ մտածելու այս նոր հանգրվանի վրա, մեր պատմական զարգացման պրոցեսի մեջ: Հայաստանը այսօր մի դարձակետի առջև է գտնվում, գգո՞ւմ եք, թե ոչ՝ չգիտեմ, բայց պարտավոր եք զգալ, եթե հայ եք և մասնակից, պատասխանատվության դերով մասնակից մեր Հայրենիքի վերականգնության այն կարևոր և կենսական գործին, որին լծվել ենք մենք որպես պետություն և Եկեղեցի, որպես համալսարան, որպես կրթական հարկ, որպես մանկավարժ, որպես արվեստագետ, որպես բանվոր, որպես գյուղացի, քաղաքացի, որպես վաճառական, որպես տնտեսագետ, որպես ճարտարարվեստի նվիրված մարդ: Յուրաքանչյուրն ունի իր պարտականությունը կատարելու համազգային այս գործի մեջ: Եվ կարևորը՝ ես ո՞վ եմ գիտնալն է, ազգը ո՞վ է գիտնալն է. «Ծանի՛ր զքեզ»,—Սոկրատի խոսքն է:

Ամեն տարի տասնյակ հազարներով երիտասարդներ հավաքվում են Եվրոպական որևէ քաղաքում և չորս-հինգ օր կրոնական խորհրդածության են նվիրում իրենք իրենց: Այս տարի, դեկտեմբերի 28-ից մինչև հունվար 2, Փարիզ քաղաքում հարյուր հազար քրիստոնյա երիտասարդներ և երիտասարդուհիներ հավաքվեցին, ձմեռվան այդ ցուրտ օդին, քնապարկերի մեջ պառկելով, եկեղեցու կամարների ներքև: Իսկ նախորդ տարին Մյունխեն քաղաքի մեջ, Գերմանիա, ութսուն հազար էր ասոնց թիվը: 1997-ին, երկու տարի հետո, մեկ միլիոն երիտասարդներ, քրիստոնյա հավատքով առաջնորդված, պիտի համախմբվեն Հռոմում: Վասն ինչի՞: Իրենք իրենց ճանաչելու և կյանքը արժևորելու համար:

Մենք, որ այժմ գտնվում ենք մեր Հայրենիքի շրջադարձային մեկ շրջանում, անկախություն ունենալը չի բավեր, անկախություն պահելն է կարևորը, անկախ Հայրենիքը ծաղկեցնելն է կարևորը, բնորգավաճիլն է կարևորը, զարգանալն է կարևորը և ոչ թե ունենալն է: Անկախությունը չի տրվում, եթե մի ուրիշ պետություն, ուրիշ ազգ մեզի տար անկախությունը՝ ես նրա մեջ մի մեծ արժանիք չէի գտնի: Մենք է, որ պետք է հոչակենք իրրև հայ, մենք է, որ պիտի լինենք նրա կնքահայրը և մենք է, որ պետք է լինենք նրա շինարարը, ճարտարապետը՝ իրրև ամբողջ ժողովուրդ միասնությամբ: Այնպես պիտի շրջադարձ ունենանք մենք ներքնապես, հոգեպես: Ինձնից մինչև ամենեն պարզ հայը եթե երբեք հոգեփոխության միջից չանցնի անկախության առեղծումից հետո, կնշանակի մենք ազգ չենք, այլ ամբոխ ենք:

Բարեկամնե՛ր, ես փոքր երեխա էի, գյուղում էի և, ինչպես ասեցի Էջմիածնի Մայր Խորանի վրա, Գահակալության առաջին պահին, պատարագի ընթացքին, ես ձեզ նման հայրենի հողի վրա չեմ ծնվել, բայց Հայրենիքը իմ մեջն է ծնվել ա՛յն օրից, երբ ես Այբ, Բեն, Գիմը ճանաչեցի, ա՛յն օրից, երբ իմ մորս օրորոցի մեջ լսեցի նրա երգը, թեև անգիտակից

կերպով, ա՛յն օրից, երբ իբրև պատանի մեծացա գյուղի մեջ և իմ ուսուցիչներս, մեծ մայրիկիցս սկսյալ, ինձ մի երգ սովորեցրին, ազատության երգը.

Ես անբարբառ մի մանուկ երկու ձեռքս պարզեցի,
Եվ իմ անզոր թևերով Ազատություն գրկեցի:

Եվ գուցե մենք այդ ազատությունը: Երազեցինք տասնամյակնե՞ր շարունակ տեսնել այդ ազատությունը և ունեցանք, փառք Աստծու, և մենք պարտավոր ենք այլակերպվելու, պայծառակերպվելու: Այս բառերը մոռացվել են երբեմն մեր ժողովրդի մեջ՝ հոգիով պայծառակերպվենք: Սուրբ Էջմիածինը, Մայր Աթոռը մեր պայծառակերպության տեղն է, այն տեղը, ուր Աստված իջավ և մեր հողին մեջ Քրիստոս իր կնիքը դրավ: Այդ հողը նվիրական է: Կրոնքը մեր ամբողջ ազգային շարվածքին մեջը տարրացավ, անքակտելիորեն միացավ, ընդելուզվեցավ, շաղախվեց: Հարց տվե՞լ եք դուք ձեզի, պատմությունը ուսումնասիրե՞լ եք լրջորեն, եղե՞լ է աշխարհումս մի տեղ, երկրագունդի չորս ծագերում կա՞ արդյոք մի տեղ, եղե՞լ է մի ժամանակ, որ մարդկությունը եղած լինի և կրոնքը եղած չլինի: Չի՛ եղել: Գիտնականներ, ընկերաբաններ այդ են ասում: Գնաք Ափրիկե, կտեսնեք, որ բնութենապաշտ և ոգեպաշտ կրոնքներ կան տակավին: Կրոնքների ձևերը կան: Աստվածայինը, գերմարդկայինը, խորհրդավորը, անըմբռնելին արտահայտելու եղանակները կտարբերին, բայց ոչ ոք կարող է հերքել Աստծու գոյությունը: Ո՛չ ոք կարող է մերժել Աստվածայինի ներկայությունը մեր մարդկային գոյության բոլոր շաղվածքին, կազմվածքին մեջ: «Ամեն բանի վրա կարող եմ կասկածել,—ասել է ֆրանսիացի փիլիսոփա Դեկարտը,—բայց չեմ կարող կասկածել կասկածելուս վրա»՝ այսինքն չեմ կրնար չհավատալ բանի մը: Եթե անհավատ եմ, կնշանակի հավատում, որ անհավատ եմ: Առանց հավատքի ոչ ոք կարող է ապրել, բայց անհավատ մարդ գոյություն չունի: Տեսակցաւորեն մարդիկ կրնան ճամարտակել, մտքով խաղեր խաղալ: Ես հիշում եմ, մեծ գրագետ, իսկապես շատ մեծ գրագետ Լևոն Շանթը փիլիսոփայականորեն ինքն իրեն հայտարարել էր միշտ իբրև անհավատ: Բայց գիտե՞ք, երբ մահանում էր Բեյրութի մեջ, Լևոն Շանթը կանչեց իր աշակերտին և իր վերջին վայրկյանները ապրեց Նարեկացին ունկնդրելով՝ իր աշակերտին Նարեկացի կարդալ տվեց:

Մեր Եկեղեցին քրիստոնեական կրոնքին մարմնացումն է հայ կյանքի մեջ, հավատքի ուժականության աղբյուր է եղել մեր ամբողջ պատմության ընթացքում: Հարց եմ տալիս ձեզ, հետո դուք էլ հարց տվեք ձեզ. Հիսուսի 12 առաքյալները, խեղճ մարդիկ՝ մեկը ձկնորս, մյուսը մաքսավոր և այլն, ո՛չ զենք ունեին, ո՛չ գիտություն ունեին, ո՛չ բանակ ունեին, ո՛չ հեղինակություն ունեին, ո՛չ ալ իմացական պատրաստություն ունեին, ի՞նչ ուժով կարողացան նրանք ամբողջ աշխարհով մեկ քրիստոնեությունը տարածել՝ հավատքի ուժով: Սպանեիր անոնց՝ հավատքի համար կմեռնեին: Ամեն մեկ քրիստոնյա, որ կրկեսում, հռոմեական կրկեսում, հռոմայեցի կայսեր և հռոմայեցի լեգեոնականների աչքերի առջև գազանների բերանների մեջ կհոշոտվեին, երբ մի քրիստոնյա այնտեղ մահանար, հարյուր քրիստոնյա կծնվեր դիտողների մեջ: Ներանք հարց կտային. ի՞նչ մարդիկ են սրանք, որ իրենց հավատքի համար մեռնում են: Այդ հավատքն էր ուժը: Մեր նահատակները, մեր հերոսները ինչո՞վ մեզ կտակեցին այդ հավատքի գործությունը, եթե ոչ՝ իրենց նահատակության վկայությամբ:

Ը դարի ընդհանրական Եկեղեցու հայրերից Իգնատիոս Աստվածազգյացը ասում է. «Ես, եթե պահանջվի, պարտավոր եմ հացահատիկ դառնալ և գազանի բերանի մեջը իբրև աղորիք աղվիլ, որպեսզի հաց դառնամ ուրիշների համար»: Ի՜նչ խորախորհուրդ հավատք...:

Մենք մեր Եկեղեցու դերը ճիշտ պետք է հասկանանք: Ես այդ Եկեղեցու համար ոչ մեկ փաստաբանություն անելու պարտավոր եմ: Դիտեցեք մեր եկեղեցին, դիտեցեք մեր քարերը, խաչքարերը, մագաղաթները, բոլորից ի՞նչ կզգանք՝ այնպես, ինչպես աղբյուրից ջուր կխմենք, հավատք կզգանք: Երեկ ես Հառիճում էի, այդ ձորաբերանին, այդ լեռան պռունկի վրա, ի՜նչ հրաշագործություն է դա. «Երբ մարդիկ լռեն, քարերը պիտի աղաղակեն» և քարերը աղաղակում են: Ես իմ աչքերով տեսա, 1966 թվականին խորհրդային կարգերի տակ երբ տակավին կգտնվեր Հայաստանը, ես այն ատեն երեք անգամ եկել եմ Հայրենիք, գնացի Մուղնու վանք, այդ վանքի մեջ ես աչքերովս տեսա, որ վանքն ու եկեղեցին ամբողջ հարդով էր լցված, բայց նույն այդ աչքերով ես հարդ չտեսա՝ տեսա մայրիկներ, որոնք գալիս էին և մոմ վառում պատի վրա, դրսում: Բողոքում էին: Եկեղեցին չի՛ կարող վերածվել հարդանոցի:

Սիրելինե՛ր, շատ մարդիկ գտնվեցին, ուժեղ մարդիկ գտնվեցին աշխարհում, որոնք մերժեցին Աստծու գոյությունը: Նիցշեն, գերմանացի մեծ փիլիսոփան, ասեց. «Քրիստոնեական եկեղեցիները պիտի վերածվեն Հիսուսի գերեզմանների»: Ուրիշ մեկն ասեց. «Կրոնքը ափիոն է», «կրոնքը միջոց է ժողովուրդները շահագործելու համար»: Մեկ ուրիշը գիրք գրեց և գրքի վերնագիրն էր. «God is dead», «Աստված մեռած է»: Ուրիշը գրեց նրա դեմ, ասեց. «Yes, God is dead, but which God?» «Այո՛, Աստված մեռած է, բայց ո՞ր Աստվածը»: Քո շինած Աստվածը կմեռնի, բայց քեզ սրսրած Աստվածը կապրի, քեզ ստեղծող Աստվածը կապրի: Ուրիշ աստվածություններ ստեղծվեցին, գաղափարաբանություններ, իդեոլոգիաներ աստվածների վերածվեցին: Հիմա տնտեսությունը, սպառողականությունը, տեխնոլոգիան տեսակ մը աստվածությունների են վերածված: Բայց այդ բոլորը կերթան: Մենք մեր պատմության մեջ եկած ենք այն պահին, այսօր, եթե երբևիցե պատմությունը կարդալ գիտենք և նշանները կարդալ գիտենք, կգանք այն եզրակացության, որ մենք այսօր վերածնության շրջանի մը մեջ կապրինք:

Աստված տված է մեզի մի նոր ճանապարհ՝ հայորեն քայլելու, հայի կյանքով քայլելու և այդ ճանապարհի մեջ մեր հավատքը վերստին ուժականության բերելու: Եթե այդ հավատքը ներթափանցի մեր հոգիների մեջ, մեր երեխաները միշտ կլինեն մաքուր: Ծող մեզմից լսեն, մեր կյանքով իմանան, թե հավիտենականի մասնիկն ենք մենք՝ «Եւ արար Աստուած զերկինս եւ զերկիր: Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ», քառս էր, «Եւ ասաց Աստուած, Եղիցի լոյս, եւ եղեւ լոյս: Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն, օր մի»: Աստվածաշնչի առաջին գլուխը բանաստեղծությունների բանաստեղծություն է: Ես էլ իմանում եմ, որ աշխարհն չստեղծվեց վեց օրվա մեջ: Աշխարհն ստեղծվեց հոլովո յթով, դարերի ընթացքում: Աստվածաշունչն ասում է. «Մարդն չէր, որ գործէր զերկիր», «Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ» (Ծննդ. Ա. 2):

Քառս էր. մա՛րդն էր, որ իմաստ տվավ տիեզերքին: Առանց մարդի ծառն ի՞նչ է, առանց մարդի քարն ի՞նչ է, առանց մարդի ջուրն ի՞նչ է: Մարդն է պսակը տիեզերքի ստեղծագործության: Մենք Աստվածային կայծ ունինք մեր մեջ, Աստվածանմանություն ունինք մեր մեջ: Մոռացել ենք այս

բանը: Մենք միայն մարմնի մեջ ենք մնացել, մոռացել ենք մեր մեջ եղող կնիքը, դրոշմը, պատկերը Աստուծո: Երբ Հիսուս եկավ, այդ պատկերը, որով մենք արարվել էինք, սրբեց, փոշին դուրս բերեց և մեզ վերստին հայտնաբերեց այդ պատկերով: Ահավասիկ այդ պատկերը դրոշմվեց հայի ճակտին այն օրվանից, երբ Հայոց Տրդատ արքան և Լուսավորիչը՝ Գրիգոր Պարթևը, միաձևաբար հռչակեցին քրիստոնեությունը որպես պետական կրոն մեր Հայաստան աշխարհի, 301 թվականին:

Եղբայրներ և քույրեր, եթե կարդաք Ագաթանգեղոսը, Հայոց Դարձի պատմագիրը, պիտի տեսնեք ի՞նչ գեղեցիկ պատկեր է դա: Ասում է, առասպելական ոճով, Հայոց Տրդատ արքան գնաց ի վեր՝ ի Մասիս, յոթ ժայռեր դրավ իր ուսին, ամեն մեկ ժայռը յոթ մարդով կարելի չէր շարժել, բերավ և հայոց եկեղեցու հիմքը դրեց: Աշխեն թագուհին, Խոսրովիդուխտ արքայաքույրը իրենց բեհեզյա զգեստները գոգնոցի վերածած հող թափեցին այդ հիմքում: Ի՞նչ խորհրդավոր պատկեր է, ի՞նչ ներշնչողական պատկեր, և շինականները, գյուղացիները, ամբողջ ժողովուրդը աշխատեց, որ այդ եկեղեցին շինվի: Այսօր մենք պատրաստվում ենք տոնելու 1700-ամյակը մեր քրիստոնեացման, որպես պետական կրոնիք հռչակման: Ես մի գրքույկ եմ գրել՝ «1700-ամյակը Նոր Հոգեգալուստ»: 1700-ամյակը մեզ համար, հայ ազգի համար Սուրբ Հոգվույն վերստին թափանցման, մեր հոգիների մեջ ներթափանցման և մեր հոգիների կենսավորման, կաղապարման ուժ է տալիս: Մենք ամեն ինչ պիտի անենք, որ պատիվը մեր ժողովըրդին՝ վերածենք շարժումի, կյանքի, գործի: Աշխարհումս չկա մի ուրիշը, որ 1700-ամյակ կարենա տոնել: Մենք եղել ենք առաջինը, բայց այսօր չենք վերջինը: Ոչ թե պատմությամբ պիտի հպարտանանք, այլ պիտի կարենանք մեր ներկան արժևորել:

Ահավասիկ իմ մտորումները, որ առաջին հանդիպմանը ես ձեզ հետ բաժանեցի և կուզեմ, որ գանք այն եզրակացության, թե այսօր, Հայաստանի անկախության դարաշրջանին, իմ տկար անձիս վիճակվեց, կրել կաթողիկոսական լուծը: Ես շատ ծանր լուծի տակ եմ դրել իմ գլուխը: Ամեն մարդ սպասում է, բայց այդ բոլորը կարելի է միայն համայնությամբ, ամբողջությամբ, գործակցությամբ, սերտակցությամբ, մասնակցությամբ, ներդաշնակությամբ, համակարգումով: Խնդրում եմ օգնել ինձ: Մեր գործերը անհատների ծնունդ չեն, հավաքականության ծնունդ են: Գիրը չգտնվեց միայն Մեսրոպ Մաշտոցով, գիրը գտնվեց Մեսրոպ Մաշտոցով, Սահակ Կաթողիկոսով, Վռամշապուհ թագավորով: Քրիստոնեությունը մենք չընդունեցինք միայն Գրիգոր Լուսավորիչով, այլ Տրդատ թագավորով և ուրիշներով՝ ամբողջ ժողովրդով:

Բարեկամնե՛ր, եկեք այսօր Շիրակա թեմի մեջ, ուր գտնվում եմ այսքան ժամանակ, եկեք բոլորս անցնենք մի փոփոխության, բարեփոխության՝ հոգեփոխության միջից: Բոլորս, ինձնից սկսյալ մինչև ամենեն պարզ դպրոցական աշակերտը, որ այսօր տեսա, մինչև գիվորականը, որին ողջունեցի քիչ առաջ, մինչև այն տնազուրկ լենինականցի հայը: Գացի-տեսա տակավին կիսավեր և կամ անավարտ տները, որոնք շինվում են: Ամեն մեկը այլևս թող դադարի իսպառ ավաղելուց, արտասվելուց՝ եկա՞ն, կոտորեցի՞ն, ջարդեցի՞ն, քանդեցի՞ն: Այդ հոգեբանությունից պիտի դո՛ւրս գանք: Դադարենք այլևս ջարդված ազգ լինելուց: Վերածնված ազգ ենք, անցյալի դեպքերից մեր միտքը սևեռենք ներկայի վրա և մեր ապագայի վրա: Ոչ ոք

կարող է արևը տեսնել, բայց ոչ ոք կարող է առանց արևի որևէ մի բան տեսնել:

Ձե՛ք կարող Աստծուն տեսնել, բայց չեք կարող առանց Աստծու ուրիշ երևույթներ տեսնել և հասկանալ: Ինչպես ասել է մի արվեստագետ՝ «Տիեզերքը ամբողջ հագուստն է, հանդերձն է Աստծու»: **Նայեցեք տիեզերքին: Իսկ ես ասում եմ.** «Հայաստանը զգեստն է Աստծու, նայեցեք ձեր շուրջը և Աստված պիտի տեսնեք»: **Բացե՛ք քարերը, և եկեղեցին, զԱստված նրանց միջից կգտնեք, բացե՛ք գիրքերը՝ Աստծու խոսքն են գանգահարում և դողանջում: Մեկ խոսքով, մենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին վերանորոգության շունչով պետք է նայենք և Էջմիածնի լույսը անուցող ձեզ բոլորիդ բաժին լինի, բայց դուք էլ անցնեք հոգեփոխության միջով: Իբրև ազգ այլևս դառնանք պետականորեն մտածելու եղանակին: Այդ եղանակը ինձ համար հետևյալն է, թողնենք մանր-մունր, ճղճիմ, ժամանակավոր, անցավոր և մաշեցնող հարցերը: Բարձրանանք, վերատին և ճշմարտապես լինենք ազգ, պետություն, Եկեղեցի՝ մեկ ազգ ենք, մեկ Եկեղեցի:**

Աստված մեզ տվել է այդ ուժը, մենք օգտագործենք այդ ուժը: Իմ այս խոսքը ես փակում եմ ձեզ հրավիրելով այն մեծ շրջադարձության, հոգեդարձության, որ մեր արմատներից եկող ավիշին հետ հաղորդություն է, այսինքն մեր հավատքին ակունքներից ջրի զորությունը մեր կյանքի անդաստանի մեջ մուծենք: Պետք է բացվենք, որպեսզի ընդունենք այդ քաղցրությունը, ինչպես ասում է մեր Պատարագը. «Մատի՛ք առ Տէր և առէք զլոյս, ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր»: **Ձեք կարող լույսը տեսնել, եթե չբացեք ձեր աչքերը, չեք կարող իմանալ հավատքին ուժը, եթե չճաշակեք այդ հավատքը: Հետևաբար օրն է վերազարթոնքի, օրն է հայրենաշինության, օրն է պետականության զորացման, օրն է Եկեղեցու միասնականության, օրն է հավատքի վերածաղկման»:**

ՄԱՅԻՍ 7, ԿԻՐԱԿԻ

«Զմիմեանց բեռն բարձէք,
եւ այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի»:
(ԳԱՂԱՏ. Զ 2)

Վաղ առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց և զննեց Գյումրիի խոնարհված եկեղեցիները՝ Ս. Նշան, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ամենափրկիչ, ապա հոգևոր դասի, տեղական իշխանության ներկայացուցիչներ նահանգապետ Անդրանիկ Քոչարյանի, Գերագույն խորհրդի քարտուղար Վարազդատ Ավոյանի, Գյումրիի քաղաքապետ Միքայել Վարդանյանի և այլոց հետ մուտք գործեց թեմի առաջնորդանիստ Յոթվիրաց Սուրբ Աստվածածին եկեղեցի, որտեղ հավատացյալների բազմությունը ուրախության արցունքն աչքերին և գոհության աղոթքը սրտում ու շրթներին դիմավորեց իր հոգու Հովվին ու մեր Եկեղեցու քահանայապետին:

Այստեղ օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը, որի՝ Վեհափառին հայտնած շնորհակալական խոսքից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցու սրբազան Խորանից հոգևոր արիության, քաջության և Աստուծո բարի կամքի ներքո ու Սուրբ Եկեղեցու հովանավորությամբ ապրելու հրավիրեց Շիրակի հավատացելոց միջոցով ողջ հայ ժողովրդին.

«Հավատացյալ ժողովուրդ Շիկակա թեմի,

Այսօրվա իմ կրոնական խոսքին անցնելուց առաջ ես իմ առաջին խոսքը վերաառաքում եմ դեպի Աստված, դեպի երկինք, և փառք ու գոհություն եմ տալիս մեր Արարչին, կյանքի բաշխիչին, Երկնավոր Հորը, որ ինձ շնորհ արեց, պատիվ ընծայեց այսօր ձեզ հետ աղոթակից լինելու Սուրբ Աստվածածին Յոթվիրաց եկեղեցում, առաջին անգամ լինելով իմ կյանքում և իմ առաքելության դաշտում որպես նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս: Այս Պատարագը և այսօրվա հոգևոր խոսքը չեն կարող սովորական մի դեպք լինել իմ կյանքում: Այս Պատարագին և այսօրվան խոսքով ես ուզում եմ ձեզ հետ միասին Աստծուն փառք տալ, որ Նա Իր ամենատես աչքով միշտ հովանի և պահապան է եղել Շիրակա աշխարհին և նրա ժողովրդին: Ես սրտի պարտք եմ զգում իմ խորին շնորհակալությունները և բարձրագույն գնահատանքը հայտնել ձեր հոգևոր առաջնորդին՝ Տեր Գրիգորիս արքեպիսկոպոս Բուճիաթյանին, թեմական խորհրդին, ինչպես նաև մեր Հայրենի պետության ներկայացուցիչներին՝ նահանգապետին Շիրակա նահանգի, քաղաքապետին Գյումրիի և բոլոր նրանց օգնականներին, որոնք լծվել են նոր Հայրենիքում նոր լույս բերել, վիրավորյալ Հայրենիքին դարմանում բերել: Ազգակերտումի, պետականորեն ինքնատահայտության ու արժանապատվության զգացումը և գաղափարը ներարկել մեր ժողովրդին հայրենաշինության միջից: Ես ողջունում եմ նաև այստեղ մեր սիրելի եղբայրներին՝ Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնց ներկայության մեջ ես տեսնում եմ իրենց սերը և իրենց հարգանքը հանդեպ Մայր Եկեղեցուն՝ Առաքելական Սուրբ Եկեղեցուն Հայաստանյայց:

Սիրելի՛ք, այսօրվան իմ խոսքի բնաբան ընտրել եմ քիչ առաջ այս բեմից կարդացված Հովհաննու Ավետարանի մի հատվածից, մի խոսք, որ իմ հոգու խորքում շատ խոր արձագանք է ունեցել և վստահ եմ ունենալու է մեր բոլորի կյանքերի մեջ: Հիսուս ասեց. «Որ զբաղի իմ լսէ եւ հաւատայ Այնմ, որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանս յաւիտենական: Զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ, որ առաքեացն զիս»:

Հիսուս ժողովրդին ասում է. «Նա, ով իմ խոսքերը կլսի և կհավատա Նրան, ով ինձ ուղարկեց, նա հավիտենական կյանքին մասնակից կդառնա, որովհետև ես իմ կամքը չէ, որ արտահայտում եմ իմ խոսքերի միջից, այլ կամքը Նրա, ով ինձ առաքեց»,

Եբրայեցի ժողովուրդը Հիսուսի մարդեղության օրերին, երբ Նա երեսուներեք տարիներ ապրեց այս երկրի վրա՝ շա՛տ-շա՛տ խոսքեր էր լսել, Աստծու անունով շատերն էին խոսել, մարգարեներն էին խոսել, պատրաստել էին ժողովրդի միտքը, սիրտը, կամքը, ընդունելության զգայարանքը գալիք ամբողջական և կատարյալ հայտնության Աստուծո, որ Քրիստոսի անձն էր, կյանքն էր և խոսքն էր: Բայց ժողովրդի սիրտը տակավին կարծր էր, չուներ այն կերպընկալ վիճակը, որի մեջ Աստծու խոսքը կարող լիներ դրոշմվել անջնջելի հատակ կերպով: Տեսեք, ի՞նչ է ասել Հիսուս. «Ես եմ հացն Կենաց», ոչ թե դա է հացն կենաց: «Ես եմ Ճանապարհը» և ոչ թե այնտեղ է ճանապարհը: «Ես եմ ճշմարտությունը» և ոչ թե սա տեսությունն է ճշմարտությունը: «Ես եմ Կյանքը» և ոչ թե էնտեղ է կյանքը: «Բանն մարմին եղև»: Խոսքը Աստծու մարմին զգեցավ, մարդ եղավ մեզ նման, որպեսզի մեզ անի Աստծու նման: Դա է ամբողջ քրիստոնեության իսկությունը: Աստված յոթերորդ եկնքում առանձնացած մի ուժ չէ,

Աստված կա, դուք ուզեք կամ չուզեք, բայց հարցն այն է, Աստված կա՞ ձեր կյանքում, թե՞ չկա ձեր կյանքում : Այդ է մեր հիմնական պարտավորությունը որպես քրիստոնյա ժողովուրդ: Եթե եղել է այն պատմական փառավոր իրողությունը, որ մեր ազգը պետականորեն, ազգովին ընդունել է զՔրիստոս իբրև ճշմարիտ արտահայտությունը Աստծու, եթե երբեք նա ընդառաջել է Աստծու ճշմարտությանը, ընդունել է այդ ճշմարտությունը և հռչակել է քրիստոնեությունը պետական կրոն՝ բոլոր ազգերի մեջ լինելով առաջինը, դա մեզ կդնի լուրջ և ծանր պարտավորության առջև:

Մենք չպետք է ապրենք միայն հիշատակային կյանքով, որ եղել ենք առաջինը, այլ այսօր ե՞նք, թե՞ չենք: Որքա՞ն ենք, ինչքա՞ն աննկեղծությամբ, և քրիստոնեությունը մեր կյանքում ինչպե՞ս է արտահայտվում մեր առօրյա կենցաղում: Դա՛ է մեզ համար հիմնականը: Այսօր, երբ աճապարանքով մի ամիսե ի վեր մեր ազգը ինձ կոչել է այդ ծայրագույն, բարձրագույն, բայց միանգամայն և ծանրագույն պարտավորության, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, ես ոչինչ եմ, եթե ոչ արձագանքն Աստծուն՝ ձեր բոլորի ուխտընդրության համար: Ես փոխանցողն եմ. հեղինակը ճշմարտության՝ Աստված Ինքն է, կտակողը մեզ ճշմարտության՝ Քրիստոս Ինքն է, գայն մեզի որպես Սուրբ ժառանգ թողնողը՝ մեր սուրբ հայրերն են: Աստված խոսեց, Աստված գործեց մեր Հայրենիքում 1700 տարիներից ի վեր: «Ան, որ կլսե իմ խոսքը և կհավատա նրան, ով ինձ առաքեց, նա հավիտենական կյանք կընդունի», չմոռանաք այս խոսքը: Մենք այսօր եկել ենք այստեղ Շիրակա թեմին հոգևոր սիրտը հանդիսացող Սուրբ Աստվածածին եկեղեցի՝ ներշնչվելու համար մի անգամ ևս և հաղորդ դառնալու այն կյանքին ու այն ճշմարտության, այն խոսքին, որ գալիս է Ավետարանից՝ Քրիստոսաղբյուր այն ակունքից, որտեղից ճշմարտությունը կենդանի և կենդանարար ջուրի նման, կենդանի և կենսատու հացի նման բաշխվում է:

Ես ուզում եմ այսօր գործնականորեն մի երևույթի անդրադառնալ, որ իմ 43 տարիների հոգևորական կյանքում հաճախ պատահել է և ուզում եմ այսօր այդ փորձառությունս ձեզ հետ բաժանել: Երբեմն մարդիկ ինձ ասում են՝ «Հայր մեր» աղոթքում, Տերունական աղոթքում, երբ ասում ենք «Եղիցին կամք Քո», որտե՞ղ է այդ կամքը, ինչպե՞ս իմանանք Աստծու կամքը: Այսօրվան մեր բնաբանի մեջ վերջին տողը չմոռանանք. «Ոչ գկամս իմ, այլ գկամս այնորիկ, որ առաքեացն զիս»: Ո՞ւր է այդ կամքը Աստծու: Բաց գիրք է այդ կամքը, եթե կարդալ եք իմանում Ավետարանը: Քրիստոս Աստծու կամքը հայտնել է բոլորիս, մենք, սակայն, զգայո՞ւն ենք, ընկալո՞ւչ ենք, ընդունո՞ւմ ենք այդ կամքը Աստծու և խառնո՞ւմ ենք էդ կամքը մեր մեջ՝ մեր կամքի հետ: Մեր կամքը նրանո՞վ ենք դրոշմում, նրանո՞վ ենք ոգեկավարում. թե մենք ուզում ենք անել այն, որ մեր պարագայական ցանկություններն են այսօրվան հետ եկող, հովի նման եկող, հովի նման գնացող: Որտե՞ղ է մեր կեցվածքը Աստծու կամքի նկատմամբ:

Եթե դուք կարդաք Հեռան քարոզը Հիսուսի, Մատթեոսի Ավետարանի Ե գլխից մինչև Է գլուխը, այնտեղ կտեսնեք ճշմարտության առաստաղոս սղբյուրը: Այդ փոքրիկ բաժինը Ավետարանի՝ մեր ժողովրդահոգի, Աստվածատես և հայրենապաշտ Հայրապետներից Խրիմյան Հայրիկը կոչել է «Մարգարիտ երկնից արքայութեան»: Այդ երեք գլուխները Ավետարանի, որոնք երբ կարդացվեն բաց հոգով, բաց մտքով, բաց սրտով, մարդս կկերպարանափոխվի, մարդս Աստծու կնմանի: Այդ տողերից մեկն եմ մեջբերում ես և այդ տողի մեջ կա ամբողջ Ավետարանը խտացված. այդ տողը Հիսուս Ինքն է մեզ

ասել. «Ինչ որ ցանկանում ես, որ ուրիշը անի քեզ համար, դու այնա նույնը նրա համար»: Սրա մեջ են խտացված, ասում է Հիսուս, ամբողջ օրենքի գրքերը Հին Կտակարանի և մարգարեները: Բոլորին միտքը այս է՝ սերը չի կարող ատելություն ծնել, թշնամուց փուշ չի ծնվի, խաղողից տատասկ չի բուսնի, սերը Աստծու մարդս կբարձրացնի, մարդս ճշմարիտ մարդ կանի: Որտե՞ղ եք դուք տեսել, որ սերը ատելություն ծնի: Առեք դուք արվեստագետին, նկարիչին, բանաստեղծին, երաժշտին, քանդակագործին. նա սիրել է իր նյութը, ամբողջ սերն է դրել իր տաղանդի հետ: Ո՞ր մեկ ստեղծագործ միտքը ատելությամբ կարող է ստեղծագործել՝ ո՛չ մեկ: Ատելությունը կքանդի՝ սերն է, որ ամբողջ կյանքին իմաստ կտա: Կյանքին երջանկության աղբյուրն է այդ սերը և, եթե չես ուզեր, որ մարդը քեզ չարիք անի, դու չարիք մի անի:

Երկրորդ, սիրելի եղբայրներ և քույրեր, Բանը խոսք իմաստով կթարգմանվի, բայց գրաբար իմաստով բանը խոսքը չէ միայն՝ ըսել կուզեմ բառացի խոսքը: Բանը կյանքն է. «Եւ Բանն մարմին եղեւ, եւ բնակեաց ի մեզ», մեր մեջ բնակվեց: Հետևաբար մենք կոչվել ենք իբրև քրիստոնյա հայ ժողովուրդ այդ կյանքը Աստծու՝ մեր կյանքի հետ խառնել, երկինքը երկրին միացնել: Եվ քրիստոնեությունը կամ Հայ Եկեղեցին համբույրն է Աստծուն և մարդկության, համբույրն է Աստծուն և մեր Հայրենիքին: Այսպիսի գիտակցությամբ պետք է մենք զինվենք, այսպիսի գիտակցությամբ պետք է որ մեր կյանքը ապրենք: Բնականորեն ես շատ լավ եմ իմանում, շատ մոտից եմ հետևել Ճիրակա թեմի մեր ժողովրդի կրած տառապանքներին, նեղություններին, ավերածության, երկրաշարժի իբրև հետևանք: Այս եկեղեցում եմ եղել, բոլորդ հավանաբար հիշում եք, այդ աղետից տասը օր ետքը և եկել եմ երջանկահիշատակ և անմոռանալի Վազգեն Ա Կաթողիկոսին հետ միասին՝ տանելու ձեր ցավը, միասին բաժնելու ձեր բոլոր նեղությունները և միասին աշխատելու նեղությունների դարմանումին համար:

Անհավասիկ մոտավորապես յոթ տարիներ են անցել և այսօր ձեր բոլորին ունեմ հատուկ խոսք իմ ապրումիս, իմ համոզումիս արտահայտությունը եղող խոսք: Մենք պետք է այնես դադարենք այն հոգեբանությունից, որ ողբի հոգեբանություն է: Այն հոգեբանությունից, այն վերաբերումից, որով միայն նայում ենք այն բոլոր ավերածություններին, ցավում ենք, դժգոհում ենք, բամբասում ենք: Եղբայրնե՛ր և քույրեր, եկեք վերջ տանք այդ հոգեբանությանը և լծվենք Աստծու տված մեր այս ձեռքերով մեր Հայրենիքը և մեր ավերակները վերաշինելու ճիգիրական և սուրբ գործին: Մարդը իր կոչումով Աստծու գործակիցն է: Աստված կգործի, բայց մարդոց միջոցավ կգործի: Աստծու Որդին որ իջավ, մարդիկ ընտրեց, առաքյալներ ընտրեց և նրանցով գործեց: Դո՛ւք եք Աստծո ստեղծագործության մասնակիցները: Մեր ավերակները վերաշինելու պատասխանատվությունը մեր բոլորինն է, ինձ էլ մեջը նկատի առնելով և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Բայց ես ուզում եմ ի սեր առողջության, ազգային, մարդկային առողջության, որ դուք պատասխանատու զգաք վերաշինության գործին և ուրիշից միայն չսպասեք և չակնկալեք այն գործը, որ մերը՝ առաջին հերթին մերն է:

Երկրաշարժը պատահեց նաև աշխարհումս ուրիշ երկրների մեջ: Նրանք էլ վերք ստացան և իրենց միջոցներով իրենց վերքերը դարմանեցին: Մենք այսօր այնես վերաշինության, վերակազմակերպումի հոգեբանությամբ դրական գործի, աշխատանքի պետք է լծվենք: Հեզվին դադար տանք, ձեռքին ուժ տանք, դժգոհության վերջակետ դնենք և կամավոր ծառայության ամբող-

ջական ինքնըճնշումի դուռները բանանք մեր կյանքի մեջ: Ասեմ ձեզ, դրանից ավելի առողջարար սկզբունք չկա կյանքում:

Գիտեք, մի օր ի՞նչ պատահեց մի քաղաքում, երբ հայերը ցեղասպանությունից ազատված խլյակների, խրճիթների տակ էին ապրում, թիթեղաշեն, տախտակաշեն, ժամանակավոր տների մեջ էին ապրում: Այդ թաղի ղեկավարները մի գիշեր կրակի տվեցին ամբողջ տարածքը: Ժողովուրդը ստիպվեցավ փախչել և հարկավորությանն տակ նոր շենք շինեց: Դա ժխտական ճանապարհով դրական արդյունքի հասնելու եղանակ է: Աստիճանաբար մենք պիտի լծվենք դրական, գործնական, շինարար այն աշխատանքին, որով կարենանք լուել ողջ աշխարհին, մենք՝ Շիրակի ժողովուրդի զավակներս, կատարում ենք մեր պարտքը, հրամեցե՛ք, դուք էլ կատարեցեք ձե՛ր պարտքը: Բայց առանց քո պարտքը կատարելու, մի սպասեր ուրիշին, որ նա կատարի իր պարտքը քեզ համար:

Սկսելով իմ այցելությունը Բազմաբերդ գյուղից, անցա Թալին, ապա Սառնաղբյուր, այնուհետև Արթիկ, գնացի մինչև Ջրաբերդ և Աշոցք, գնացի ամեն տեղ, որովհետև չեմ ուզում ժողովրդի մասին մտքով մտածել: Ուզում եմ տեսնել, նրա հետ հաղորդվել, նրան փոխանցել կենդանի հաղորդությամբ Աստծու պատգամները:

Պիտի երթամ Սպիտակ, պիտի երթամ Վանաձոր, ճանապարհին Ջարդի Ջոր պիտի իջնեմ, պիտի երթամ, նաև ննջեցյալներին հարգանք պիտի ընծայեմ: Բայց չեմ ուզում գնալ առանց ձեր կողմից զորանալու: Դուք եթե ուզում եք ինձ զորացնել, ես ձեր նահատակներին պիտի ասեմ՝ հանգչեցե՛ք, հանգի՛ստ մնացեք, մենք ձեր մահը կյանքի պիտի վերածենք, մե՛նք վերապրողներս, դո՛ւք, մե՛նք՝ բոլո՛րս, Պետություն ու Եկեղեցի, պարզ մարդիկ: Դժգոհելով, բամբասելով, տրտնջալով ո՛վ մեզի կօգնի. մենք մեզ կվնասենք: Քարը քարի վրա դիր, թող տեսնե Աստված, թող տեսնե ուրիշը և պատիվ ընծայե քեզ: Դժգոհանքի խոսքը ոչ մի հարգանք չի ներշնչում: Հոգեփոխության միջից պետք է անցնենք բոլորս: Աստվածաշնչում գրվել է՝ յոթ տարիներ կան սովի, յոթ տարիներ կան առատության: Աղոթում եմ առ Աստված, որ սովի յոթ տարիները գնան պատմության և բացվեն մեր կյանքում յոթ նոր տարիներ վերաշինության, վերակազմության, վերաշխուժացման, վերակենդանացման և վերածննդյան: Մանավանդ նրանք, ովքեր գնացին հազարներով, ձեր հայրերը, մայրերը, եղբայրները, քույրերը, զավակները, որդիները, աղջիկները, մանուկները, նրանք գնացին և ես գիտեմ, որ կարծեք երկնքից նայում են մեզ և փառք են տալիս Աստծուն, որ մեր Հայրենիքը անկախացավ: Մենք ուրիշ պետություն չունինք՝ կամ ե՛նք հայ, կամ չե՛նք հայ: Եթե հայ ենք՝ Հայրենիքով ենք հայ, եթե զորավոր ենք, պետությամբ ենք զորավոր: Այլապես ի՞նչ ենք, ժողովուրդի կտորվա՞նք ենք՝ ի՞նչ: Ազգ ենք՝ գոտի լինենք, ձեռք-ձեռքի տանք, միասնականությամբ, եղբայրությամբ հայու պատիվը բարձր բռնենք, ոչ թե խոսքով, այլ կյանքո՛վ, գործո՛վ: Անհավասիկ թե ինչո՞ւ եմ եկել ես Հայաստան: Եկել եմ մեր ժողովրդի հրավերով, որ իմ կյանքը խառնեմ ձեր կյանքերին՝ իմ հոգևոր եղբայրների և աշխարհական եղբայրների հետ գործակցաբար: Մենք ուրիշ կյանք չունենք այլևս, ուրիշ նպատակ չունենք, բայց միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծաղկումը, ճառագայթումը, հոգևոր գշմարտությունների, բարոյական սկզբունքների քարոզությունը և մեր պետության զորացումը, ամրացումը և մեր Հայրենիքին բարգավաճումը:

Սա՛ է մեր հայրերի կտակը, բարձր շալկենք, որպեսզի ցած, գետին չտեսնի: Այդ սուրբ շալակը մեր ուսերից վար չգա:

Եղբայրներ, քույրեր, իմ առաջին այս խոսքը ավարտում եմ այն մտածումով, որով սկսեցի. Լսեցե՛ք Աստծու խոսքը, հավատացե՛ք Նրան, ով առաքել է Հիսուսին, Աստված՝ Երկնավոր Հայրը մեր, լսեցե՛ք Աստծու կամքը: Եթե ես ճիշտ եմ հասկանում Քեզ, Ո՛վ Աստված, ես Քո կամքը այսօր տեսնում եմ մեր Եկեղեցու վերածնակումի մեջ, Ո՛վ Տեր, Քո կամքը տեսնում եմ մեր Հայրենիքի ամրացման և վերածնության մեջ: Սրա՛ ինձ մի խողովակ, որ այդ կամքը փոխանցեմ իմ ժողովրդին՝ հայ ժողովրդին, որտեղ էլ որ նա լինի, այստեղ՝ Շիրակում, կամ այլ վայրերում: Դո՛ւք, երիտասարդներ, վերջին խոսքս ձեզ է՝ խորանի վրա լինեք թե եկեղեցում, կա՛մ բակում, կա՛մ խանութում, կա՛մ տանը, կա՛մ փողոցում, կա՛մ դաշտում, կա՛մ գործատեղիում: Դո՛ւք, երիտասարդներ, ապագայի աչքն եք՝ բացված դեպի մեր Հայոց պայծառ ապագան: Ձե՛ր հայրերը արին, ինչ որ կարող էին անել, հիմա ձե՛րն է հերթը: Ո՛ր օրվան եք սպասում. գյուղերի մեջ քահանա չկա, հոգևորական ծառայող չկա, երկնքից պիտի չիջնեն, մե՛նք ենք: Մարգարեի նման կանգնենք Աստծու առաջ և ասենք. «Ահավասիկ ես Տեր, ուղարկիր զիս»: **Քաջություն, հոգևոր արիություն, գաղափարական մեծություն, հավատքի զորություն, նվիրումի կամք,—ասոնք են, որ կմնան, աշխարհը կպայծառացնեն ու կվերաշինեն: Դժգոհանքը, բամբասանքը. տրտունջքը մարդս կապանեն, կյանքի մե՛ջ մարդս կապանեն, բայց նպատակասլաց տեսիլք, կամք, հավատք, գաղափար, ծառայություն, զոհողություն,—սրա՛նք են, որ մարդս Աստծուն կնմանցնեն: Աստված Ի՛նքը զոհվեց խաչի վրա մեր սիրույն համար և մեր մեղքերի համար: Աստված եթե Ինքը խոնարհեցավ Իր Երկնային Աստվածային փառքից ու մարդ դարձավ, մենք ի՞նչ ենք անելու: Պետք է գնանք մեր եղբայրներին հոգևոր սնունդ տանք, որպեսզի այս Եկեղեցին ծաղկի: Երկու տեսակի չափանիշներ կան կյանքում՝ գնայունը և մնայունը: Եթե գնայունին ետևից գնանք, մենք էլ կգնանք: Ինչպես հայրենի բանաստեղծն է ասում. «Հարդը գնում է, ցորենն է մնում»: Որտե՞ղ է մեր ցորենը, մեր հոգեկան առաքինությունները, մեր բարոյական առողջությունը, մեր ծառայական կամքը, մնացյալն ամբողջ հեքիաթ է, սուտ է, ժամանակավոր է, անցավոր:**

Ինչ որ կմնա և ձեզ կպահի և ձեզ անմահության բնակիչ կդարձնի՝ այդ Աստծու խոսքին, կամքին գործադրումին մեջ է. «Որ լսէ զբանն իմ եւ հաւատայ Այնմ, որ առաքեացն զիս, նա՛ ընդունի զկեանսն յաւիտենականս»: **Այդ հավիտենական կյանքի ճանապարհորդները եղան մեր հայրերը, մենք էլ չենք կարող այդ ճանապարհից դուրս գալ և գնալ մայթերի վրայից և կամ գնալ փշերի ճամփով: Քայլենք մեր հայության Մայր Ուղիով՝ Եկեղեցու, Հայրենիքի, Պետության ճամփով և ի ծառայություն մարդկության և ի պանծացում Աստծու փառքին հավիտյանս հավիտենից: Ամեն»:**

Սուրբ Աստվածածին եկեղեցում արտասանված Հայրապետական պատգամը նաև հրաժեշտի խոսք էր՝ ուղղված Գյումրիի ժողովրդին, որի տառապանքին ցավակից, աշխատանքին գործակից և աղոթքին աղոթակից եղավ Վեհափառ Հայրապետն այս երկու օրերի ընթացքում՝ ճանապարհելով և ճանապարհվելով նրանից: Սակայն վերջնական հրաժեշտը Գյումրիին տրվեց Ջարդի Ջորում և Շիրակի գերեզմանատանը, որոնցից առաջինը հավերժացնում է հիշատակը շուրջ 18.000-ի հասնող հայերի, ովքեր զոհ գնացին



Ստեփանավանում



Գյումրի: Զարդի ձորում. 1915 թ. զոհերի հիշատակի ոգեկոչում

թուրքական արշավանքին 1920 թվականի ևահանջի ժամանակ, իսկ երկրորդը՝ 1988 թվականի աղետալի երկրաշարժի ևահատակների: Այստեղ, Հոգեհանգստյան արբազան արարողությունից հետո հրաժեշտ տալով տեղի ժողովրդին, Վեհափառ Հայրապետը մեկնեց դեպի Վանաձոր:

Վանաձոր տանող ճանապարհին գրեթե բոլոր գյուղերում գառնուկների մատաղներով և ծաղիկների տարափով էին ընդունում ու բարի գալուստ մաղթում Վեհափառ Հայրապետին և ցանկանում ու աղոթում, որ Աստուծո աչքը ամենատես և Աջը ամենազոր մշտապես հովանի լինեն Հայրապետին իր առաքելության ընթացքին:

Ձնապած տեղատարափ անձրևին, վանաձորցիները Սուրբ Աստվածածին եկեղեցում, գլխավորությամբ տեղի քահանա հայրերի, թեմական խորհրդի և քաղաքային իշխանությունների՝ հանձինս քաղաքապետ Վ. Մաուինյանի և ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Արամ Մանուկյանի, մեծ աշխույժով և խանդավառությամբ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին: Վեհափառը Գյումրիի Սուրբ Աստվածածին եկեղեցու լուսաճառագ սուրբ խորանից համբույրով ողջույն էր բերել Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցուն, որոնց միախառնման հաղորդալարը Սուրբ Էջմիածնի Մայր տաճարն էր առաքելահաջորդ և Լուսավոչչաժառանգ Գահակալով.

«Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի Տէր փառք Քեզ»: Ի խորոց սրտի այժմ ծունկի կգամ իմ հոգու մեջ և աչքերս մի անգամ ևս երկինք բարձրացնելով, փառք կտամ Աստծուն, որ ինձ շնորհեց այս բացառիկ առիթը և առաջին ապիթը՝ լինելու ձեզ հետ աղոթակից այս Սուրբ Աստվածածին տաճարի մեջ և առ Աստված վեր առաքելու գոհություն ձեր բոլորի հավատքի կենդանության և ձեր կապվածության՝ սիրո կապով, ձեր առնչության, ներտակցության համար մեր դարավոր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և նրա հոգևոր կենտրոնը եղող մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Առաջին անգամն է իմ կյանքում, որ ես գտնվում եմ այս քաղաքի մեջ, որ երեկ կոչվում էր Կիրովական և այսօր կոչվում է Վանաձոր: Չգիտեմ, ուրիշ դարերին ի՞նչ է կոչվել, բայց ինձ համար ինչ անուն էլ որ տրվեր, այս հայկական դարավոր հողի վրա ապրող մեր ժողովրդի զավակները երեք հիմնական առաքինություններով են միայն, որ կկարողանան իրենց հայ անունը արժեցնել և հողին իմաստ տալ:

Առաջին. Աստվածպաշտություն: Ով ինքն իրեն կկտրի Աստծուց, կդադրե ճշմարիտ մարդ լինելուց, որովհետև մենք ստեղծվել ենք Աստծու պատկերով՝ «եւ արար զմարդն հոգի կենդանի»: Մենք նյութ չենք, սոսկ մարմին չենք, մենք միայն ժամանակով չենք չափվիր, մեր կյանքը չի վերջանա այս հողի ներքև, հողից կսկսե, Աստծու շնչով կշնչավորվի և անմահության կգնա: Հետևաբար նա, ով ինքն իրեն երկնքից կկտրի, Աստծուց կկտրի և կբաժանի, չի կարող ճշմարտապես մարդ լինել, և ես պիտի ավելացնեմ՝ չի կարող ճշմարտապես հայ լինել: Բացեցե՛ք մեր որևէ էջը Հայոց պատմության՝ հազարամյա պատմության, ո՞ր մեկ բլրակին ճայենք և Հայոց եկեղեցու գմբեթը չտեսնենք, ո՞ր մեկ կողմ ճայենք՝ Սևանա կողի, Վանա կողին, այնտեղ՝ կողիների վրա պիտի տեսնեք տաճարներ: Մեկ խոսքով՝ Աստված միախառնվել է մեր Հայոց պատմության, մեր Հայոց կյանքին և մենք չենք կարող կտրվել Աստծուց մեր Սուրբ Եկեղեցու՝ դարավոր, Առաքելական Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու ճանապարհով մեզ առաջնորդող: Հետևաբար, հայ լինելու առաջին արժանիքը ինձ համար Աստվածպաշտու-

թյունն է: Հայաստանը համբույրն է Աստծու և հայու: Այդպիսի նվիրականությամբ ես ըմբռնում եմ Մայր Աթոռը և մեր Եկեղեցին և, հետևաբար, իմ առաջին խոսքն է ձեզ, եղբայրներս, քույրերս, լավ մտիկ արեք, Աստծու Հոգին ձեր հոգու մեջ կենդանի պահեցեք և ձեր բոլոր արարքների, բոլոր խորհրդածությունների, բոլոր խոսածների մեջ Աստծու ներկայությունը զգացեք:

Երկրորդ. հայրենապաշտություն, հողապաշտություն: Հայրենիքը մի որևէ հող չէ: Այն հողը, որի մեջ մեր կյանքի դրոշմն է դրվել, ուրիշ հող է, դա մե՛ր հողն է, դա մե՛ր շինածն է: Ինչպես ականջալուները Ֆրանսիացի մի մեծ քաղաքական ղեկավար (այսօրվան վարչապետը Ֆրանսիայի)՝ Էդուարդ Բալադյուր, ասել է. «Ֆրանսիան ստեղծումը չէ բնության, Ֆրանսիան ստեղծումն է ֆրանսիացի ժողովրդի պատմության»: Հայաստանը բնության ստեղծումը չէ: Ա՛յս հողը, որ Հայաստան կկոչվի, այս հողի վրա ծառ կա և ուրիշ հողի վրա էլ ծառ կա, քար կա, ուրիշ տեղ էլ քար կա, բայց այստեղի՛ ծառը ուրիշ է, այստեղի՛ քարը ուրիշ է: Այստեղի՛ ծառը Սոսյաց անտառ է, այստեղի՛ քարը խաչքար է, կենդանու կաշին մագաղաթ է, այս նվիրական է, որովհետև մեր ձեռքերի ձեռագործն է Հայաստանը:

Տիեզերքը Աստծու ձեռագործն է: Տիեզերքին մեջ հայը այդ պատառին վրա, որ հագուստն է Աստծուն, այնտեղ հյուսել է իր ձեռագործը, որի անունն է Հայաստան: Հետևաբար, երկրորդ հատկանիշը բոլորիս, մեզ ընդմարտորեն հայ ընող առաքինությունը Աստվածպաշտությունից հետո, հայրենապաշտությունն է, հողապաշտությունը, հողին կապվածությունը, մանավանդ այսօ՛ր: Ես գալիս եմ մի այնպիսի երկրից, որտեղի հողի մեջ չի ծնվել հայը իր պատմությամբ: Սիրելինե՛ր, բոլորս էլ մեր խղճի հետ մի պահ խոսակից դառնանք, խոսենք մենք մեզ հետ: Մենք շա՜տ փոթորիկների միջից ենք անցել, տեսակ-տեսակ փորձություններ են եղել մեր Հայրենիքում:

Հայը խաղաղ չի ապրել դարերի ընթացքում, բայց այսօր, հազար փառք Աստծուն, հակառակ բոլոր տեսակի տնտեսական, կենցաղային, ընկերային, քաղաքական, ապահովական բոլոր տեսակի դժվարություններին, մենք ծունկի գանք Աստծու առաջ և ասենք. Փառք Քեզ Տեր, որ մեր երազին, դարավոր ցանկությանը և իղձերին մարմին զգեցուցիր և ազատ, անկախ, սեփական, ինքնիշխան և գերիշխան Հայոց պետությունը ստեղծվեց: Այսօր վերանկախացավ Հայաստանը, որովհետև Հայաստանի և Սփյուռքի ժողովրդի մտքի, հոգու մեջ ազատության և անկախության գաղափարը երբեք չմարեց, երբեք չշիջեց: Մի խոսքով՝ մնաց կենդանի, առողջ և առույգ: Հետևաբար, այդ ազատ և անկախ մեր պետականության շրջանին եկեք ամբողջությամբ կապվենք մեր ձեռքերով, մեր ջիղերով, մեր ոսկորներով, մեր ամբողջ էությամբը այս հողը պահենք հայկական, հայադրոշմ և հայակամ: Այս թող լինի մեր նպատակը այս նոր շրջանին, առանց խտրության, առանց դավանաբանական, առանց գաղափարաբանական, առանց դասակարգային խտրության և՛ Հայաստանում, և՛ Արցախում, և՛ Սփյուռքում առհասարակ:

Երրորդ հատկանիշն է՝ մշակույթի նվիրումը: Մեր ժողովուրդը կաղքատանա, կտկարանա, եթե երբեք մեր գիրը, գրականությունը, երաժշտությունը տկար լինեն: Եթե մարդկային քաղաքակրթության բարձրագույն արտահայտությունները մենք մեր Հայաստանի հողին վրա, մեր ժողովրդի կյանքի մեջ չարտահայտենք, ինչո՞վ պիտի հպարտանանք, ինչո՞վ մենք զմեզ ազգերի մեջ պիտի արժեքավոր զգանք: Մի փոքրիկ հարց տամ, ինչո՞վ հայ ենք՝ միայն հողո՞վ պիտի ասեք, միայն Աստվածպաշտությա՞մբ

պիտի ասեք: Ուրիշներն էլ Աստված պաշտում են, ուրիշներն էլ հող ունեն: Մեր ինքնության մեծության և արժանապատվության չափանիշը մեր գիրն է, մեր գրականությունն է, մեր մշակույթն է: Բարեկամնե՛ր, եթե մեկը հարցնի ձեզ՝ ո՞ր ազգին կպատկանեք, ի՞նչ պիտի ասեք: Պիտի ասեք Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Կոմիտաս վարդապետի, պիտի ասեք մե՜ծ ճարտարապետ Տրդատի, մեծ գիտնական Անանիա Շիրակացու, մեկ խոսքով, մեր հոգիին բարձրագույն աստիճանի արտահայտությամբ աշխարհին և մարդկությանը բացված մեր մեծ դեմքերի, մշակույթի մեծ առաքյալների: Հետևաբար, երրորդ հատկանիշը պետք է լինի մշակույթի, լեզվի, դպրության, արվեստի մեր ճիվիրաբերումը:

Այսօր ես գալիս եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ամեն անգամ այս վերջին ամիսների ընթացքում երբ դիտում եմ Մայր Աթոռի հրաշալի գեղեցկությունները, ամբողջ պատմության առկայությունը, ամբողջ պատմության պերճախոսությունը այդ քարերի միջից, ասում եմ, ես որքան երջանիկ պետք է զգամ իմ կոչումի մեջ՝ իբրև անդամ, իբրև հայ հոգևորական, ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպեսզի քարերի շշունջը լսեմ, այս քարերի շնչով զորանամ: Մի խոսքով, մեր Եկեղեցին եղել է նաև մշակույթի կենտրոն, մեր վանքերը եղել են մշակույթի օջախներ: «Մի նշխարով, մի կում ջրով և տքնությամբ գիշերն անքուն՝ պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն». ինչպես ասում է Ավետիք Իսահակյանը:

Հետևաբար, այսօր առաջին անգամ գալով Վանաձոր, ես ուզում եմ իմ խորին շնորհակալությունները հայտնել ձեր ժրաջան առաջնորդին՝ գերաշնորհ Տեր Գրիգորիս արքեպս. Բունիաթյանին, հոգևոր դասին, ձեր աշխարհական պատասխանատուներին, եկեղեցական խորհրդի անդամներին, հատկապես մեր պետական քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներին, որոնք սերտորեն, արտակցորեն Եկեղեցու զարգացումն են ցանկանում: Բայց մենք ունենք մի հիմնական կարիք: Այդ կարիքն է՝ մարդո՛ւ կարիքը: Այսօր ձեր մեջ երիտասարդներին կոչ եմ անում, բոլոր երիտասարդներին, ովքեր իրենց մեջ զգում են Աստծու կանչը, ովքեր իրենց մեջ զգում են ժողովրդի կարիքը, ո՞ր օրվան են սպասում, թող գան: Եկեղեցու մեջ նրանք, ովքեր ունեն այդ ձգտումը, լցվեն Աստծու Հոգով, լցվեն մեր մատենագրության, մեր Եկեղեցու հոգևոր զորությամբ, լցվեն Ավետարանի հավերժաշունչ պատգամներով՝ Քրիստոսի Հոգով, և պատրաստվելուց հետո, իբրև հոգևորականներ՝ վարդապետ, քահանա, գնա՛ն, ժողովրդի մեջ մտնեն և ժողովրդին զգացնեն այդ երեք պաշտությունները. Աստվածպաշտություն, հայրենապաշտություն, մշակութապաշտություն:

Մեկ խոսքով՝ փակեմ. ես այնքան ասեն, որ Աստծու շնորհով Կաթողիկոս կմնամ, այնքան ասեն, որքան ինձ կյանք տա, ես երբեք ժողովրդից չպիտի կտրվեմ, ես ձեզի դարձյալ պիտի այցելեմ, որովհետև մի հովիվ առանց հոտի հովիվ չէ: Մի հովիվ հոգևոր պետք է իր ժողովրդի մեջ լինի, ժողովրդի ցավը տանի, ժողովրդի ապրումները իր հոգու մեջ ապրի: Մեկ խոսքով, ցանկանում եմ ձեզ բոլորիդ, որ այս կապը՝ հոտ և հովիվ, Հայրապետ և ժողովուրդ մնա միշտ կենդանի: Դուք էլ ձեր աղոթքների մեջ հիշեք ինձ, ինչպես ես Սուրբ Էջմիածնում իմ աղոթքների մեջ պիտի հիշեմ Վանաձորի մեր սիրելի ժողովրդյան Աստծու փառքին, մեր Եկեղեցու պայծառության և մեր Հայրենիքի շինության համար: Ամեն»:

Սուրբ Աստվածածին եկեղեցում ժողովրդի լայն զանգվածների հետ հանդիպմանը հաջորդեց նախ քաղաքի կենտրոնական մասում երկրաշարժի

և հայոց անկախության ձգտումների հիշատակին կանգնեցված խաչքարի առջև ծաղիկների զետեղումն ու Հոգեհանգստյան աղոթքը, ապա այցելությունը Վանաձորի քաղաքապետարան:

ՄԱՅԻՍ 8, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

«Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝
զոր եւ եսւ ընկալայ,
եթէ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց,
եւ զի թաղեցաւ, թէ՝ եւ յարեաւ յաւուր երրորդի»:
(Ա. ԿՈՐՆԹ. ԺԵ 3—4)

Վանաձորում Վեհափառ Հայրապետին անակնկալ հանդիպում էր ընպասվում՝ չնախատեսված և չծրագրված մի հանդիպում Վազգեն Ա. երջանկահիշատակ Հայրապետի անունը կրող դպրոցի աշակերտության և ուսուցիչների հետ, որոնց պատգամեց՝ լինել արժանի կրողները Վազգեն Վեհափառի անվան, մշտապես ապրելով նրա թողած բարի ավանդներով և մատնանշած ճանապարհի ուղեգծով:

Այս արտառուչ այցից հետո Վեհափառը Վանաձորի մշակույթի պալատում հանդիպեց քաղաքի հասարակության, ղեկավարության և մտավորականության հետ: Դահլիճի ծայրեիծայր լցված լինելը վառ արտահայտություն էր ժողովրդի ակնկալությունների և ջերմ սիրո զգացումների՝ հանդեպ Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին ու նրա Դահակալը.

«Ես փառք եմ տալիս Աստծուն, որ ինձ տրվում է առիթը, ձեզ հետ գործակից դառնալ ոչ այնքան և այնպես, ինչպես անում ենք համախ խորանից եկեղեցու կամ սրահի բեմերից, պաշտոնական, Հայրապետական պատգամի իմաստով. ես ուզում եմ ձեզ հետ խոսել մտերմաբար այնպես, ինչպես ըմբռնում եմ իմ առաքելությունը որպես հոգեհոր Կաթողիկոս Ամենայն Հայոց, այնպես, ինչպես ըմբռնում եմ նաև ձեր գործը, որովհետև այդ գործին ամբողջությունը կներառի իր մեջ ձեր բոլորի մասնակցությունը:

Առաջին հերթին ես ուզում եմ ձեզ բոլորիդ հայտնել, որ մենք անցյալի առաքելության շարունակողն ենք և ոչ թե մի նոր առաքելության սկսողը, որի՞ խոսքով՝ ինձնից առաջ այդ նույն գահի վրա եղել են 130 Հայրապետներ, որոնք դարերի ընթացքում Սուրբ Գրիգոր Լուսավորչից սկսյալ մինչև այսօր, 301 թվականից մինչև այսօր, կատարել են իրենց պարտականությունը հանուն Աստծու, հանուն մեր Սուրբ Հայրերին, մեր Եկեղեցուն, հանուն մեր Հայրենիքին և մեր ամբողջ ազգին, լինի դա Հայրենիքում՝ Հայաստան աշխարհում, և կամ արտասահմանում: Հետևաբար, մեր գործն է առաջին հերթին ամեն բանից վեր Աստծու Խոսքը՝ ճշմարտությունը՝ Աստծուց եկած, Քրիստոսով հայտնված, Սվետարանով քարոզված, այդ ճշմարտությունը մեր ժողովրդի կյանքի սեփականությունը դարձնել: Երբեք անջատում չլինի Աստծու ճշմարտության և ժողովրդի հոգու միջև:

Փավստոս Բուզանդ պատմիչն ասում է, որ եկեղեցու սպասավորները գրում էին Հայաստանի չորս կողմերը և բարոզելիս անձրևի նման տեղացնում էին Աստծու Խոսքը, բայց ժողովրդի հոգին երբեք չէր ազդվում: Պատճառն այն էր, որ այդ Խոսքը քարոզվում էր ոչ հայերեն լեզվով, այլ հունարեն և ասորերեն, ու Աստծու Խոսքը մի օտար խոսք էր թվում հայ ժողովրդի համար:

Երբ Դ. դարում, հիշում եք հավանաբար, Սուրբ Մեսրոպ Մաշտոց գտավ հայերեն Այբուբենը և Աստվածային Գրքերը թարգմանվեցին մեր հայերեն լեզվին, պատմիչն ասում է. «Սքանչելի լինէր աշխարհն Հայոց, յորժամ գլուխն առաքելական գնդին Պաւղոս և դասն մարգարէից հայերէնախօս և հայրենաբարբառ գտան», այսինքն, սկսեցին հայերեն խոսել: Հայերեն լեզվով Աստված սկսավ խոսել մեզ հետ և այդ եղավ մեր Ոսկե Դարը, երբ Աստծու շունչը միացավ հայու շունչին, Աստծու Խոսքը ներթափանցեց հայու հոգու մեջ:

Դարեր շարունակ այդ քարոզությունը կատարվեց և մեր ժողովուրդը բարոյական բարձր ըմբռնումների, սկզբունքների, հոգևոր արժեքների ծառան եղավ, ապաւավորը եղավ, ստեղծագործողը եղավ: Մենք երբ մեր պատմությունը բաղդատենք ուրիշ ազգերի պատմության, մեր պատմության մեջ ամենից ուժեղ ներկայությունը եղել է քրիստոնեական ճշմարտության, քրիստոնեական հավատքին հավատարմությունը: Անցնող տարիներին մեր ժողովրդի զավակներին ասվեց, թե քրիստոնեությունը խաբուսիկ կրոն է, թե անհիմն կրոն է, թե ճշմարտությունից հեռու կրոն է, թե մարդկանց ձեռքերում շահագործող գործիք է, ափիոն է, մեկ խոսքով՝ աթեիստական քարոզություններով ուզվեց, որ մեր ժողովրդի հոգին բաժանվի, անհաղորդ մնա Աստծու Խոսքից՝ քրիստոնեական հավատքից: Եվ չհաջողվեցին: Եվ երբեք չեն կարող հաջողվել ոչ թե այսօր, ոչ թե միայն չեն հաջողվել անցյալում, նման փորձ երբեք չի հաջողվի նաև ապագայում: Ինչո՞ւ Եկեղեցու համար Ավետարանում ասվել է մի խոսք. «Դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն», նաև ուրիշ խոսք է ասվել. «Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն», այսինքն իմ խոսքի վստահությունը հավիտենական է և այս դարին չի պատկանի, և այս մարդուն չի պատկանի, բոլոր ժամանակներին և համայն մարդկության բաղկացուցիչ ազգերին, ժողովուրդներին և ցեղերին կպատկանի:

Սիրելի՛ք, ես կուզամ հիմա իմ ամենեն կարևոր ասելիքին: Ա՛յս հավատքի՝ քրիստոնեության, գերագույն իմաստը և արժեքը և ուրիշ կրոններից ունեցած տարբերությունը այն է, որ քրիստոնեությունը արժեք կտա մարդ էակին: Մարդը ինքը Աստծու պատկերով է ստեղծված: Երևակայեցեք մարդը չէ, որ կիմաստավորի ամբողջ գոյությունը տիեզերքի: Եթե մարդը հանեք տիեզերքից, բնությունը, անշունչ իրականությունը, կենդանական աշխարհը, բուսական աշխարհը ի՞նչ կարժե: Կույր գոյություն է, անիմաստ: Քարը ի՞նչ արժեք ունի, եթե քարից տուն չես սարքի, արձան չես կանգնեցնի, խաչքար չես հյուսի: Ուրեմն տիեզերքի առարկաներին իմաստ տվողը մարդն է: Մարդու հարաբերությունն է, մարդու՝ անոր հանդեպ ունեցած արժեքավորումն է: Մեր Հայաստանը հող չէ միայն: Հայու ձեռքի շնորհքն է, այսինքն մեր ստեղծագործությունն է: Քրիստոնեությունը մարդ անհատին գերագանց արժեքը ճանաչող կրոնք է: Ուրիշ գաղափարաբանություններ մարդը կգոհեն անձնական շահերին և քմահաճույքներին համար. քրիստոնեությունը մարդու փրկության համար է:

Քրիստոս Ինքն եկել է, որ մարդուն ասի, թե մարդը Աստվածանման մի էակ է, Աստծու շունչը ունի իր մեջ և պետք է ըստ այնմ ապրի իր կյանքը: Այդ կյանքի մեջ ամենեն էականը Խաչն է: Մի մեծ գիտնական ասել է, «Աշխարհի բոլոր կրոններում կա սիրո գաղափարը, բայց ոչ մեկ կրոն չի ունեցել Խաչը, բացի քրիստոնեությունից»: Խաչը գերագույն արտահայտությունն է սիրո սկզբունքին: Երևակայեցե՛ք, ի՞նչ կնշանակի ասել՝

ես Աստծուն կսիրեմ և չկարենալ եղբորդ սիրել: Այդ կեղծի՛ք է: Հովհաննես առաքյալը ինքն ասում է. «Եթե դուն Աստծուն կսիրես, որին չես տեսնում և չես կարող եղբորդ սիրել, որին տեսնում ես, այդ ի՞նչ տեսակ սեր է»: Սերը կյանք է, հարատևություն է, ուրիշին հանդեպ քո ցույց տված վերաբերմունքի չափանիշն է: Քրիստոնեությունը իբրև սիրո վարդապետություն մեր ժողովրդին տվել է այդ սերը զոհողությամբ արտահայտելու փիլիսոփայությունը: Եթե մեկը կամավոր հանձնառություն չի ստանձներ, ուրիշին հանդեպ պարտականություն չզգար, այդ անձը ո՛չ մարդ է լրիվ իմաստով, հարազատ իմաստով, ճշմարիտ իմաստով և ո՛չ էլ հայ: Մենք մեր կյանքում չենք կարող ապրել իբրև անհատ մարդ, պետք է նաև ապրենք իրարմով: Ես մի գրություն ունեմ «Մարդը մարդ է մարդով» վերնագրով: Մարդը մարդ չէ ինքն իրմով. ինքն իրեն համար և այն տարածքը, որ համայնության, ազգի, համայնքի գաղափարն է, դրան անհատն անհատ անցնող կապը սերն է և եղբայրությունը և իրար հանդեպ նույն տեսիլքին, նույն գաղափարին, նույն հավատքին բաժանումն է: Երբ բոլորս այդ նույն հավատքը ունենք, այն ատեն է, որ մենք ազգ կլինենք, այլապես ես, դուք, մյուսը, եթե անհատներ լինենք՝ գումար կլինենք, մարմին չենք դառնա: Իրարմով. իրար հետ լինելով է, որ մենք ազգ կնկատվենք. այդ ազգի կապը սերն է, քրիստոնեության ամենեն մեծ ճշմարտությունը, որ Խաչով կարտահայտվի:

Ինչո՞ւ ենք խաչ հանում, ինչո՞ւ ենք խաչը մեր պարանոցներից կախում՝ խաչը զա՞րդ է: Խաչը խորհրդանիշ է: Երբ նայում ես երկընքին մոտեցող մեր գմբեթներին և խաչը տեսնում ես, հիշեցնում է քեզ, որ կյանքդ իմաստ ունի, եթե կարողանաս այդ կյանքդ բաժանել ուրիշների հետ և այդ կյանքդ ապրել ուրիշներով: Գիտեք, որ որոշ մեծ ազգերի բանտերը ամենից լավ հարդարված սենյակներն ունեն: Մեկ օրենք կա միայն, որ մարդուն կզգացնե, որ բանտը դժոխք է: Դա այն է, որ ոչ ոք կարող է այդ մարդուն այցելել: Այդ մարդը առանձին կթողնեն, կտրված ուրիշներից և այդ մարդը կանդրադառնա այդ բանտարկության շրջանին, թե իր հանցանքը առանձնություն է, ուրիշի հետ չկարողանալ լինելն է: Մարդուն բանտը, այն կաշկանդող ուժը, որ իր գոյության իմաստը կփչացնի՝ առանձնություն է: Ընտանիքը ընկերության առաջին կորիզն է: Չի կարող լինել մարդկություն՝ առանց ընտանիքի, չի կարող լինել ազգ՝ առանց ընտանիքի: Եթե երբեք մենք՝ հայերս, ընտանեկան պատիվը և սրբությունը բարձր ենք դասել, դրա մեջ քրիստոնեության այդ գաղափարն է, որ ամենից մեծ ազդեցությունն է ունեցել:

Սիրելինե՛ր, ես կգամ հիմա իմ խոսքի վերջին բաժնին: Մենք այսօր անցյալը ափսոսելով չենք կարող մեր ապագան կերտել: Անցյալում ինչ պատահել է, դրա մասին մենք դառնությամբ խոսելով՝ չենք կարող ոչինչ անել մեր ապագայի համար: Սե՛րը իրար հանդեպ, սե՛րը ամբողջին հանդեպ, սե՛րը Եկեղեցու հանդեպ, սե՛րը ազգին հանդեպ, սե՛րը պետության հանդեպ, դրանք են, որ մեր ուժն են դեպի ապագա գնացող: Դառնությունը մեր մեջ կփչացնի մեր անձը: Հետևաբար, ես տեսնում եմ, որ մենք մտանավորաբար ա՛յս դարաշրջանի ավարտին երբ մտել ենք մի նոր ուղի, մեր ազգային պատմության ընթացքում հայրենամոլականների մեջ, դա կոչում ենք անկախության և ազատության շրջան, ա՛յս ժամանակ ձեզնից յուրաքանչյուրը իր պատասխանատվությունը պետք է կատարի, որպեսզի ազգը ազգ լինի, Հայրենիքը Հայրենիք լինի և Եկեղեցին էլ՝ Եկեղեցի: Ոչ ոք կարող է ինքն իրեն դուրս պահել, եթե ինքն իրեն ճշմարտորեն հայ է զգում: Մաս-



Վեհափառ Հայրապետի օրհնությունը վանաձորցիներին

նակցություն՝ այս է կյանքի սահմանումը ինձ համար, ոչ թե քաշվիլ, ոչ թե մեկուսանալ, ոչ թե առանձնանալ, այլ գալ և մտնել մեկ ճանապարհի մեջ ձեռք-ձեռքի, միասնական կամքով և հառաջատես գնացքով:

Ամբողջ երեք օր Շիրակա նահանգում էի, այժմ գտնվում եմ Լոռվա աշխարհում և այս երկու աշխարհներն էլ տոժվեցին այն անհավոր երկրաշարժի աղետից, որին ենթարկվեց մեր ժողովուրդը: Իմացա ձեր քաղաքային իշխանություններից, ձեր Սրբազանից, ձեր հոգևորականներից, որ այժմ դուք անցնում եք վերաշինության, վերակազմավորման, վերականգնումի ընթացքի միջից: Այս ընթացքը մեր բոլորի հասարակաց գործն է, ոչ թե իմ, ոչ թե նրա, ոչ թե մյուսի՝ մեր բոլորի գործն է: Եթե մենք ուզում ենք խաչի նշանը այսօր ապրել և խաչով ապրել, պետք է գիտենանք զոհողությամբ ապրել: Այն, որ չի կարող զոհվել, իմաստ չունի նրա կյանքը, խոտի պես կգա և խոտի պես կգնա: Մեր արևմտահայ բանաստեղծներից Վահան Թեքեյանը մի աքանչելի տող ունի, որ ինձ համար մարգարտաշար է, որ ամեն մեկ հայի կրծքից կամ վզից պետք է կախվի.

Ի՞նչ մնաց, կյանքէն ինծի ի՞նչ մնաց,
Ինչ որ տուի ուրիշին՝ տարօրինակ այդ միայն:

Սերը որ տաս, զոհողությունը որ կկատարես, դրանք են, որ քեզ կերջանկացնեն և քեզ կարժևորեն, քո կյանքը կիմաստավորեն: Առ՛եք մեր բոլոր մեծերը, նրանք, ովքեր մեր պատմությունը կերտեցին: Տալո՛վ, իրենք իրե՛նց տալով, իրե՛նց ունեցածը տալով՝ ունեցան: Ինչպես Ավետարանը ասում է. «Ան, որ ունի, անոր շատ պիտի տրվի, իսկ ան, որ չունի, ունեցածն անգամ ձեռքեն պիտի առնվի»: **Ոչ թե իր ունեցածը, այլ իր ունենալուն իմաստավորումը. եթե մեկը չի գիտեր իր ունեցածը, իր եղածը՝ Աստծու տուրքը, Աստծու տուրքով ձեռք բերած իր կարողությունը, հմտությունը, հարստությունը, եթե պիտի չկարենա իրենից դուրս ուրիշին և ընդհանուրին ի սպաս դնել, եղել է, չի եղել, պատմությունն անգամ նրա անունը չի հիշատակի: Ես եկեղեցիներ եմ տեսել, մանավանդ Ստեփանոս Նախավկայի եկեղեցին, որ Արաքս գետի մյուս ափին է՝ Պարսկաստանում: Այդ եկեղեցու ամեն մեկ քարի վրա գրվել է. «Քարս այս յիշատակ է Խաչատուրին», «Քարս այս յիշատակ է Աստուածատուրին», մեկ խոսքով, ամեն մի մարդ իր կնիքն է դրել այդ եկեղեցուն, իրը գնացել է, եկեղեցին մնացել է: Բայց իրը պատմակերտության՝ պատմություն ներտելու առաքելության մեջ տեղ է ունեցել և դրանով է արժեքավորվել: Այսօր Վարդանի գերեզմանն անգամ տակավին վիճելի է բանասերների համար: Որտե՞ղ է թաղվել Վարդանը, մարդ չի գիտե: Բայց ի՞նչ փույթ, թե որտե՞ղ է թաղվել՝ Վարդանը կապրի, զոհվելով ապրեց, ոչ թե իրը իրեն համար ապրելով ապրեց: Այն, որ այդ ձևով կապրի, անիկա անմահ կմնա: Այս է մեր կյանքի՝ հայ կյանքի փիլիսոփայությունը:**

Գալով մեր օրերի պարտականության. մենք մեր ձեռքերով, մեր զոհողության գիտակցությամբ, մեր ամբողջական մասնակցությամբ, յուրաքանչյուրը մեզանից իր չափով և իր ձևով պետք է բաժին բերե երկրի այս վնասված բաժնի վերականգնումին. և ոչ թե միայն նյութական վերաշինության՝ շենքի, քարի, աղյուսի, այլ վերաշինության՝ հոգեկան իմաստով: Պետք ունենք բոլորս էլ փոխվելու, մի նոր հոգեբանության մեջ մտնելու: Դա քրիստոնեական հավատքով թրծված հոգեբանություն է և ազգի անկախությամբ

զապահակված, մեր ինքնության, պետականության գիտակցությունն է:

Ես եկել եմ արտասահմանից մեր ժողովրդի կամքով: Իմ ամբողջ կյանքը սրանից հետո Հայրենիքին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և մեր ժողովրդի համար է: Ինչպես մեր Հանրապետության Նախագահն ասեց, մենք մեր գլուխները իրար միացնենք և մատաղ անենք մեր ժողովրդին: Ուրիշ ճպատակ չկա, ուրիշ երազանք չկա: Մենք փառք չենք փնտրում: Բայց ո՞վ ենք մենք առանց ձեզի: Դո՛ւք եք, սիրելի ժողովուրդ, դո՛ւք եք, որ մի ճոր քուրայի, հոսանքի միջից պետք է անցնեք, և ես պիտի ջանամ իմ բոլոր ուժերովս, որքան էլ տկար լինեն այդ ուժերը, իմ եղբայրների՝ հոգևորական եղբայրների հետ միասին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը առավել աշխուժացնել, որպեսզի քարոզության վերածվի, հոգևորականներ դուրս գան ու մեր ժողովրդին ո՛ւժ տան՝ հոգեկան ուժ տան, բարոյական ճկարագիր տան: Ես մի բան եմ ճկատում և՛ արտասահմանում, և՛ Հայրենիքում: Մեր ժողովուրդը տուժում է մի բանից՝ մխումից: Մեր հայրերը ցեղասպանության օրերին մեռան հացի կարոտությունից: Իսկ հիմա, մանավանդ որոշ տեղեր, ոչ այս օրերին թերևս Հայաստանում, բայց արտասահմանում, մեր ժողովուրդը մեռնում է ոչ թե հացի պակասից, այլ հացի շատությունից: Մեր Եկեղեցին իմաստությամբ է ասել, որ որկրամոլությունը մահացու յոթ մեղքերից մեկն է: Շռայլությունը, անիմաստ արժեքների հետևից վազքը, արդուզարդից, ճոխակյացությունից, ավելորդ հիմարական վատնումներից շատ ենք տառապում: Աստված կյանք և ուժ է տվել մեզ: Այդ բոլորը գործածենք ոչ թե մենք զմեզ փչացնելու համար, ալկոհոլամոլության կամ շատակերության և կամ մսխումի հիմար-հիմար կյանքի ձևերին երթալով, անդրադառնանք, որ մենք ունենք այնպիսի հոգեկան, բարոյական արժեքներ, որոնք երբևիցե պետք չէ, որ գետին ընկնեն, այլ՝ բարձր մնան, մեր կյանքում արժևորվեն: Դրանով է, որ մեր ազգը հպարտացել է, դրանով է, որ ազգը տոկացել է, դիմացել է և այս օրերին է հասել: Մեզ կմնա հիմա շարունակել այդ կյանքի ուղին: Աղետը այն ատեն աղետ է, երբ նրանից ոչինչ կսովորենք: Եթե աղետից սովորենք, թե ինչպես կարող ենք մեր կյանքը ապրել, մենք ուրիշ աղետներից կփրկվենք:

Սիրելի եղբայրներս, քույրերս, այսօր ես իմ խոսքը փակելու եմ հետևյալ աղոթքը ձեզ հիշեցնելով: Մենք ասում ենք հաճախ՝ «Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, փրկեա զմեզ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն». երևելի թշնամին աչքիդ առջևն է, կտեսնես, կխուսափես, բայց աներևույթ թշնամին այն բոլոր ապականությունները, բարոյական կյանքի խաթարումները, օտարամոլությունը և աշխարհիկ հաճույքների հետևից վազքը,—սրանք են, որ մեր աներևույթ թշնամին են: Հիմա ձուլման, ապազգայնացման, օտար բարքերին հետևելու, կուրորեն հետևելու մոլությունն է մտել մեր ազգի մեջ և մեզ մեր կյանքում ապանում է: Կյանքի մեջ է պատահում մահը հիմա, առաջ կյանքից հետո էր մահը: Իսկապես այս օտարամոլությունը, բարքերի խաթարումը՝ դրանք է, որ մեզ կփչացնեն: Մի ազգի ուժը իր բարոյական բարձրության մեջ է, իր գիտակցության մեջ, իր երեխաների դաստիարակության մեջ, իր հանրային կյանքի ներդաշնակ կազմակերպության մեջ: Ընդհանրական շահերի գերադասման և երկրորդական ու մանանավոր և ժամանակավոր շահերի ստորադասման իմաստության մեջ կկայանա ազգի մը մեծության գաղտնիքը:

Անհավասիկ, թե ի՞նչ մտորումներով, ի՞նչ մտածումներով ես ուզում եմ իմ Կաթողիկոսական Գահակալության շրջանը սկսել միշտ ժողովրդի հետ լի-

ևելով, ժողովրդի հետ հաղորդ մնալով և քրիստոնեության ճշմարտությունները մեր ազգային կյանքում ջանալով ամեն բանե ավելի տարածելու, որպեսզի օտար մարդիկ, ապազգային բարքերով մեզ չշահագործեն: Խնդրում եմ ձեզանից լսեցեք ինձ, ես օտարների հետ շատ եմ ապրել: Այսօր գալիս են մեր երկիրը, գալիս են այս երկիրը և մեզ քրիստոնյաներիս քրիստոնեություն են քարոզո՞ւմ: Ինչու հեթանո՞ս ենք մենք, քրիստոնեություն չունե՞նք մենք, ո՞ր բարը վերցնես Հայաստանից՝ տակը Քրիստոսի հավատքը կա, ո՞ր մեկ բլրից նայես և վրան եկեղեցի կա: Մեր հայրերի հավատքը այս երկրի ամեն մեկ բջիջի մեջն է տարրացել, մագաղաթի հետ է նույնացել, երաժշտության մեջն է տարրացել: Մենք հոգով, նույնիսկ այն տարիներին, որ մեր քրիստոնեական հավատքը ազատ կերպով չէինք կարող ապրել եկեղեցում, հավատքը երբե՞ք-երբե՞ք չի մեռել Հայաստանում: Հիմա օտար քարոզիչներ, տեսակ-տեսակ աղանդավորներ գալիս են և մեզի ասում են, թե ինչ է Քրիստոս: Ես նրանց մի պատասխան ունեմ, ուզում եմ դուք էլ այդ պատասխանը տաք. գնացե՛ք այնտեղ, ուր Քրիստոս չի քարոզվել: Դա՛ է Քրիստոսի պատգամը. «Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա, ուսուցէք նոցա զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ», Մատթեոսի Ավետարանի ԻԸ գլխի վերջին տողերն են:

Աշխարհումս չկա՞ն ուրիշ երկրներ, չկա՞ն ուրիշ ազգեր, որոնք Քրիստոսի անունը չեն լսել կամ չեն ընդունել զՔրիստոս: Մենք այսօր պատրաստվում ենք տոնել մեր Եկեղեցու հիմնադրության 1700-ամյակը: Որտե՞ղ էին նրանք մինչև հիմա, երբ մենք Ավարայրի դաշտում քրիստոնեություն էինք պաշտպանում: Որտե՞ղ էին նրանք, երբ մեզ վրա օտար ազգեր խուժում էին և մենք դիմանում էինք խաչի նշանով, քրիստոնեական հավատքով: Դրանք մեզ հետ կապ չունեն: Կարուկ եղանակ կա վերաբերվելու՝ դռները փակել, եղբա՛յր ասել, գնացեք այնտեղ, որտեղ մարդիկ քրիստոնյա չեն, հարգանքով, առանց բռնության, բայց այնպիսի «դայիմ» հավատքով, որ ուրիշները մեր ժայռ հավատքի հետ չխաղան, և կոտորվանքներ չբերեն մեր մեջ: Բայց դրա համար մենք ոչ թե ուրիշի արածին պիտի հակազդենք, այլ մենք մե՛ր գործը պիտի կատարենք, մե՛ր եկեղեցիները պետք է շինենք, մե՛ր եկեղեցին պիտի դատարկ չթողնենք, այլ լցնենք:

Իմացա՛ք, որ ձեր եկեղեցին ամեն կիրակի լցվում է, ապրե՛ք: Եթե ձեր կյանքը լցնեք, ուրիշները սպարապ չեն գոնի այնտեղ ու չեն գա և որում չեն ցանի: Մենք դրական ձևով պիտի մոտենանք, ոչ թե ժխտական ձևով: Մենք մեր եկեղեցին պիտի այնպիսի կենսավորումի ուժեղ ընթացքի մեջ դնենք, որ մարդիկ ամաչեն գալու և մեզի՝ քրիստոնյաներիս, քրիստոնեության համար արյուն թափած հայերիս քրիստոնեություն ուզեն քարոզել: Հետևաբար, հարգանք բոլոր մարդոց կարծիքներին: Մենք կրոնական մեր ազատությունը հարգում ենք, բայց մեր ազատությունը ուրիշ ձևերով մարդիկ չշահագործեն: Մեր քրիստոնեությունը Հիսուսի քարոզած վավերական կրոնն է, մե՛ր հայրերի 1700 տարիներ ապրած կրոնն է: Չգան և մաքուր ջրի մեջ պղտորություն չհանեն, չգան և ցորենի մեջ որոմ չցանեն: Գնան այնտեղ, ուր չկա քրիստոնեություն: Ա՛յս է ճշմարիտ միսիոներությունը: Հետևաբար, մենք կոչված ենք, այստեղ կամ Հայաստանի ամբողջ տարածքում, Արցախի մեջ և Սիլոամի մեջ, մեր Եկեղեցին վերակենդանացնել, վերահին այն ուժանը կանությանը բերել, որով այդ Եկեղեցին պահպանել է մեր Սուրբ Հավատքը և մեր ևվիրական ազգը: Ի՞նչ են ասել Վարդանանց հերոսները. «Հայր մեր՝

զսուրբ Աւետարանն գիտեմք եւ Մայր՝ զԱռաքելական Եկեղեցի Կաթողիկէ»՝ **Ընդհանրական Հայոց Եկեղեցին: Մենք իբրև Հայր կճանչնանք Ավետարանը և մայր կճանչնանք մեր Եկեղեցին, մենք ալ ամենքս անոնց զավակներն ենք, հետևաբար, մեր Հայրն ու Մայրը, այդ եկեղեցական ընտանիքը շեն պահենք, առողջ պահենք, առույգ պահենք, գործոն պահենք, որպեսզի մեր ղըռներից և պատուհաններից ուրիշներ չմտնեն և որոմ չցանեն մեր Հայոց փոքր ածուին մեջ:**

Այսօր իմ առաջին հանդիպումն է ձեզ հետ, Աստված տա, չգիտեմ որքան կյանք կտա մեզ, բայց մենք ուրիշ անգամներ ևս պետք է հանդիպենք: Հոտ և հովիվ պետք է միասին լինեն, որպեսզի ուրիշներ չգան և մեր հայ ժողովրդի ամբողջականությունը և միությունը չխանգարեն: Միասնականությամբ, համագործակցությամբ ազգ և Եկեղեցի, պետություն և Եկեղեցի գործակցաբար պիտի հառաջ տանենք այն սուրբ առաքելությունը, որ մեր հայրերի մեզի թողած կտակն է:

Ողջունում եմ ձեզ բոլորիդ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և որևէ մեկ ատեն, որ իմ ձեռքիցս որևէ մի գործ կգա ձեզ համար անելու, վստահ եղեք, որ ոչինչ կխնայեմ այդ գործը անելու համար: Աստված օրհնի ձեզ բոլորիդ, զորացնի ձեզ բոլորիդ: Ամեն»:

Վանաձորից շարասյունն ուղվեց Ստեփանավան, որի վերականգնման գործում մեծ ներդրում ունի Վեհափառ Հայրապետը: Ստեփանավանի սահմանագծում քաղաքագլուխ Արամ Բարսեղյանը քաղաքային իշխանության ներկայացուցիչների և ժողովրդի բուռն ջերմության հետ դիմավորեց և ուղեկցեց Վեհափառին դեպի քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցի, որտեղ խոսք ուղղելով ժողովրդին, մաղթեց՝ ասելով. **«Մեր եկեղեցու հոգևոր արևը ձեզ հետ լինի միշտ»,** այն արևը, որի ջերմությամբ մեր արտերից պիտի հասկի ցուրտը, որի լույսի ծավալումով պիտի **«մեկնի մէգն ու մառախուղը, գնայ գիշերն»** և թագավորեն Տիրոջ խաղաղությունն ու սերը՝ Սուրբ Հոգու անուշահամ ու անուշաբույր ներկայությամբ պտուղները:

Անհնարագրելի էր Վեհափառի հանդիպումը ժողովրդի հետ Ստեփանավանի մշակույթի պալատում, որտեղ քաղաքային իշխանության կողմից Վեհափառ Հայրապետին շնորհվեց քաղաքի պատվավոր քաղաքացու կոչումը, որից հետո Վեհափառը օրհնեց ներկա ժողովրդին.

«Սիրելի հոգևոր եղբայրներ, առաջնորդ Սրբազան, քաղաքագլուխ Ստեփանավանի, քաղաքային խորհրդի անդամներ և թանկագին հայրենակիցներ, նույն արյունը և նույն անունը կրող համաքաղաքացիներ, քանզի ես ալ Ստեփանավանցի եղա, ահավասիկ փաստը: Հայց այնտեղ մեկ գիր գրած էիք դուք, մեկ բառ գրած էիք, վստահ եմ՝ ձեր սիրույն և հարգանքի արտահայտությունն էր ատիկա: Դուք ըսած էիք այդ գիրին մեջ Պատվո քաղաքացի: Ես այդ գիրը պիտի փոխեմ ինձի համար, կպահեմ զայն իբրև ձեր սրտին ազնիվ արտահայտությունը, ես պիտի գրեմ անոր տեղը պարտվո քաղաքացի: Պարտք ունիմ այս քաղաքին հանդեպ և ոչ միայն պատիվը կվայելեմ այդ քաղաքացին ըլլալու:

Այսօր ես ունիմ իմ խոսքիս մեջ երեք հասցեներ, երեք խումբեր, երեք դասակարգի հայրենակիցներ, որոնց ուղղելու եմ իմ խոսքը:

Առաջինը տարեց սերունդին, այն հայրերն ու մայրերն են, որոնք վեր.երան անունն են շահել իրենց զոհողության գնովը և ոչ թե դուրսից ե-



Դիմավորում Ստեփանավանում

կած որպես շնորհ: Մենք այսօր և վաղը ողջ Հայաստանի տարածքի վրա նշելու ենք պատերազմից ազատագրման 50-ամյակը: Մեր Հայաստանի Հանրապետության Նախագահը, այժմ որիշ ազգերի, որիշ պետություններ-ի պետերի հետ միասին ներկայացնում է հայ ժողովրդի հարգանքը այն բոլոր ազգերին, որոնք մասնակցեցին պատերազմին վերջ տալու և մեր Հայրենիքը ազատագրված տեսնելու սրբազան, նվիրական գործին: Տեսնում եմ, որ ձեզնից շատերի կուրծքերը շքանշաններով են այսօր հարուստ, բայց այդ շքանշանները երկնքից չեկավեցին աննձրևի նման: Դրանք շահվեցին ձեր հերոսական մարտնչումին որպես արդար և բնական գինը և վարձատրությունը: Ձեր սերունդին երբ կնայեմ, կասեմ՝ մենք երախտագետ ենք ձեզ, որովհետև դուք այնպիսի սերունդ պատրաստեցիք, որի հաջողությունները այսօր բազմապատիկ ուրախություն ձեզ պետք է պատճառեն, որովհետև դուք տքնեցիք, դժվա՞ր, շա՞տ դժվար օրերի միջից անցաք, բայց ձեր սերը և գործունեությունը հանդեպ ձեր զավակներին այնպես արտահայտեցիք, որ մենք մեր սերունդի՝ միջին սերունդի հայերս միայն երախտապարտությամբ լցված կրնանք լլլալ ձեր հանդեպ:

Ձեզմե ոմանք Համաշխարհային Առաջին Պատերազմից հետո, Ցեղասպանությունից հետո, տեսան մեր ժողովրդի ջարդի հետևանքով կրած այն տառապանքները: Դուք իմ հոր սերունդն եք, ես չեմ կարող ձեզ մոռանալ, որովհետև դուք առաջին և դառնագույն տառապանքը տեսնելուց հետո կրեցիք մեկ այլ արհավիրք՝ 70 տարիների այն վարչակարգի տիրապետությունը, որ ձեզ ասում էր՝ դուք չեք կարող ձեր ճակատագիրը որոշել, մենք վերից պիտի որոշենք ձեր անելիքը: Դուք մարդ եք, բայց կամք չունեք, դուք հայ եք, բայց ազգային կամք արտահայտելու իրավունք չունեք: Անհավասիկ իմ հայրեր և մայրեր. դուք այսօր մեզնից ավել, փոքրիկներից, երիտասարդներից, չափահասներից ավել ուրախանալու, առ Աստված գոհություն մատուցելու իրավունքը ունեք, որովհետև ցավը տեսաք, անհավասիկ, կտեսնեք նաև մեր ազատագրումը, մեր անկախացումը:

Ձեր սերունդից քանի՞-քանի՞ հոգիներ գնացին հողին, առանց տեսնելու այն օրը, որ դուք տեսաք, ազատ, անկախ Հայրենիքը: Երազեցին շատերը, տքնեցան շատերը, տառապեցան շատերը, նրանք այժմ երկնքից են նայում, նրանք հրճվում են երկնքից: Դուք երկրի վրա եք: Սրտանց աղոթում եմ առ Աստված, որ ձեր կյանքը երկար պահի, որպեսզի դուք վայելեք մեր Հայրենիքի անկախացյալ պետականության այս օրերը և ձեր օրհնանքը տաք իբրև երեց սերունդի անդամներ մեր հորակազմ Հայրենիքին և նրա երիտասարդ բոլոր նվիրյալներին՝ Նախագահից սկսյալ մինչև ամենեն պարզ պետական պաշտոնյան:

Երկրորդ հասցեն, որին ուղղում եմ իմ խոսքը միջին սերունդի մեր հայ եղբայրները և քույրերն են: Այդ սերունդի մեջ նկատի ունենալով մեր սիրելի Արամը՝ քաղաքագիտությունը Սոեփանավանի, և նրա բոլոր օգնականները և բոլոր այն անձերը, որոնք լինեն հրապարակային, հանրային պատասխանատվության մեջ, լինեն անձնական գործի մեջ, տանում են այն շալակը, որ մեր հայրերը մեր ուսերին դրեցին: Ես մի պատկեր ունեմ, որ ուրիշ տեղ գործածել եմ, բայց Հայաստանում այդ պատկերը տակավին չեմ գործածել: Աստվածաշնչի մեջ մենք կարդում ենք, որ եբրայեցի ժողովրդի զավակները ուզում էին գրավել Երիքով քաղաքը և չէին հաջողում: Անեն անգամ հարձակվում էին և, սակայն, հետս մղվում էին: Եվ մի օր Տապանակ Ուխտին շալակեցին քահանաները և յոթ անգամ դարձան Երիքով քաղաքի շուրջը, և

Երիթովի պարիսպները խորտակվեցին: Ի՞նչ կար այդ տապանակի մեջ. Տապանաքարյա պատվիրանները Մովսեսի, ծաղկյալ գավազանը Ահարոնի և մանանան, իբրև հիշատակ անապատային կյանքիս ազատագրման: Երեք ճշմրտական արձանագրություններ այդ ժողովրդին, որոնց դիմաց բոլոր տեսակի խոչընդոտները հաղթահարվեցին: Հիմա ես էլ ասում եմ, մեր հայ ժողովրդի Տապանակ Ուխտին ո՞րն է: Այն շալակը անտեսանելի, խղճի մեջ, հոգու մեջ, արտի մեջ, մտքի մեջ տարված այն տապանակը, որի մեջ կան երեք ճշմրտական արձանագրություններ՝ Հուսավորչի հավատք-արքունքի կանթեղից մի ճառագայթ, Մեսրոպ Մաշտոցի Գիրը, Քաջն Վարդանի Սուրը: Երեք ճշմրտականություններ: Եթե այս երեք արձանագրությունները մեր ժողովուրդը տանի իր հոգու մեջ կենդանի, այն ատեն ո՛չ մի վտանգ, ո՛չ մի ապառնալիք չի կարող Հայաստանին ընկնել: Ոգու հարստություն է, որ մարմնին ուժ կուտա, կյանքին իմաստ կուտա: Ապրեցե՛ք այս կյանքը առանց այս երեք արձանագրությունների, ի՞նչ իմաստ ունի կյանքը. «Կեր, արբ և ուրա՞խ լեր»: Եթե այս է կյանքը, դա ի՞նչ կյանք է: Դա բնախոսական կյանք է, դա զգայարանական կյանք է: Մարդը ուրիշ է, մարդը գաղափարների կհավատա, գաղափարներից ուժ կառնի, հավատքով կանգնի, նպատակ կհետապնդե՝ արվեստ, մշակույթ, մեկ խոսքով՝ հոգու պայծառ արտահայտություն: Եթե երբեք այս արժեքներին, այս բարոյական հասկացություններին կապված չլինենք, մենք չենք կարող մեր կյանքը առաջ տանել դեպի պայծառ ապագան:

Միջին սերունդին՝ մեր սերունդին և նաև ասնց, որոնք այժմ պատասխանատվություն են վերցրած ժողովրդի կամքով, ժողովրդի ընտրությամբ և իրենց էլ ամբողջական և անվերապահ ճշմրտաբերմամբ, այդ սերունդին ասում եմ. Շալակը բարձր պահեցեք, վա՜յ այն օրվան, երբ այդ երեք արձանագրությունների Տապանակ Ուխտին մեր ուսերից ցած գա և հող տեսնի: Դա այնպիսի մի արբություն է, որ ուսից ուս կփոխանցվի և գետին չի կարող տեսնել: Դա մեր հոգուց հոգիին կանցնե, սերունդից սերունդ կփոխանցվի, որպեսզի մնա կենդանի և դրանով ապրենք հավերժ:

Միջին սերունդին էլ ասում եմ. պատվով, բաջությամբ, պատասխանատվության զգացումով, ընդհանուրին շահին ճշմրտվելու գաղափարով հառաջ տարեք այս ճշմրտական շալակը, որ մեր պատմության հերոսներից, մեր արբերից, մեր Հայրապետներից ժառանգություն է թողնված մեզ:

Երրորդ հասցեն դո՛ւք եք, երեխեք, դպրոցական երեխեք, երիտասարդներ, պատանիներ: Դուք եք, որ այժմ պիտի կազմավորվեք, պատրաստվեք: Ձեր պայծառ աչքերի մեջ, ձեր այդ սեգ ճակատների վրա մեր ամբողջ Հայոց ապագան է, որ կճայի: Մենք կամաց-կամաց կերթանք, բայց դուք կամաց-կամաց կգաք: Եվ դուք եք, որ պիտի հաջորդեք միջին սերունդին: Հովհաննես Թումանյանն ասել է. «Ապրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք»: Ես բանաստեղծ չեմ, հեռու-հեռու է ինձմե ամենայն հայոց բանաստեղծ լինելու այդ շնորհքը և պատիվը, բայց ես ալ, որ մի հոգևոր Ամենայն Հայոց եմ, Եկեղեցու պետ, հետևաբար, Թումանյանի ասածը կարող եմ մի քիչ փոխել: Թումանյանն ասել է. «Ապրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք», իսկ ես իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս ասում եմ. «Ապրեք երեխեք, մեզնից ավել ապրեք»: Այնպես ապրեք, որ ձեր հայրերը, եթե բաներ կային, որ չկարողացան անել, դուք անեք, ինչպես գրանք արեցին ավելին, քան ինչ որ արեցին իրենց հայրերը: Դուք ավելի լավ պիտի լինեք, քան մենք: Դուք եղեք արժանի զավակները, որ տանեք ազգի կյանքը բարձունքից բարձունք, փառքից փառք, դեպի վերելք, միշտ հեռուն նայեք, միշտ դեպի լավը նա-

յեք: Եվ բոլորիդ հիմա մեկ խոսք պիտի ուղեմ և դրանով կփակեմ: Մենք պիտի շարժվենք հետևյալ սկզբունքով.

Հայաստանը չէ այն, ինչ որ էր տասնամյակներ առաջ: Հայաստանը է այն, ինչ որ ուզե, որ հայ ժողովուրդը ինքը ըլլա: Հետևաբար, ի՞նչ կուզեք, որ ըլլա ձեր երկիրը՝ լա՞վ կուզեք, լա՛վը արեք: Ոչ թե ուրիշից սպասեք, ձեր ձեռքերի շնորհները խառնեցեք այս հողին, այդ հողից կյանք հանեցեք, որ մեր Հայրենիքը հայի ձեռքով շինվի, հայրենաբնական հայության և նաև արտասահմանի հայության միասնական գործակցությամբ և օժանդակությամբ: Ժողովրդի խոսքը մտիկ անենք. «Դու քեզ օգնի, Աստված քեզ կօրհնի»: Եթե նույնիսկ անձրև գա, ինչպես ժողովրդական առածն ասում է, ցնցուղը ձեռքիդ մի գցիր: Ցնցուղը միշտ պահիր ձեռքումդ, աշխատանքդ, քո բաժինը բեր, Աստծու բաժինը թող Աստծուն, որովհետև Նա կօրհնի նրան, ով արժանի է օրհնության, ով ինքն իրեն կօգնի, իր նմանին կօգնի և Հայրենիքի ծաղկմանը իր մասնակցությունը կբերի:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան: Ամէն»:

Ստեփանավանից Վեհափառը շարժվեց դեպի այս այցելության վերջին հանգրվանը՝ Սպիտակ քաղաք: Երևրաշարժից հիմնովին ավերված Սպիտակը այսօր վերականգնվում է հայի ճակատի գրով ու Տիրոջ անսուտ Խոսքով ամրացած պիտի կերտի նոր արշալույս:

Սպիտակի սահմանագծում քաղաքի Սուրբ Հարություն եկեղեցու հովիվ Ավետիք աբեղա Սողոմոնյանը, քաղաքագլուխ Հ. Ասատրյանը և քաղաքային իշխանության ներկայացուցիչները քաղաքի և շրջակա գյուղերի ժողովրդի հետ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին՝ նրա միջոցով տեսնելով իրենց ապրելու հույսն ու գրավականը:

Սպիտակից քիչ հետու գտնվող Լուսագյուղ վայրում էլ Վեհափառն իր վերջին պատգամը տվեց իր հավատացյալ հոտին, որը կարելի է բնութագրել որպես Շիրակի թեմ կատարած այցելության ամփոփում և հրավեր աշխատանքի ու կյանքի՝ Աստծու փառքի ծառայության, Եկեղեցու պայծառության և Հայրենիքի շինության համար:

«Սիրելի հոգևոր եղբայրներ և հարգարժան պետական քաղաքային իշխանության ներկայացուցիչներ և թանկագին հավատացյալներ՝ հարազատներ,

**Այս արևին ներքև, Աստծու ստեղծած բնության տաճարի մեջ, ես երբ առաջին հանդիպումն եմ ունենում Սպիտակի ժողովրդի հետ, փառք եմ տալիս Աստծուն, որ արևով եմ տեսնում ձեզ բոլորիդ: Արև լինի միշտ ձեր բոլորի կյանքը: Անձրևը, մութը շատ ծանր նստավ ձեր բոլորի վրա: Միշտ ասվեց, որ Սպիտակ անունը առնչվեց մեր ներկա ժամանակների պատմության ընթացքում ցավի, վշտի, կործանումի, մահվան, սուգի բառերին հետ: Սպիտակ ասողը կհիշի երկրաշարժը: Սպիտակ ասողը կհիշի այն հազարավորների անհետ մեկնումը այս աշխարհից, որ իրենց կամքից կախում չունեն և հանկարծ բնության մեկ անսպասելի ցնցումի հետևանքով նրանք, որոնք երկրի վրա էին, հանկարծ երկրի տակը թաղվեցին: Անհավասիկ, չորջ յոթ տարիներ են անցել, ես նրանց հիշատակը չեմ մոռանա և ձեզ խոսք ասելուց առաջ իմ աչքերը դեպի երկինք եմ բարձրացնում առ Աստված և նրանց հիշատակն եմ օրհնում: Թող նրանք երկնքից դիտեն մեզ՝ ապրող-

ներիս: «Որքամ մեռելոց» և այժմ «կոչեմ ապրողաց»: Ճիշտ է, մահը եկավ, վիշտը այցելեց մեզ, բայց ինչպես ճիշտ ճշվեց, ես առավել ևս պիտի շեշտեմ այն ճշմարտությունը, որ մենք եղել ենք կյանքի համար և ոչ թե մահվան: Մահը մեզ պիտի պատահի ուզենք կամ չուզենք, այսօր կամ վաղը, այսպես կամ այնպես. դա մեր կամքից վեր է: Դա մարդկային մեր գոյության հետ առնչված բնութենական, բնախառնական երևույթ է: Ինչ որ մեզի տըրվել է, դա կյանքն է: Մենք կոչված ենք ոչ թե մահվան մասին մտածելու, որի մասին մտածելն ավելորդ է: Մենք ոչինչ կարող ենք փոխել մահվան իրողությունից: Մահը մահ է ամեն տեղ, բայց մենք ստացել ենք Աստծուց կյանքը զայն ապրելու համար, զայն արժեքավորելու համար: Այնպես, որ երբ մահը գա ու տանի այն, ինչ որ տրվելիք է, այսինքն ֆիզիկական գոյությունը մեր, մենք չգնանք մահվան հետ անհետ, մնանք մենք իբրև հիշատակ, մնանք իբրև գործ, մնանք իբրև գաղափարի վկաներ, մնանք իբրև հավերժական Աստծու կանչին մասնակից անձեր այս երկրի վրա: Մեր քրիստոնեական հավատքը մեզ անմահության կներշնչի: Այդ անմահության շունչն է, որ այժմ պետք է մեր բոլորի՝ սպիտակցիների և ամբողջ աղետի գոտի կոչված շրջանի ժողովրդին մեջ վերստին շնչավորի անմահության գաղափարը: Եղել ենք կյանքին համար, պիտի նայենք կյանքին և այդ կյանքը պիտի արժևորենք այնպես, որ երբ մահը գա, մեզ չկարենա տանել ամբողջությամբ և մնանք մենք իբրև հավերժական ժողովուրդ:

Եղբայրներ և քույրեր, անհավասիկ ճիշտ մեկ ամիս անցավ այն օրից, երբ ազգի կամքով, Աստծու տնօրինությամբ ես կոչվեցի այս ամենեն ծանր պարտավորության, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսության պաշտոնն է մեր Եկեղեցու և ազգի կյանքի մեջ: Երևակայեք դուք, 35 թեմեր Հայաստանում, Արցախում, նախկին Սովետական Միությունից անջատված երկրների մեջ, ինչպես Դաշնակցային Ռուսաստանի, Ուկրաինայի և մյուս երկրների մեջ, արտասահմանի չորս տարածքի վրա, և այդ 35-ի մեջ ես ընտրեցի Շիրակի թեմը, որպես առաջին թեմ Հովվապետական այցելության համար, որովհետև իմ ըմբռնումով Եկեղեցին եղել է առաջին հերթին կարիքավոր, աղետից այցելված, բայց ոչ թե աղետված, մահվանից այցելված, բայց ոչ թե գերեզմանված, հուսահատությունից այցելված, բայց հույսով ապրող և ապրելիք ժողովրդի հետ: Պարզ խոսքով՝ եկել եմ ասելու, որ ձեզ հետ եմ ձեր ևեղության օրերին և եկել եմ մասնակից դառնալու կարողությանս գերագույն աստիճանի չափով այն բոլոր վերականգնման, վերականգնման աշխատանքներին, որին այժմ լծվել է ամբողջ, այսպես կոչված, աղետի գոտու ժողովուրդը, և դրա մեջ հատկապես Սպիտակի ժողովուրդը:

Աղոթում եմ նաև առ Աստված, որ աղետի գոտի արտահայտությունը կամաց-կամաց մեր բառապաշարից դուրս հանվի և կոչենք այս շրջանը վերակենդանության շրջան, վերածնման շրջան: Բնության արհավիրքները հաճախ բնության վրա այնպիսի չարիքներ կբերեն, որոնցով բնությունը կվնասվի: Գետն փոթորիկը, երաշտը, մարախը և բնության գեղեցկությունները և բնության գործունեականությունները կտանեն: Բայց կգա գարուն, կվերածնվի այդ բնությունը: Կյանքն էլ բնության հետ կարելի է նմանեցնել: Կգա մահ, կգա հիվանդություն, կգա աղետ զանազան տեսակի, բայց մարդը, ազգը, ժողովուրդը եղել է վերակենդանության համար և մենք այդ վերակենդանության շունչն է, որ ուզում ենք բերել ձեզ բոլորիդ: Եկել ենք ասելու ձեզի. մի՛ խնայեք ոչ մեկ ճիգ՝ ձեր ձեռքերով ձեր կյանքը վերակա-

ուցելու համար: Եթե դուք ձեր գերագույն չափի կարելիս աճեք, հավատացեք, Աստված ձեզ կօգնի: Երբ մարդ ինքը ոչինչ անի անձնապես, ո՛չ ոք իրեն կարող է օգնել, որովհետև Աստված անգամ տիեզերքի մեջ գործելու համար մարդն է ստեղծել, մարդը եղել է լծակը տիեզերքի, մարդը եղել է պատակը Աստծու ստեղծագործության: Թանկագին զավակներ Հայաստանյայց Եկեղեցու, եթե ճիշտ եք հասկանում քրիստոնեական մեր հավատքը, մեր հավատքը եղել է մահվան հաղթելու հավատք: Այդ հավատքն է գիտել մեր բոլոր նախնիներին: Այս Սպիտակի կամ աղետյալ գոտու աղետից շա՛տ-շա՛տ ավելի մեծ աղետներ է անցկացրել մեր ժողովուրդը իր պատմության ընթացքում:

Դուք, մանավանդ դպրոցականներ և երիտասարդներ, եթե ճանեք պատմությանը, պիտի տեսնեք, որ պատահեցան տարիներ, որ ավելի քան երկուս ու կես միլիոն ժողովուրդ իրենց տներից դուրս թափվեցին, արմատախիլ եղան ցեղասպանության ժամանակ: Եթե չգիտեք, գնացեք, ձեր ուսուցիչներին հարցրեք: Ես իմանում եմ, որովհետև իմ հայրը և իմ մայրը այդ աքսորի ժամանակ փրկվել են, իրենք տեսել են իրենց յոթ եղբայրների և քույրերի մահը: Փառք Աստծու, դուք ձեր հողերի վրա մնացիք, նրանք՝ վերապրողները, իրենց հողերից էլ դուրս շպրտվեցին: Ամեն մեկը մի երկիր ընկավ, անծանոթ լեզուներին և կյանքին. իրենց ունեցած ժառանգությունից ոչինչ կրցան տանիլ այնտեղ. ցնցոտիի նման հագուստներով գնացին, բայց էլի ապրեցին:

Ապրեցին, որովհետև հավատքով գործեցին, քրիստոնեական հավատքով ներշնչվեցին, կյանքին նայեցին: Ես գիտեմ այդ սերունդը մեր պատմության մեջ, անձամբ տեսել եմ այդ սերունդը՝ որբերի սերունդը: Դուք կարող եք երևակայել այդ տարիներին 130.000 որբ անհայր ու անմայր փոքրիկներ: Այն վանքում, որ ես ապրել եմ, մեծացել եմ Անթիլիաս կոչված վանքը Լիբանանում, 1400 որբեր են ապրել այդ փոքրիկ տարածության վրա, որ հետո վերածվեց կաթողիկոսարանի: Իրենց Հայրենիքից պոկված, արմատախիլ եղած տղաներ գնացին, չարքաշ աշխատեցին, քար կոտրտեցին, ճամփա շինեցին, կոշիկ կարեցին, կոշիկ ներկեցին, կոշիկ հնակարկատեցին, մինչև որ հասնեն արվեստի, գիտության, տեխնոլոգիայի և ուրիշ բարձր մակարդակների: Բայց նրանցից ոչ ոք չմուրաց, մուրացկան չեղավ: Արաբ մեծ եկեղեցականներ, արաբ աշխարհի մեծ ղեկավարներ ինձ անձամբ ասել են, որ հայերը երբ գնացին այնտեղ, նրանց համար, նրանց դիտելով, արաբները մի առակ են ստեղծել. «Մի՛ մուրար, նայի՛ր հայերին»: Ի՜նչ մեծ պատիվ է մեր ազգի համար:

Հետևաբար Սպիտակի թանկագին ժողովուրդ, արեք ձեր բարձրագույն ստիճանի կարելին, նայելով միշտ կյանքին, հույսով միշտ լեցուն և ոչ թե հուսահատությամբ, ողբով, հոգեկան ալեկոծությամբ: Մի լինեք այսպես կյանքից դժգոհ ժողովուրդ: Եղեք կյանքով խանդավառ ժողովուրդ: Ասեք մահվան. դու տարար այն, ինչ որ կարող էիր տանել, բայց մենք ապրում ենք կյանքի համար և պիտի ապրենք այնքան ատեն, որքան Աստված մեզ շունչ է տվել, ստեղծագործականորեն պիտի աշխատենք: Մենք պիտի հողին մեջ աշխատենք, պիտի աշխատենք բոլոր այն գործարանների մեջ, որոնք կամաց-կամաց, վերաշինվելու են, բայց անաշխատ, անգործ մարդը ինձի համար չի կարելի ամբողջականորեն հայ նկատել: Հայը եղել է գործի համար, այս երկրից կյանք հանելու համար:

Դուք էլ եղեք հոգով զինված, արի, հայու վայել գավակներ և այդպիսի կյանքով, կյանքին նայող և անմահությունը շահող ազգային անձեր Սպիտակի շրջանում: Թող Աստված ձեզ ուժ ներշնչի, հույս ներշնչի և աշխատանքի կամքը պրկի, որպեսզի երբ ուրիշները գան, ձեր ձեռքի «հունար»ները տեսնեն, դաշտերը քիչ մը ավելի կանաչցած, բերքը ավելի առատացած, տները մի քիչ ավելի շինված և ասեն. այս ժողովուրդը ոչնչից այս է արել, դուք էլ ձեր ձեռքերը միացրեք նրանց ձեռքերին, որովհետև նրանց ձեռքերը աշխատող ձեռքեր են և ոչ թե մուրացող: Այս թող լինի իմ առաջին պատգամը ձեզ բոլորիդ ուղղված, մանավանդ մեր այս սիրասուն փոքրիկ աղջիկներին և տղաներին, որոնք դպրոցում պետք է սովորեն կյանքի իմաստը: Իրենք երբ մեծանան, ասեն, թե մահը տարավ մեր նախորդներին, որքան մանուկներ դպրոցական զոհ գնացին, բայց էլի մենք կանք: Եվ այնքան ասեն, որ կանք, մենք Աստծուն, մեր Մայր Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և մեր Հայաստանի անկախ պետականությանը պիտի հավատարիմ գտնվենք և մասնակից դառնանք, որովհետև Աստված այս աղետից հետո մեզի մեկ բան պատիվ արեց, այն է՝ մեզի տվեց ազատ, անկախ, ինքնիշխան Հայկական պետություն: Անցնող 70 տարիներին ինչ որ կորցրինք իբրև ազգ մեր սեփական կամքի արտահայտության տեսակետից, այսօր դու վերաշահենք նոր կյանքով, Հայաստանի անկախ պետականության ամրացումով և զարգացումով, որովհետև պետությունը մենք ենք: Մեր բոլորի մասնակցությամբ է, որ կլինի պետությունը և Եկեղեցին, ինչ որ դուք կուզեք, որ նա լինի վասն փառացն Աստուծո, վասն շինության և պատվույն ազգիս Հայոց և վասն պայծառության Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Այցելության ամենավերջին հանգրվանը Սպիտակի թիթեղաշեն Սուրբ Հարություն եկեղեցին էր Հարության խորհրդանիշը և այդ Հարության ազդարարող ու համազանգող է Սուրբ Էջմիածինը իր ազգընտիր Գահակալով, որի ճշմարիտ և անաղարտ պատկերն ու նկարագրի էությունը Հոգու անսպառ հեղման շնորհով բացահայտել է անմահանուն Հովհան Մանդակունի Հայրապետը. «Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, եւ զՏէրն յաղբերացն Իսրայէլի, ահա սիրեցէք զեկեղեցիս, եւ սիրեցայք յեկեղեցւոյ, զթագաւորս քաղցրացոյց եկեղեցի, զգաւազանս ընտելացոյց, զգայլս զգառինս արար, զձեզ պայծառացոյց, զթշնամիս ճշմարտութեան ամաչեցոյց» Ամեն:

Սուրբ Հարություն եկեղեցում աղոթքից հետո Վեհափառն այցելեց և ծանոթացավ քաղաքում կառուցվող նոր եկեղեցու շինարարության աշխատանքներին, խրախուսեց, քաջալերեց և օրհնեց աշխատանքները իրականացնողներին, այցելեց և երկրաշարժի զոհերին ի հիշատակ կանգնեցված խաչքարի առջև աղոթք և խնդրանք բարձրացրեց առ Բարձրյալն Աստված, որպեսզի Տերը երկնային խորանների լույսերի մեջ պահի նրանց անմահ հոգին, ինչպես նաև ուժ և կորով պարգևի նրանց կյանքն ու գործը շարունակողներին:

Այս հոգեշունչ արարողությամբ էլ վեհափառ Հայրապետն ավարտեց այցելությունը Շիրակի թեմ և ուշ երեկոյան վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ այս անգամ արդեն ժողովրդի շունչը խառնելու Իջման Սուրբ Մեղանի խաչից ճաճանչող Լուսավորչի շնչին:

Վեհափառ Հայրապետի՝ Շիրակի թեմ կատարած Հովվապետական այցելությամբ ժողովուրդը հանդիպեց Աստվածաէջ Սուրբ Էջմիածնին, հանդի-

պեց Տիրոջ քարոզած քաջ և բարի հովվին, որ իր անձը ընծայաբերել է Գառան զոհաւեղանին որպես զոհ ընտիր և անարատ: Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունից Շիրակ աշխարհը շարժվեց... երկրաշարժ էր, սակայն ոչ փլուզման ու ավերի, այլ վերհառնումի և կյանքի, հոգիների և սրտերի միաձյուսման, հավատքի, հույսի և սիրո վերընձուղման, Տիրոջ հրեղեն համբույրից կրակե քարացած լեզուների նման ծաղկած Սուրբ Էջմիածնի հավիտենական հնոց-ձուլարանում, հոգիները ապականող ցանված որոմն ու փտանկալած ժանգը մաքրելու շարժ էր Առումածպաշտության և ինքնահաճությաւն լուսարձակի ներքո: Սղեսի յոթ տարվա մղձավանջից հետո Վեհափառի շուրթերով հնչեց Արարչի հրամանը. «Եղիցի լոյս» և վստահ ենք, պիտի չուշանա «Եւ եղև լոյս»-ը, որը տեսնելու և դրանով ապրելու ճշմարտությունը ի լուր ողջ հայության և աշխարհի ողողանջեց Մայրավանքի Լուսակաոույց Խորանից:

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱԼՍՏՅԱՆ,